



Բ Ա Գ Ի Ն

Զ. ՏԱՐԻ 1967 ՄԱՅԻՍ
digitised by A.R.A.R.@

ԹԻԻ 5

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارنين كارنيك قزائجيان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

բւգիւն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐԹԻՍՏԻ

ՎԱՐԻՋ ԽՄԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՄԱԳԻՐ
 Վ. ՍԱՍՊԵԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԴԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐԴ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
 Վ. ՇԵԱԿԱՆ
 Ժ. ՍԹԹԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԵՆ
 † ԵՒ ՊՅՏԱԶԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
G. SASSOUNI
 Rue Sélim Boustany, Beyrouth - Liban

Հեռագրային թիվ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Պ. ՍՆԱՊԵԱՆ
- ԵԴ. ՊՅՏԱԶԵԱՆ
- Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Շ. ՄԻՍԱԲԵԱՆ
- Ն. ՊԵՇԻԿՅԱՆԸՆԵԱՆ
- Մ. ԻՇԽԱՆ
- Ա. ԵՐԿԱԹ
- Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ
- Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ
- Ա. ՊՈՒՍԹԱՆԻ
- Յ. ԳԵՂԱՐԴ
- Տ. ՈՍԿՈՒՆԻ
- ԱՐՄԻՆԷ
- Ե. ԵՐԿԱԹ
- ԿՈՐԻԻՆ ՎԱՐԳԱՊԵՏ
- Ա. ՆՈՒՐԵԱՆ

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Զ. ՅԱՐԻ, ԹԻԻ Ե

ՄԱՅԻՍ 1967

ՊԵՐՏԻՐ

ԱԼՊԱԹՐՈՍԸ . . .

Նդուարդ Պոյանեանի առաջին գրքուածը լոյս ընծայող «Հայրենիք» ամսագիրը, 1935 Վեկտորիի իր միւնոյն թիւին մէջ, հրատարակութեան տուած է երիտասարդ բանաստեղծին մէկ ուրիշ գրքուածը՝ «Աշունի Ոսկեգոյն Մեղեդի» վերնագրով եւ Ալպաթրոս ծածկանունով:

Ծածկանունի այս ընտրութիւնը ինքնին յատկանշական է ու մեզի այնպէս կը թուի, թէ այդ իրողութիւնը աւելի ուժ կը պարունակէ, աւելի թելադրական է, քան պատանի բանաստեղծին գրած ամէնէն ուժեղ գրքուածը: Գրական այդ մկրտութիւնը կատարուած է համաշխարհային բանաստեղծութեան բուրմերէն նկատուող Շարլ Պոլլէրի հռչակաւոր գրքուածին ընթերցումով: Ալպաթրոս կը կոչուի այդ գրքուածը, ուր՝ փրանսացի «անիծեալ» բանաստեղծը անկրկնելի գեղեցկութեամբ ներկայացուցած է այդ թռչունը, իր արտաքին կողմերով եւ բնաւորութեան ձգտական պատկերացումներով:

Բնութեան անիմանալի խորհուրդը անճանաչող թռչունն է Ալպաթրոսը, փոքր մարմնով եւ լայնատարած թևերով անհամաչափ արարած մը, որ երկրին հետ շատ կապ չունի, երկրային սնունդներու շատ պէտք չունի, բաց ծովերու վրայ է միշտ, կը սառնոյն վեր, կը զարնուի ամպերուն, ով գիտէ, գուցէ կայծակներու որոտով թնդացնելու համար իր հոգիին պարապը, կը նետէ ինքզինք անդունդներու խաւարակաւ խորքին մէջ, տարօրինակ լոյսի մը թրթռացումէն կախարդուած գուցէ, երկինքն ի վեր կը ճախրէ վերստին, եւ այսպէս անվերջ, անվերջանալի սլացքի մը անճանաչող:

Ամպերու հետ եւ փութորիկներու վրայ սաւառնաքեւ շըրջագալող «փութորիկներու այս իշխանին» մեծութիւնը, շքեղութիւնն ու վեհութիւնը բնութագրելէ ետք, Պոստլէր կ'ընդգծէ երկրի վրայ ցուցաբերած անոր խեղճութիւնն ու անճարակութիւնը, եւ ապա՝ մեկնելով հաւանաբար իր սեփական փորձառութիւններէն ու ճակատագրէն, բանաստեղծին տիպարը կը համեմատէ անոր հետ, սփանչելի արդիւնքով մը: Վերջումս ինքնաշարժութիւնի վերածուեցաւ Թէֆէեանի կողմէ, որուն վերջին բառ-հակով՝

*Կը նմանի բանաստեղծն այս իշխանին ամպերու՝
Որ փութորիկին մէջ կ'երթայ եւ է նետին անտարբեր:
Աքսորական հողին վրայ՝ ուրկէ կ'ելլեն հալհուչներ,
Անոր թեւերն հակայի գինձ կ'արգիլեն քալելու:*

Կեանքի երկու երեսներուն հակադրութիւնը բանաստեղծական պատկերի վերածուած է հոս, փանդակուած է երազին ու իրականութեան յախտնական բախումը, իր թելադիր բոլոր կողմերով, լոյսով, մութով, վեհութեամբ, ռաբերգութեամբ:

Պոստլէրի բանաստեղծութեան հետ իր ունեցած առաջին հաղորդակցութիւնը կը թուի, թէ անկիւնադարձային եղաւ Պոյանեանի համար: Այս բիրտ, բոլորովին անբարեհնչիւն, քաշորովին չարքաշ ծածկանունին ընտրութիւնը ճակատագրական ապրումի մը, թերեւս գիտակցութեան մը պարտադրանքն է, Ալպարեսին հետ ունեցած ազգակցութեան մը սրտառուչ հաստատումը:

Կեանքի սեմին այս ճակատագրով ոտք դրաւ Պոյանեան, երազակար պատանին հետը ապրեցաւ միշտ եւ իր հոգին տեւաբար կապուած մնաց ամպերուն, փութորիկներուն, անհունին, տիեզերքին:

Անկողնը իր հայրենիքը նկատեց եւ շարունակ թափառեցաւ անոր տարածութիւններուն մէջ. թափառեցաւ տենդով, յափշտակութեամբ, լոյսի եւ նոր յղացումներու կիզիչ պապականով:

Ալպարեսին պէս «փութորիկներուն մեծամուսյլ ոգիին ամբողջատրուած» մարդը եղաւ. մեկնեցաւ «տակաւ աւելի բառն սաստկութեամբ տեղէ տեղ, աստղէ աստղ, անջրպետէ անջրպետ, ու փանդեց մշուշը, խաւարը, ռվիանոսը, փութորիկը». մէկուն շարժումը թրեւելով մեզի, մէկուն փափկութիւնը, միւսին լոյսը, ուժը, բնագանգական էութիւնը, վարկածը, բանաստեղծութիւնը, բայց երբ հողին վրայ իջաւ, սլացֆներու, սուգումներու, ցնորական ֆննարկումներու վարժ մարդը, Ալպարեսին պէս կրկին, ափսոսական զգաց ինքզինքն ու ապրեցաւ ափսոսական մարդու մը մօտ ենթադրելի բոլոր դառնութիւնները:

Եղ. Պոյանեան մեր նոր գրականութեան Ալպարեսն է:



ԵՂՈՒԱՐԴ ԼՊՅԱՅԵԱՆ

ՊՈՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԵՐ

Եղևարդ Պոյաճեան հայ դրականութեան մէջ ժողով գործած է բանաստեղծութեամբ: Ինքնակենսագրական համառօտ ուղեւորած է մը կը տեղեկանանք, որ գրել սկսած է շատ կանուխէն, բայց դրածները տպագրել տուած 1932-էն սկսեալ: Ա՛յդ ու յաջորդ տարին իր հրատարակութեան տուած կտորները մեղի տնտնօթ կը մնան: Հաւանաբար օրաթերթերու մէջ ըրած է իր սկիզբը՝ «Ազդակ», «Յուսարեք», կամ «Յառաջ» մէջ, որոնց հաւաքածոները, դժբախտաբար, հետո մնացին մեր հասողութեան ստեղծանքներէն: Իր ոտորագրութեան առաջին անգամ հանդիպած ենք 1935-ին, «Հայրենիք» ամսագրի մէջ, «Կապույտ Քերթուած» խորագրով բանաստեղծութեան մը տակ, երբ Պոյաճեան ուղիղ թան տարեկան էր:

Այդ թուականին յաջորդող տասնամեակին, մինչև իր «Աէր եւ Վիշտ» բանաստեղծական հատորին հրատարակութեան թուականը, մինչև 1945, «Հայրենիք» ամսագրի, «Նայիրի»-ի, «Ազդակ»-ի, «Երաթօրեակ»-ի եւ «Ակօս»-ի մէջ բանաստեղծ Պոյաճեանի ոտորագրութեամբ երեւցած են շուրջ երեսուն քերթուածներ: Առաջին տասնամեակի ամբողջ թերթին գումարը չեն կտգմեր հաւանաբար անոնք, բայց ի վիճակի են ամբողջական գաղափար մը տալու բանաստեղծին խառնրածքին, արտայայտչական միջոցներուն եւ իրագործումներուն մասին:

Առաջին այս բանաստեղծութիւնները գրուած են հայ բանաստեղծութեան ծանօթ աւանդութիւններուն ազդեցութեան տակ: Գրեթէ ամէնուն մէջ ընթերցողը կը հանդիպի ծանօթ դէմքերու ստուերներուն, որոնց ճշումին տակ գտուար կ'ըլլայ կազմել երիտասարդ բանաստեղծին սեփական դիմագիծը:

Իր դպրոցական ընկերները կը պատմեն, թէ գիւղէն քաղաք եկած շփոթահար պատանի մըն էր Պոյաճեան, աչքերը լայն բացած, իւրաքանչիւր երեւոյթի դիմաց ցնցուող, ճանչնալու, իւրացնելու, յարմարելու կիրքին ու հարկադրանքին տակ տուայտող անձ մը: Իրեն ծանօթ աշխարհին բոլորովին հակադիր միջավայրի մը յարմարելու պարտադիր այս ճիղը, անշուշտ ունեցաւ իր խոր տեղադրածը պատանիի հոգիին վրայ: Փորձեց ամէնուն պէս ըլլալ, չկրցաւ Ուղեց հակադիր, ձախողեցաւ: Մեղի կը թուի, թէ այս բախումը բեկում մը տալուց իր ներսը, կասկած մը՝ իր ուժերուն վրայ, եւ, ի վերջոյ, սկսաւ սիրել ամէնուն սիրածը, կրկնել՝ ամէնուն կրկնածը: Ու գրեց ամէնուն պէս՝ յանգով, չափով, ընդունուած կաղապարներուն մէջ ժտնելու փութկոտ անտպարտնքով մը:

Մէր, տրամութիւն, անձրեւ, մըշուշ երկու առաջին տասնամեակի իր բանաստեղծութիւններուն մէջ՝ Պոյաճեան կը փորձէ բոլոր ձեւերը, բանաստեղծութեան

տեղծական բուր և փայլուն լույս է հաղթում ինքնին, երկնքում թռչելով զինք, ուրիշին պէս կարենալ ըլլալու ապագայի մը կ'ուզէ տալ ինքնին: Այս նշանները հաստատող ցայտուն նմոյշ մը՝ Մուսա-Տաղի մէջ ծնած ու ձեռնարկէն սնցած Պոյա-նեանը կը գրէ:

Աշունն ասկից մեղեդի,
լացում է մի երազ իմ հագում,
Մի քաղաք հեռու քան իմ խոսք,
Հնազանդ յիշատակ արեւի:

Եօթը առնենք զերթումէ մը առ-նումէ և այս քառուկը եւ առանձին օրինակ մը չէ Պոյանեանի այդ օրերու դրականութեան մէջ: Քահի մը հասն արեւելահայերէնով գրուած այս ոտա-նաւորները:

Հաւատարմութիւն, թէ ամօթխա-ծութիւն մը կրնայ ըլլալ ստոր պատճա-ռը, հասցէ կորսնցնելու ձեւ մը: Բայց ասիկա ճիշդ պիտի չըլլար, որովհետեւ այդ ոտանաւորները գրուած են ծածկա-նունով: Միւս եւթագրութիւնն է ճիշ-դը: Ուրիշին ըրածը կարենալ ընելու մղումը: Մրցումի ելած է ուրիշին հետ: Որինակ, իր տարեկիցներէն մէկը թա-նաւորութիւն մը կը գրէ, յանկարծ կը տեսնէ, որ ինք եւս նոյն խորագրով կրող բան մը կը ստորագրէ: «Հայրե-նիք» ամսագրին մէջ մենք կը յիշենք դե-տի մը նուիրուած ստանաւոր մը, որուն ետեւէն, ընդամենը երկու թիւ ետք, կը հոսեցնէ իր «Գեղտ»ը, ձօնելով զայն ու-րաշիւնի հեղինակին: Այդ ըրջանին այդ-պէս է միշտ: Աղջիկները մեծարեցեան «գոյր» են իրեն համար, բնութիւնը տէր-եանական «մշուշ», ու ամբողջ կեանքը որբերու սերունդին պատկերացուցած պատկերը ունի՝ տխուր, թախծամբը-մունջ, սեւ:

Բայց այս բանաստեղծութիւնները ուրիշներուն հետքերը կրելու փա-տեղուն զովն ի վեր, կրկնելի ըլլա-լու իրենց տկարութիւններէն անկախ, բոլորովին անշահական յօրինումներ չեն:

Կարելի չէ անտարբեր անցնիլ անոնց մօ-տէն: Իրենց լեզուական առողջութեամբ, առանձին քառուկներու մէջ սեղմուած վիճակներուն արեւոտութեամբ ու պատ-կերներուն նորութեամբ՝ ակնկալութիւն-ներ կը ստեղծեն: Ընթերցողը իսկոյն կը զգայ, թէ բան մը կ'հալ Պոյանեանի տողերուն մէջ, տողերէն առաջ, տողե-րէն յետոյ: Կարելիութիւններ կ'ընդուն-մարէ ու կը զգայ մօտալուտ յորդումի մը նախանշանները: Այդ մէկուն կը սպա-սէ նաեւ ինք: Հաղիւ քանի մը քերթումով ստորագրած՝ պիտի գրէր:

Հաւատարիմ աստղի պէտ,
Որ կը շողայ միշտ բարի,
Ունենալ դուք կը կարծես,
Սիրտ, մեղեդի մը վայրի:

Յուսատու է մանաւանդ զերթումէ
«Գեղտի մը», որ օր մը անցաւ իր աչքե-րուն, հոգիին ու մտածումին մէջէն:

Որքան ծաղիկ, որքան բոյր,
որքան արեւ տփերուդ,
Կ'աղողէ քեզ լոյսն անհուն
ու կ'աղողես դուք մտքուդ,
Դուք աւշադրող լայն երակ,
անպատիւ մէջ դուք գութ,
Կու տառ դուք քեզ մտք տա մտք
հոգեբան գո՛րջ ու առատ:
Այդ դուք նորէն ինչպէս միշտ,
մեծաբաւալ ու խորունկ,
Կ'անցնիս անհուն քաղաք-քաղաք,
մտածումի մը մտք,
Որ ամէնուն կու տայ կեանք,
կու տայ տալիս եւ սնունդ,
Որ կ'իրթայ ե՛րբ մը ինչպէս
դէպի հեռուն անտեման:

...
Եւ ճակտիս գի՛րքն ալ այդպէս,
մտքն գետին վերքերաց,
Անյայտներուն ընդմէջէն, կը հնչէ
քամար ու խռով
Ու քաւալքիմ մէջ իր լայն,
կ'ընէ տփերն ամբողջ քաց,
Գուցէ վիշտով, տրամադրեամբ
կամ անտեման տեմանքով:

Ուրիշ ոտանաւորներու առանձին տողերու մէջ զղացուող յուսատու անհաղարտութեան, ինչպէս նաեւ այս իրական գեաին, այս մարդկայնացած գետին, անյայտ խորշերէ եկող եւ իր ափերուն հողին քանաստեղծութիւնը պայթեցնելով կրկին՝ զէպի անյայտութիւն թաւալող այս ճակատագրակից գետին մէջ՝ արդէն տեսանելի են Պոյանեանի խառնուածքին աւշայորդ կարելիութիւնները, որոնք, տասնամեակ մը անց, 1945-ին, «Աւր եւ Վիշնա» հատորին մէջ յայտնուեցան, բանաստեղծին սեփական դիմադիւծը կազմելու բացայայտ յատկանշիներով:

«Աւր եւ Վիշնա»ով եղուարդ Պոյանեան քանդեց բոլոր թուրքը, բանաստեղծական ծանօթ բոլոր կաղապարները ու ազատ յորձանք մը տուաւ իր ներքին ջորերուն: Անկողի ճամբաներու սխաւաւորն է հոս ու կ'երկրպագէ ինքնաբաւ խիւ, տարերայնին, ուժղին քաներու միայն: Իր էջերուն մէջ ինքն է այլեւս, ամբողջական անհատականութիւն մը, որ զինք նախորդող նուաճումներուն հետ կապը խղած՝ կ'ըսէ իր խօսքը, առանց իր ստիճաններուն կամ իրեն բան սորվեցրնողներուն միջամտութեան, առանց վարպետի մը օժանդակութեան:


Արուեստի պատմութեան մէջ հաղաւթի չէ այս երեւոյթը: Դիտուած է, որ օժտուածները Երկուր ատեն թափառած են հին ճամբաներու մէջ, կրկնած են դասականը, աւանդականը, մինչեւ իրենց օրերը երկարող բոլոր հին փորձերը եւ, բախտաւոր պահու մը, հպատակելով: Ներքին յայտնատեսութեան մը ցնորքին՝ թօթափած են հին լուծերը եւ հաստատած իրենց իշխանութիւնը: Այս օրէնքով իրենց ինքնութիւնը պարտադրող երկու ղէմքերը կ'ապրին այսօր եւ կը կոչուին Փիթագորաս եւ Փրէփլէր: Մեր դրականութեան մէջ Պոյանեան եկաւ նոյն ճամբով: Պարխափեց, արձագանդեց առանց մը, եւ օր մըն ալ, թերեւ առանց ստանալու, իր անցեալ բերքէն դժգոհ եւ սեփական խառնուածքին զրդումներուն ենթակայ՝ բացաւ իր ճամբան ու բարձ-

րացուց իր ձայնը՝ ուժեղ, արու, հնչեղ, երբեմն խալոտ, երբեմն անկիրթ, բայց բոլոր պարագաներուն իրը, անհրաժեշտը, իրեն համար, մեզի համար, իր անհատականութեան կազմութեան համար, մեր պապական սրտերուն հաշտոյն:

Դժբախտ են այն գրողները, որոնք իրենց նետած առաջին քայլերով կը մըտնեն ուրիշներու կաղապարներուն մէջ եւ կը վայնասն շրջանակները խորտակելու յեղափոխական տրամադրութիւններու գրեւորումներէն: Ասիկա գոհունակ մարդերու յատուկ կացութիւն մըն է, որ նոր տեսիլքներով խնթնալու անընդունակութիւն կը նշանակէ, կը նշանակէ լճացում ու մահ: Սր մը փայլած, օր մը յոյսեր ներշնչած եւ ապա խամբած դրողներուն պարագան բացատրելու համար ուրիշ տուեալներ կը պակսին: Ուժեղ խառնուածքի մը թերադրանքով՝ մարդոց կեանքը եւ իրերուն կեանքը, սրտին պաղտնիքները եւ տիեզերքին դաշտնիքները սերտելու բոլորն ու բռնակալ տեղէին փոխարէն՝ զիրքեր սերտած ու սերտողութեան պահերուն մէջ քարացած գրողներու դառնակարգին կը պատկանին այս վերջինները, որոնք հանդիպելի են բոլոր գրականութիւններուն մէջ:

Պիտի չդժուարանայինք այդ դժբախտ բանաստեղծներէն մէկը հաշուել Պոյանեանը, եթէ ամէնուն պէս փորձէր առաջին իր բանաստեղծութիւնները մէկտեղել եւ հատորով մը ներկայացնել ընթերցողին: Բայց հոս եւս ուրիշներէն տարբեր վերաբերում մը ցուցաբերեց: Հանրութեան հատորով ներկայանալու ատեն, թերթներուն մէջ տպուածները թերթերուն մէջ ձգեց, օրուան ճաշակներուն ու լոբանումներուն հետ ներդաշնակ ինկող անոնց անտիպ նմանակները դարակնեւուն մէջ ձգեց ու հրապարակ հանեց անսովորներուն շարքը, որ, ինչպէս ծանօթ է, իր տարերային սէրէն բխեցաւ եւ կազմեց իր սաստկազոյն վիշապը:

1945-ը մեզմէ հեռու թուական մը չէ ու ամէն ոք կը ճաննայ այդ օրերուն հրապարակ լըած դէմքերը կամ ծանօթ դէմքերուն հրապարակ նետած հատորները:



1930-31 Պէյրուք: Յակոբ Մամնեան, Մ. Իշխան,
Սուրեն Տէր Ալեքսանեան, Հրանդ Մուրատեան եւ Եղ. Պոյանեան

Յանկի կազմութեան պարագային, անմիջապէս պիտի նկատենք, որ Պոյանեանի «Սէր եւ Վիշտ»ը հասարակաց ոչինչ ունի ժամանակակից հրատարակութիւններուն հետ: Բացարձակ արժէքին քննութիւնը ատկախելով՝ պիտի ըսենք, որ երեսոյթ մըն էր այդ գրքոյի մեր մէջ եւ իր յղացումներուն նորութեամբ ու արտայայտչական յանդնութիւններով՝ բացառիկ խառնուածքի մը լուրը կ'աւետէր:

Այդ շրջանին, Սփիւռքի մեր գրականութիւնը իբրեւ թեմա ունի Հայրենիքի կարօտը, որբութեան վիշտը, զբրկանքներու անդրադարձ ապրումները եւ անհատական ուրիշ յոյզեր: Հասարակաց միջոցաւ է ատիկա, որուն շրջանակները քանդելու առաջին խիզախումը կատարեց ինք:

Ոչ հայրենիք կայ «Սէր եւ Վիշտ»ին մէջ, ոչ ազգ, ոչ ընկերութիւն եւ ոչ ալ ընթացիկ գրկանքներէ առաջացած ճիշդ:

Սէրն է հասարակ առանցքային նիւթը եւ սրտին ճամբաներուն կարօտներ կան, սպասման երկարատեւ ժամերը կան, յուսարեկման պահեր կան, որոնց ընթացքին կը ծնի վիշտը ու կը խառնէ իր լուրը միւսին անապական լոյսին:

Կը գրէ անխիստական թափով ու մտահոգ չէ ընթերցողին հաւանական հակադրեցութիւններով: Վերադարձած է ինքն իրեն, ու դարձած է լեռնային հովերուն հետ ապրած, ծովուն ծովային խռովներուն ծաղաւի, Աստուծոյ հետ եւ աստուածային բաներու հետ խառնուածք լինած «Մրրկակիթ», խառնադաշտ ու մալեռանգ երիտասարդը՝ ու կ'ըսէ իր խօսքը:

Աստղային, աստղածաւալ սէրերու պատարագ է «Սէր եւ Վիշտ»ը, խորունկ կսկիծ, փոթորիկ ու քարբարոսութիւն. յախուռն յղացումներու ընդհանուր մըթնոլորտին մէջ՝ տարօրինակ աղօթք է ան ու տարօրինակ յափշտակութիւն, տարօ-

րինակ ծողիկ, տարօրինակ գոյն, փափուկութիւն, խորհուրդ:

«Աէր եւ Վիշտախ հեղինակէն տարբեր ժողորակէ մը եկած ըլլալու տպաւորութիւնը կ'առնէ ընթերցողը, առնուազն տարբեր ժողորակի մը կարօտով տոշորող հակը կը տեսնէ հոն, դէպի անհունը մեկնելու եւ անոր հոգիները քննարկելու ճակատագրական կամքի մը ենթակայ մարդը:

Դէպի հոն պիտի դիմէ միշտ, իբր տարբերը կազմած է՝

Պատմութեան վարար ու բորբ

չբռնան,

Ամառ եղանակներու համագրաւ,

խոր ու զմայլագեղ

Բանաստեղծութեան մը գիրքը:

«Դեռ այն տարիքին», պիտի ըսէ ուրիշ տեղ մը՝

Անդամագրանցոյ Ծածուկ ու Մեծ

Բանին, —

Բանաստեղծութեան —,

Յաճախելով անհատում երկնաւորներու Շեղ հաւաքատեղին:

Այս յաճախանքները, ծածուկ ու մեծ բաները իմանալու իզոյրը պատահական վիճակներ չեն Պոյանահանի ներաշխարհին մէջ, մնայուն աշխոյժութիւններ են: Նուիրուած է վերը բանեւոր տանելու ու աստուածացնելու տենդի մը, երկինքէն մասեր բերելու ու կեանքը քաղցրացնելու առաքելութեան: Իր ուժերը կը դաւանանք իրեն հոս, ասոր համար լուսարագձ մութացկանը կ'ըլլայ եւ՝

Բախտագիներէն, լոյսէն, աստուածներէն

Ան կը մտայ իր տարաբաշ

Ու խոր էութեան

Բո՛ւմ, Անբո՛ւմ, անվերածելի

խկանկարը...

Իր էութեան իսկանկարը կամ ուրիշ էութիւններու տեսիլքը այսպէս որոնումներու պիտի մղեն դէնք. պիտի երթայ, քննէ, հարցապնդէ՝ սղինքը, մեր իրականութենէն որեւէ ձեւով անջատ-

ւող եւ երկնաւորներուն այցելութիւն տուած ամէնէն էակ, նոյն հետաքրքրութեամբ, կարօտակէզ նոյն սրտով: Պիտի կանգնի մինչեւ իսկ ի քուն եղող սիրելիի մը դիմաց եւ անձկութեամբ սպասէ անոր վարձումներն եւ աւետելիք աւարին:

Դուք ի՞նչ պիտի բերես վար
Երկնային մեծ բարձրագոյնը:

Շեղ աւարէն,

Ըսէ՛, աստու պիտի ըլլայ,

դուք ի՞նչ պիտի բերես:

Աչքերը սեւեռած այդ ճաւառին՝ կ'այլակերպի յաճախ եւ կ'օրհնէրգէ զայն կարելի դարձնող առաջին միջոցը՝ երազը, որ հազար կարօտ, հազար բերկրանք, հոգիի հազար սնունդ հայթայթող կենսատու ուժը պիտի ըլլայ, պիտի ըլլայ դործոն՝ երազը, պիտի տաղանայի ու երգ դառնայ ու իբրեւ սէր պիտի ծաւալի հոգիներուն ու շրջապատին մէջ: Երազը աւել է Պոյանահանի գրականութեան մէջ, երգը՝ դործունէութիւն, ու սէրը՝ հոգիներուն ու տարբերուն խորքը թափանցող ջաշ, հազարգանկութիւն:

«Աէր եւ Վիշտախ հրատարակութեան գրեթէ անմիջապէս ետք, Եղ. Պոյանահան ձգեց դիւղի իր միջավայրը եւ կրկին քաղաք հաստատուեցաւ: Այս նոր իրականութեան մէջ՝ իր գրչին տակ առաջին տեղը կը զրաւէ արձակագիրը. քաջ մը աւելի առօրեային խառնուելով՝ դուրս կու գայ անխառն գրականութեան սահմաններէն եւ կը մասնէ հրատարակագրութեան մէջ, Հայնսթեյնը յառած գրական, կրթական, գաղափարական, քաղաքական մարդերուն, հայրենիք, ազգ, մարդկութիւն, հող, արեւոտ, ճշմարտութիւն հասկացողութիւններէն մղուած՝ կը նետուի պայքարի թուրուհին մէջ, երբեմն իր գայրոյթը պոռթկալով, երբեմն հիացումը, խոհը, առաջարկը: Այս շրջանը կը տեսնէ ուղիղ մէկուկէս տասնամեակ եւ Պոյանահան՝ երրորդ անգամ իբրեւ բանաստեղծ:

տեղծ կը ներկայանայ ընթերցողին, «ԲԱՅԻՆ»-ի էջերէն, վաթսուսական թը-
ւականներէն հաջ:

Ընդհանրապէս լայն կտաւի վրայ
զրուած շուրջ 15 կտորներ են «Բազին»-ի
լոյս ընծայածները եւ մաս կը կազմեն
«Ինքն» խորագրով հրատարակելի ըստ-
ւար հատորի մը: Եւեւեւ մարզն է,
մարդկային տիպարներու ամբողջութիւ-
նը:

Ըսել կ'ուզենք, այս շարքը անձի մը
վկայութիւնը բերող բանաստեղծական
անխառն վիճակներու սոսկական յայտ-
նութիւնը չէ, հոս այլեւս բանաստեղ-
ծութեան հերոսը գէպի Անկազմ, գէպի
Անհունը, գէպի անծանօթ հորեղանները
թեւածող յախուռն բանաստեղծը չէ մի-
այն, այլ այդ բաներուն հետագոտու-
թեան նախասահմանուած, բայց երկրի
վրայ ապրող եւ երկրային բարքերու
ճշդումներուն ենթակա մարդն է, իր
ամբողջական կենսագրութեամբ:

Կը թուի, թէ քիչ առաջ ուրուագծ-
ւած Պոյաճեանի եռուն առօրեան մեծա-
պէս անդրադարձած է իր հոգիին: Խո-
րապէս մտահոգ է հիմա: «Այլք եւ վիշ-
տ»-ով սահմանուած կոչումէն հետեւ կը
դռնէ մարդը, մանր, մութ, բո՛ւթ, ու
պայքարի կ'իլլէ «ծուռ ու բարբոս ամէն
բանի» գէժ, «ընդդէմ մութիւն, տգիտու-
քեան ու քոնքութեան»: Ու հղծուած հա-
զար գեղեցկութիւններ թուելով, նկա-
րագիր փոխած հազար սրբութիւններու
վրայ ողբալով, հաշտութեան, լնացու-
մի, անտարբերութեան նոյնքան վտան-
գաւոր ունակութիւնները սեւագրելով՝
կ'որդեգրէ «Ոչ»-ի զայրալից փոխադա-
յութիւն մը:

«Ոչ» ըսելու՝
Դատավճիռ, որ վճիռ չէ,
Աղօթքներու, որ աղօթք չեն,
Նրդերու, որ վամիլ են միայն,
յամգ են միայն,
Իմաստ ունայն:

«Ոչ» ըսելու մըրիկի պէս սրբազ տառազ,
.

«Ոչ» ըսելու դժուիքի պէս երակիգոգ՝
Աւէն սիրոյ, որ չի գոհուիր,
Աւէն խղի, որ չի գարծեր,
Աւէն ուժի, որ չէ ուղղուած քանքու
գէժ ցուրտ ու հսկայ,
Որ քոնքեան սեւ քառնեցէ է միշտ
ամիսայ:

Այս տրամադրութիւնը ձեւակերպը-
ւած է շարքին մաս կազմող և «Գիր բա-
նաստեղծի» անունը կրող բերթուածի մը
մէջ, զոր լոյս ընծայեց «Բազին»-ի 1962
Ապրիլի թիւով: Եւ շարք տարուան Մեկ-
տեմբերին լոյս ընծայած իր «Վայր ան-
ծանօթ, քան անծանօթ» քերթուածով,
Պոյաճեան կրկին կ'անդրադառնայ ու-
ղեղրած իր այդ բուն կեցուածքին: Կը
դռնէ, որ խոնարհաճայն արտասանուած
«Այս» կործանարար հղած է մարդուն
համար, մարդը չեղած է իր բուն կոչու-
մէն եւ ըրած է զայն ստորուկ, տգէտ,
սոփոյն, ունայն: Ըստ Պոյաճեանի մար-
դը պիտի լըլտար այսպէս, պիտի լըլտար
ազատ, խորագէտ, լուսապայծառ, ի-
մասունն, եթէ անկա ունկնդրէր իր
հոգիին ըսուածը:

Տեղէ ամայտ, տեղէ խորին,
Աստուածակայք տեղէ ներքին՝

«Ոչ» ըսել միշտ,
Մարդու կեանքին մութ պարտադրող
Աւէն, ամէն խաւար ուժի:

«Ոչ»-ի այս փոխադրութիւնը, ի
հարկէ, քմահաճ կերպ մը չէ, այլ կը
բխի մարդը գերագոյն կոչումի մը սահ-
մանող խորունկ համոզումէ մը, իրմէ
կ'իմանաք, որ յոռի բարքերը զարհու-
րելի համեմատութիւններու հասած են.
սուտը, կեղծիքը, խարդախութիւնները,
բռնութիւնները դաշնակցած են իրարու
հետ եւ դժոխքի մը վերածած կեան-
քը: Արարիչին պատկերով ստեղծուած
եւ արարչագործելու նոյնքան խորհրդա-
ւոր պայմաններով օժտուած քաջառիկ
ուժն է բանաստեղծին մտքին մէջ մարդը
եւ իր ճակատագիրը իրագործելու հա-

մար իրեն տրուած այս թանկ առիթը՝
կեանքը, պէտք չէ դուր տնցնի, որով-
հետեւ

Եկած եմք հոս մեմբ իբրեւ մարդ,
կարճ կեանքի մէջ, հոգաբանի վրայ
փխրում:

Աստուածափորձ կատարելու:
Մահը գրքի պէս բանալու,
ու կալալու, աւ սելալու:
Եկած եմք հոս պետեմ խորումի
մշմարտութեամբ՝
Ապատութիւն, յաւերժութիւն

ստեղծելու:

Պատգամքն տիեզերքին՝
Ամմահութեան խոր Բնութիւն
պատրաստելու:

Այս կոչումով ու համոզումով կալ-
մեց ան իր շափանիչը եւ անկէ յետոյ
մարդոց նայեցաւ անոր տրամադրութեան
համաձայն, սիրեց ու տալց այդ շափա-
նիչին համաձայն:

«Բազին»ի լոյս ընծայած Պօյաճեանի
քերթուածներուն շարքին՝ կա՛ն կտոր-
ներ, որոնց մէջ կատարուած ընդհանրա-
ցումները, ծանօթ փորձառութիւններու
եւ մտածումներու տպաւորութիւնը կը
զործեն առաջին ակնարկով: Անոնցմէ
մէկն է, օրինակ, «Կիճը» խորագրուած
կտորը:

Իր մէկ տեսչին դրախտը զոհած
աստուածաշնչական Եւայէն սկսեալ մին-
չեւ մեծ բախումներու դուռ բացող Տրո-
վադացիներու Հեյիէնէն, մարդարէններու
զլուխը սովորական նուէրի մը պէս ստա-
ցող ցնորապար Սալոմէէն մինչեւ իր ե-
րազին տիրելու համար բանակնելը բա-
նակներու զարնող սիրտառաւ Շամիրամը,
աստուածներու մայր եղող Հեղահամբը
Մարիամէն մինչեւ աստուածներուն սիր-
տը խոսոված խոսկարար Մազթաղենա-
ցին, ու տակաւին մինչեւ վերջին պալա-
տին ու վերջին խրճիթին վերջին Եւան,
կինը ծանօթ է մարդոց, ամէն խաւի
մարդոց, ամէնո՛ւն, ու Պօյաճեանի ներ-
կայացուցած կինը տարբեր չէ կնոջ մա-
սին տիրող կարծիքներէն: Այսուհանդերձ

քերթուածը յաջողած է նուաճել առան-
ձին հմայք մը:

Արարչութեան լաւագոյն բանաստեղ-
ծութիւններուն մէջէն ընտրուած, արեւ-
ին, աստղերուն, լուսնին, կապոյտնե-
րուն ու ծաղիկներուն մէջէն անջատ-
ւած, այլ անոնց չողը, տրոփը, գոյնը,
րոյրը, խորհուրդը իր մէջ համադրող
էա՛կն է ան, որ վիճերուն ամէնէն խո-
րունկը կ'ըլլայ մէրթ ու իր վիճերուն
մէջ կը նստէ մարդը, զո՛րիք կ'ըլլայ ու
իր զո՛րթքին թէ՛ կրակներուն կեր կը
դարձնէ զայն, նախնորհի զբախտը
կ'ըլլայ ու դրոխտային երանութեան մը
կը վերածէ կեանքը, եւ այսպէս, բոլոր
պարզաներուն ու բոլոր ճամբաներուն
վրայ ետեւէն կը քաշէ իր ձգողութեան
տնւորար ենթակայ հոգին, մղելով զայն
փոխ առ փոխ ոճիւրի ու վեհութեան,
բարբարոսութեան ու բանաստեղծու-
թեան, նուաստացումներու եւ աստուա-
ծացման, պատճառ դառնալով ի վերջոյ
զրական ու քացտական խոռվքներու ե-
ռուն գեղեցկութեան, սեւ ու պայծառ
զգայնութիւններու հարուստ յայտնակեր-
պումի մը: Պօյաճեանի քերթուածէն մէկ-
տեղուած քանի մը ասոյթներով՝

Կիճն է դժոխքը, կիճն է կրակը,
Կիճն է սեւ ցալտը, կիճն է գէշ բանտը,
Ամբողջ կարտը,
Մայրագոյն անվը:

.....
Կիճը...

Հիմ ասութիւն, հիմ մոգութիւն,
Հեքիաքներու հիմ քովութիւն:

.....

Երգ սկիզբի աւ վախճանի,
Դեղեցկութեան ու կործանման
Տարօրինակ մախապատճառ:

.....

Կիճն է խորհուրդը,
Այր մարդու կեանքին դիմաց շողացող
Խեղ արարչութեան այդ մեծ գմբախտը,
Քաղցրագոյն քիւր, ու շփեղառող իմաս-
տուն բառը:

Մէջըքրուած այս պատկերներուն ճշմարտութիւնը, թարմութիւնը, վայելչութիւնն ու գրական միւս արժանիքները կշռելու հարկ չկայ, կ'ուզէինք ընդգծել միայն, որ մտայն ճամբաներէն, վիճերէն ու դժուարներէն իր հերոսունհին անցընող եւ զայն փարթամ դերի մը մէջ զնոց Պոյանեանի այս ոճը՝ կը բխի ընդհանուր կեցողութիւն մը: Այս օրինակով նայած է ան կեանքի երեւոյթներուն եւ յոյսը լըքած չէ գինք:

Վերջին շարքի այս բանաստեղծութիւնները ունին արդէն հասարակաց միջավայր մը՝ իրական կեանքը, եւ անկէ բերուած եւ Պոյանեանի կ'ընթերցեն մէջ շնորհ հերոսները վէպի մը տպաւորութիւնը կը մղեն մերթ: Հոն եւ մեծ խնոփքներու, ճակատագրական կացութիւններու բոլոր մեծ ներկայացուցիչները՝ բանաստեղծը, կինը, Վարդը նորէն, եւ բնական է, հոն պիտի ըլլար նաեւ ու հոն է այդ ամէնուն չափ մտահոգիչ, խռովիչ միւս տիպարը, միւս աչքը՝ նորածին մանուկը:

Այնքան դաժան բաներ տեսած, հին, մաշած, բոքրոտած իրականութիւններու անթիւ անդամներ բախած, այլ մաքրութեան, արդարութեան, նոր խօսքի, մեծ սիրոյ, խոր յղացումներու կարօտով տոշորող մարդը, որ բանաստեղծ Պոյանեանը եղաւ, նորածին մանուկի մը առաջին ճիշդին ի լուր՝ վերանորոգեց իր տաղնապը եւ այս անգամ իր բոլոր փորձառութիւններն ու տենչանքները ի մի բերելով՝ կազմեց «Մարդկութեան խօսք» նորածինը:

Պէտքէն մը ծաւալը ունի քերթըւածը, ուր՝ բանաստեղծը առաւելագոյն սատուութեամբ կ'ապրի քայքայիչ ուժերուն մղձաւանջը: «Անդիի գոյնը վրան», «Աստուծոյ բոյլը վրան», չունչը վրան», «Մարդագոյնք սա աշխարհին» մէջ եկած մանուկը, առաջին վայրկեանէն իսկ ենթակայ է աշխարհային վտանգներու: Պիտի եղծանեն իր գոյնը, պիտի ջնջեն վրայէն բոյլը: Վախ կայ, որ իր կարգին, մանուկը ըլլայ ուրիշներուն

պէս, «մոռնայ բարբառն այն աշխարհին, նախակայքին, ուրիշ, ուրիշ այն գոյութեան» եւ ամէնուն պէս հաց ճշայ, ճշայ սէր, ցաւ, հող եւ ապա՝ անվերջ դէրք մուրոյ, փառք, համակրութիւն, իշխանութիւն, միտք, քերչ մը դպրոց, վկայական, օրեր դիւրին, օրեր առատ, օրեր անվիշտ:

«Դեռ եւայլն, դեռ եւայլն, դեռ եւայլն»:

Բայց պարզապէս հրաշալի է այս սոփոքական, անգոյն, բանաստեղծութեան մէջ երբեք մտաք չգործած եւայլններու շարքը, որ ազատութիւններ ծածկող իր հին շարժարանքէն դուրս կուգայ ահաւասիկ, նենգութիւններ ու երկշոտութիւններ վարագուրող իր դաբաւոր գիմակը վար կ'առնէ եւ պարզապէս իր ձեւին մէջ՝ կը ստանայ թելադրական ընդմտութիւն խորք մը, երաժշտական կառուց մը, նա' քողարկութիւն մը:

«Դեռ եւայլն, դեռ եւայլն, դեռ եւայլն»:

Բանաստեղծին մտաւախութեան մէջ՝ զող աշխարհին մէջ պղտիկ գող մը կ'առնէ ինչպէս դեռ, պղտիկ մտաբացիկ մը՝ մտաբացիկներու բազմութեան մէջ, հին խառնակիչներու կարգին՝ «նորածնան խառնակիչ» մը, քառսին վրայ՝ պղտիկ քառս մը, ամպակոյտերու քով՝ պղտիկ ամպ մը, բայց տոռնց համար պէտք չկար գայտը, աստնց համար արդէն միշտ գործիչ կայ հոս, ուրիշ կարօտ մը կը տանջէ մարդկութիւնը, կը տանջուի զյոյսի համար, սիրոյ համար, վերին խոհի ու արարչի համար: «Լաւ բան կ'ուզենք, մեր պապակն է»:

Եթէ իբրեւ սկիզբ եկար
նոր մարդկութեան,
ճիշդ խօսքերու, ճիշդ արուեստի,
ճիշդ ժպիտի,
Ազատութեան ազա'տ ձայնի,
Խաղաղութեան խաղաղ խօսքի,
Բարի եկար, դուք բի'ւր բարի,
Փոքրիկ եղբայր, ամուշ եղբայր,
Դուք անմառք, խաղր եղբայր...:

Հասնող մանուկէն առաջ՝ ուրիշներ
դէր ունեցած են հարկաւ կազմուած այս
շափանիւնին ու պապակին մէջ:

Ընթերցողին ծանօթ չէ, ու անտիպ-
ներուն մասին ճիշդ չէ խօսք բանալ, աշ-
տուհանդերձ, մտերիմ կապերու շնորհիւ
ձեռք բերուած ծանօթութեան մը վրայ
կոթնելով՝ պզտիկ շեղում մը պիտի ը-
նենք ու ըսենք, որ մարդը պատէ պատ,
անդունդէ անդունդ զարնող, անոր սեւ
կողմերը մեծաքանակ սեւազրութեան մը
ենթարկած Պօյանեանը բացարձակ յոռե-
տեւը չէ, մուշկ երեւոյթներով ճաշակ
սիրւաներու հետմանքին անձնատուր
խառնումներ չէ ինք, աչքերն ու հոգին
չէ փակած աշխարհին դէմ, ու աշխարհը
լեցնողները ցուրտ Հերովդէսներ չեն մի-
այն, սեւ Յուդա չեն, կայէն չեն ամէնքը,
քաղի, մատնիչ, քայքայիչներ չեն միշտ,
նոյն շախարհին մէջէն անցած էին եւ իր
օրով բոլորովին բացակայ չէին միւս-
ները, ու ինք կը պաշտէր միւսները, իր
արարչագործութեամբ մարմին առած
մանուկին օրինակով մեծցած մեծերը՝
մարգարէն, բանաստեղծը, գիտունը, յե-
ղափոխականը, միջոցը խորաշարժած ու
տարածութեան տարածութիւններուն մէջ
իշխանաբար թեւածող մեծախռով ախ-
պարները, որոնք մէկ մէկ աստուածներու
ստեղծանքներուն մէջ խիղախեցին եւ Եպա-
կինոնքին վրայ տարածեցին իրենց
աստուածային կողմերը, բաշխուող, կա-
ռուցանող կարողութիւնները, բոլորա-
տութեան եւ աղօթքի հզօր անանդու-
թիւններ կտակելով տառապած մարդ-
կութեան:

Շարքին վերջին ու ընդարձակագոյն
բանաստեղծութեան մէջ, որուն անունով
ինքուած է հրատարակելի հատորին ա-
նունը եւ կը կոչուի «ԴՈՒՆ», զաղափա-
րական, լեզուական, ժողովական հան-
դէսի մը մէջ այս տիպարը կը ներկա-
յացնէ Պօյանեան, յանդերձ չքեղ ար-
դիւնքի մը:

Ընկերային տիպարներ ու հարցեր
ներկայացնելու պարագային, սակայն,
որքան ալ լահեկան ըլլան իր փորձառու-
թիւնները եւ փորձ գրողի ընդհանրա-

ցումները, իր անձէն որքան ալ բան դը-
րած ըլլայ անոնց խորքը, այնուհան-
դերձ, ինչպէս մատնանշեցինք «ԱՅՆ ԵՒ
ՎԻՂՆՆԻՆ» առիթով, Պօյանեանի բանաս-
տեղծութեան մայր երակը կը մնայ մաք-
րու իր սեփական տաղնապը: Ինչպիսի-
ցական շեշտ հակում մը ունի իր խառ-
նուածքը, հոսիկներն ու ինք տրուած են
իրարու: Եւ հոգին ենթարկած «վայր
անծանօթ, բամ անծանօթ» խուզարկելու
հզօր կիրքին՝ կը տուայտի ու կը հրճե-
րի, կ'արիւնի ու կը ծաղկի: Անդիմադրե-
լի տենդի մը մղումով՝ սահմանած է
ինքզինք՝

Գնդեցկութեամ ու անանցի խոր արձանմ,
Հմայիչի ձկնորսութեամ:

Հոգիներս, ու ձայներս, ու ձեւերս,
Նաեւ լոյսի, նաեւ մութի ու կրակի
Համապայման:

Իր խորագոյն անձը, անձին անա-
պական էութեան բաղկացուցիչ տարրե-
րը այդ բոլոր կարօտներն են, որոնց ցը-
նորքին նուիրուած՝ կը վերանայ, կ'ը-
թայ հեռուն, կը պատի, եւ արտի միւս-
նոյն ջերմութեամբ կը հաղորդէ իր ան-
կումներուն յուզումը:

Շրջած եմ ցարդ քառսիղ մէջ,

Ո՛ր Բացարձակ,

Ձկնայուած լոյսի նման,

Զարսասանուած քառի նման,

Երգի նման դեռ չերգուած:

Ձկնայուած այս լոյսը շուայ է սա-
կայն, չարտասանուած բառը աւելի քա-
ժականութիւն կը բովանդակէ հաւանա-
բար, քան արտասանուածներէն ամէնէն
հզօրը, ու չերգուած երգին հունչը ար-
դէն ու քաղցրօրէն լսելի է:

Քորհուրդի մը վրայ բացուելու
տաղնապով դողացող այս լոյսերը, բա-
ռերն ու երգերը մինչեւ վերջ իղձ մնա-
ցին Պօյանեանի սրտին, մինչեւ վերջ
տանջեցին զինք: Մահէն տարի մը ա-
ռաջ, ուրիշ բանաստեղծութեան մը մէջ
դարձեալ պիտի քնարերգէր իր արգա-
ւանդ դժգոհութիւնը:

Գաղտնի գիրքի մը համար,
 Զագող, հաղորդող՝
 Աստուծա՛ւ եւ մարդէն ամէն ինչ,
 Տանքեցի՛, այրեցի՛,
 Մէջս իմ յուսանաւո մեղացի՛
 Մեքոպի ուղեղն՝ք անհամար.
 Ներսս իմ ամմարտոյ, անկեզու,
 Անվարպետ միշտ մնաց,
 Մահացա՛ւ, մահացա՛ւ, մահացա՛ւ,
 Գերագոյն գիր ուզող
 Թարգմանի՛չն իմ սրտի...

«Գիրքեր անծանօթ» խորագրուած այս
 քերթուածով չաւարտեցաւ ինքզինք ամ-
 բողջովին շայտնակերպած ժարդու իր
 տանջալից տրտունջը: Աւելցնուածնե-
 րով, խորհուրդներով, արեղակներով ու
 դժոխքներով խաչաձեւուած ու անոնց
 տակ խաչուած անդաման հրտին հա-
 մար՝ կազմեց ուրիշ «Գիրքեր անծանօթ»
 մը, ու այս անգամ Աստուծոյ ըսաւ իր
 աշեկոծ տիրութեան բուն պատճառը.

Ու ես լեցուեցայ, —
 Աստուած իմ, ամուլ —
 Ինձմէ իսկ ծածուկ,
 Քեզմէ իսկ ծածուկ,
 Բացակամերաւ խորումիկ տիրութեամբ

Այս երկրի վրայ
 Ես բուն բաներում բացակամ եղայ
 ու սէրը եղայ.
 Անհումը կէտին մէջ գնտեղելու
 յեղաշրջական գուր ձիւրը եղայ.
 Կաթիլ մը ես ջուր՝
 Անվերջ վերջնագիր յգեցի ծովին,
 եւ զվիւններում,
 Աշխարհը ծածկող, Դուք լաւ կը յիշես,
 մեծ Զրեղեղին:
 Այս երկրի վրայ, ես մեծ խօսքերու
 մեծ կալուածատէր՝
 Անհում խօսքերու չարագրուած
 մտաւոր եղայ,
 Այնքան ապրումի, այնքան տխրութեան,
 այնքան տառապի,
 Ինձմէ միշտ փախչող իմ վէ՛պըս եղայ...

Ծածուկ բաներու եւ բանաստեղծու-
 թեան անդամագրուելն ասդին, ամբողջ
 երեսո՛ւն ասորի, բացականերու ունկըն-
 դիրը եւ զրուցակիցը եղաւ Պոյաճեան եւ
 զանոնք առարկայացնելու իր կարելիու-
 թիւններէն դժգոհ՝ տաճի մը վերածեց
 իր բովանդակ կեանքը: Ատոր համար
 անթիւ Թշնամիներ ունեցաւ, Թշնամա-
 ցաւ Աստուծոյ հետ, ճակատագրին հետ,
 ուղիներուն հետ, ամէնէն առաջ ինքզինք
 Թշնամի համարեց իր բո՛ւն անձին՝

Ես ռսոյս՝ երակներուս, արիւմիս.
 ռսկորներուս ու ծուծիս
 ու պայմաններուս,
 Վասնզի բոլոր ատմեմ պարսպած էիմ
 Անհումն ի վեր մեռուելու իմ
 ամեմառնակալի մոլեռաճալիւս:

«Աէր եւ Վիշտ» քերթուածներէն
 մէկուն մէջ ասորագրուած է իր ներքին
 կենսագրութեան այս թունդ բաժինը,
 որ տեւական վտանգի մը պէս պատեցաւ
 հետը իր բոլոր օրերուն, բոլոր քայլե-
 րուն: Պիտի անդրադառնայ անոր յա-
 ճախ, Էրբեմն արձակով: Գիտակցու-
 թեան այդ առաջին զարթնումէն ուղիղ
 ասանդակնդ ասորի հոգ, «Թուղթ» Զա-
 ւակներուս խորագրեալ արձակ բանաս-
 տեղծութեան մէջ՝ այս անգամ արձակով
 պիտի բանայ ու պատմէ նոյն վէճը.

«Ամէն վայրկեան յաւիտեակամ եւ
 յաւիտեան սիրոյ մը տեսիլքը կայ մէջս,
 որ կ'այրէ, կ'ուտէ, կ'անցնէ ու կը
 սպասէ գիս: Գաճախ այնպէս կը քուի
 ինձի, որ տեսիլքները պիտի պատռեն
 մարթս ու ելլեն դուրս՝ կեանքի խորա-
 ցոյն ճշմարտութիւն մը պռռալու մար-
 դաց երեսին»:

Բաղձացուած այդ ճշմարտութիւնը,
 ի՛ր խոստովանութեամբ, երբեք ժարմին
 չառաւ, ու տեսիլքը նորէն շարունակեց
 այրել իր անձը:
 Վերջին օրերուն, «Բազին» մէջ,
 ողջուցը հրատարակութեան տուած իր
 վերջին քերթուածով՝ Պոյաճեան դարձ-

եւել նոյն տապանապին կը վերադառնայ,
եղածին, կատարուածին զժգոհութիւնը
կը յայտնէ նորէն եւ ամբողջապէս զըր-
ոսեւորուելու յուսահատ իրականութեան
հետեւանակ, արտառուշ, ցաւապին, ոգ-
րեցական անապարանքով մը կ'որոշէ:

Այստեղեւորութիւն, ըսե՛լ ինքզինք,
ըսե՛լ, ըսե՛լ,
Եւ ըսելով ձերբազատուիլ,
ա՛յ մաքրութիւն մաքր խոհերէն,
Այ մաքրութիւն քաղցր ու կծու
կայր քառերէն,
Սրտի կրակ աւ քերմերէն:

Այս երեւոյթին դիմաց մարդ ան-
պայման կը տարուի հարցեն, թէ ի՞նչ
է բանաստեղծութիւնը եւ բանաստեղծ-
ներու ո՞ր գաղափարով կը պատկանի
Պօյաճեան:

Ոմանց համար ներքին երաժշտա-
կանութիւն է բանաստեղծութիւնը:

Հետեւեալս ապրումներ խոսացնող
վիպութիւն է բանաստեղծութիւնը ու-
րիշներուն համար:

Երբեք ըմբռնումի մը համաձայն՝
դաստիարակչական բնութիւն մը ունի անի-
կա:

Պէտք է անմիջապէս աւելցնել, որ
Պօյաճեանի բանաստեղծութիւնը այս
սահմանումներէն դուրս կը մնայ:

Եղուարդ Պօյաճեանի համար քա-
նաստեղծութիւնը բնագոյնական վիճակ
է նախ եւ յետոյ անկէ ազատագրուելու
բաղձանք: Յետոյ ցնորք, մեկնում, ան-
կում, առաքանք:

Տեսլահար մարդու այս առաքանքը
կաղմեզ իր ուժը եւ տկարութիւնը: Իր
մտածումներէն է՛տ մնացած եւ բառերէն
ստա՛յ անցած մարդու տարօրինակ վի-
ճակ մը ապրեցաւ շարունակ, եւ հասնե-
լու տենչին ու չկարենալ հասնելու իրա-
կանութեան առջեւ: Աւետարանի սգա-
ւորներուն յափ խորունկ սուգ մը կրեց
իր հոգիին:

Ուժը՝ նուաճուած բանաստեղծու-
թիւնն է, տկարութիւնը՝ հոն նշարուած
թերութիւնը:

Եղուարդ Պօյաճեանի գրականու-
թեան մէջ՝ քննադատները բնագոյնաբէ-
րելու թերութիւններ, նոյն պապափարին
տարբերակները իրարու վրայ դրամա-
լու թերութիւնը մէկ, եւ երկրորդ՝ կու-
ռուցումի թերութիւնը:

Մեկի կը թուի, թէ այս տկարու-
թիւնները կու գան դարձեալ վերը չեւ-
տրած տեսլահար մարդու իր բուն ի-
րականութենէն: Ըսե՛լ կ'ուզենք միեւնոյն
մտածումին շուրջ նախադասութիւններ
կուտակելու՝ դիւրութիւնը չէ այս ար-
գիւնքին պատճառը, արդէն զի բութեամբ
քով քովի դրուած չեն անո՛ք, առա-
պանքի մը զինն են, զօրութեամբ դրաց-
ւող զօրութիւն տեսլիքին ահապնութիւնն
է զինք տակնուվրայ ընողը: Տեսլիքը
միշտ աւելի զօրութիւնը եղած է Պօյաճեա-
նի մօտ, քան զայն իրագործելու մարդ-
կային իր հնարաւորութիւնները: Եւ ո-
րովհետեւ առաջին բնութիւն մէջ մտա-
պտեկներին ամբողջութիւնը մարմնացած
չի տեսնու յաճախ, ապա ուրեմն կը շա-
րունակէ երկունքը, կը ստեղծէ երկրորդ
պատկեր մը, երրորդ մը, եւ տեսլիքն՝
հիմնական գաղափարը նուաճուած տե-
նիլու փոխարէն՝ ընթերցողը հանդիսա-
տես կ'ըլլայ անոր շուրջ զտրճող պատ-
կերներու տողանցքի մը:

Պատկերներու այս առաքանքութիւնը,
այս առաջին թերութիւնը, իր կարգին,
պատճառ կը դառնայ կառուցումի թե-
րութեան: Հարուածը հարստութիւնն
կու դա՛յ ու ճիշդ տարր համար մահացու
չէ անիկա:

Արդարեւ, որքա՛ն ալ չեւտենք նըշ-
ւած թերութիւնները, արուեստի խառ-
թեան եւ կառուցման օրէնքները որքա՛ն
ալ խոստացնեն մեզ, չենք կրնար սակայն
հանդիստ սրտով ու ամբողջութեամբ
գեղչել այդ կրկնուող ձայները, կրկնուող
դոյները, լոյսերը, կրկնուող լռութիւն-
ները: Հեռուններուն ու խորունկներուն
մէջ յաճող, այլ տակաւին չբռնուած,
չսանձուած, իր ազդեցութիւնը շա-
րունակող գաղափարին ամբողջական լոյ-
սը ազդեցող հոգիի մը ո՛ճը կը բերեն ա-
նոք, անհասնի համար տառապող մար-

դու մը սուգը, որ կատարուած նուաճումներուն խոսովքին համազօր խոսովք մը ունի:

«Փորձեցի, բայց չյաջողեցայ, յամ-ցաթըը ես չեմ», — կ'ըսէ տեղ մը մեր դարուն մեծագոյն գրագէտներէն մին, Սէնթ Էկզիսփէրի:

Անձանօթին ձեռք զարկած իրա՛ւ խառնուածքներուն մօտ՝ ի՛նչ փոյթ յա-ջողութիւնը, երբ փոխանցած են փորձին դժնդակ համը, չլսանաւ աշխարհին, յոյսին, բանին հրապոյրը, բանաստեղծութիւնը:

Իր ողջ գրականութեան թթիւմըը դժգոհութիւնը եղաւ, դժգոհութիւնը անհանդարտ դարձուց զինք, անհանդարտութիւնը պարտադրեց իրեն՝

Շարժել անշարժութիւնը, տեղափոխել,
վիել, համել, շրջել, բաճել
Ու վերստեղծել ամէն բան,
հոգի, երեւոյթ, ըմբռնում:

Անշարժութեան, լնացումին, քարա-ցած ամէն բանի ի բնութենէ թշնամի խառնուածքը եղաւ միշտ: Խաղաղ ծո-ւին վրայ սպիտակ փոթորիկներ բարձ-րացուց, կայունութեան դէմ մրրիկներ արձակեց, որեւէ համակերպումի դէմ հանեց տպաստմը ուժ մը: Հակադրու-թիւնը պործօն սկզբունքը դարձաւ իրեն եւ իր էջերուն մէջ ներհակ ուժերը տե-ւաբար իրարու բախեցան: Անդունդներուն մօտ յը կայ հոն եւ բարձունքներուն վե-հութիւնը, սեւին սարսափը եւ լոյսին պաշտամունքը, կան տակաւին վատու-թեան եւ ազնուութեան խորհրդանիշ դէմ-քերը՝ կայէնն ու Արէլը, Յուդան ու Յի-սուսը, Թուրքը եւ Հայը, եւ սաստկա-յոյն այն միւս կայսրութիւնները, որոնք կը կոչուին տարազրի կսկիծ եւ հայրե-նիքի սէր:

Բախումը շարժում բերաւ իր տողե-րուն,

Որոնումը՝ թարմութիւն,
Տաղնապը՝ բոց,
Արիւնը՝ մթնոլորտ:

Սիրեց Արարիչը, Անհունը, լոյսը, հայրենիքը, կիներ, երազը, երգը ու գե-րազանց թափով մը պաշտեց մեր լեզուն: Առաւ անկէ շատ բան, տուաւ անոր շա՛տ բան, հասարակ բառերուն ետուն կենդը փոխադրեց դէպի գրականութիւն, օտեղ-ծեց հարիւրաւոր նոր բառեր, երբեմն նոյնիսկ շփոտահեցաւ նորաստեղծներուն, գիմեց յատուկ անուններու օժանդակու-թեան, մերթ Ալաոքա դարձուց հոգին, մերթ Սահարա, Նիակարա, հասարակա-ծային, բեւեռային բաներու, խառնելով իր ոճին մէջ անսպասելի, ջրվիժային, բեւեռային ու հասարակածային տապ, ցուրտ, լուսթիւն, ազմուկ:

Այս յատկութիւններով եկաւ աշ-խարհ, տպագիտ տեսաւ, ըմբռնեց, ապ-րեցաւ աշխարհը ու մեկնեցաւ՝ աշխար-հին կտակելով նոր հարստութիւն մը, բանաստեղծութիւն մը, որ քնարական տարրեր ունի իր մէջ, բայց քնարերգու-թիւն չէ, գիւցադներգական երանգներ ունի, բայց գիւցադներգութիւն չէ, պատգամական շեշտեր ունի, բայց վար-դապետական չէ, գրականութեան մէջ ե-կող իւրաքանչիւր ճշմարտութիւն չեւ յայտ-նելուդ առանձին որակ է, պա՛ր է՝ քա-միններուն ու փոթորիկներուն տարեքէն խենթեցած խելագա՛ր պար, երաժշտու-թիւնն է՝ որոտումներով ու լուսթիւնե-րով կազմուած անօրինակ աղմուկ, նկար-չութիւն է՝ արեւներէն, կապոյտներէն, ծաղիկներէն յափտակուած պատկեր-ներու խօյական արշաւ:

Եղած բաներ՝ ու եղածին լոյսը բե-րաւ մեզի Պոյաճեան:

Զեղած բաներ՝ ու չեղածին յո՛յսը բերաւ:

Ու մեկնեցաւ կեանքէն, հաստատե-լով վերջնական ներկայութիւն մը:

Պ. Մ.



Պայանքների մեծագույն յատկանիշը եւ առաւելութիւնը իրերուն եւ կեանքին առջեւ տեսարդախ եւ ինքնուրոյն տեւր ունենալն է: Մշակացածի մասին կարելի է վիճել եւ կարելի է քննադատութեան տանը խոսքեր դառնել: Ի՞նչ փոյթ: Ան իր երգը ունի ըսելիք, հոգ չէ թէ շատերու աչանէր վիրտուրէ եւ ուրիշներու տախտիք: ցնցումներ պատճառէ:

Պայանքան կ'երգէ Սէրը եւ Վիշտը, ինչպէս բառացիորէն որակած է արդէն իր երգը դրբին խորագրով: Անյոյս, ահա եւ կորսուած սէր մը, որմէ մնած է վիշտը:

Եզրուարդ Պայանքանի Սէր եւ Վիշտը իր խորքի բարբառու նախնականութեամբ, իր գիտեալ ետքութեամբ, արտայայտութեան ուժգնութեամբ եւ նորիսկ իր խենթութիւններով ու խոտորումներով ուշադրու գործ մըն է, որ կը յայտնարէրէ երեսուսուրդ բանաստեղծի մը տենդահար ու հարուստ հոգին:

1945

Մ. Ի.

ԾՆՆԴԱՊԱՀ

(ՀԱՏՈՒԱԾ)

Ես նստած եմ ծովափին վրայ.
 Զուրերը կը տատանին, ալիքներ կը խաղան:
 Երկինքը հեղեղուած է ծովային տարածութիւններու մէջ.
 Ան՝ Երկինքը, Ան՝ Մեծ Բովանդակին ցուցանիշ կապոյտ սկիզբը, յատակը,
 Ան՝ դեռ ասկեզուարթ աստղերուն եկեղեցին,
 Դեռ փետրափայտիկ ոգիներու լայն գրօսարանը,
 Դեռ արեւի ճամբայ, դեռ մահաւան շաղի,
 Դեռ Յիսուսի յաւիտեական կածան՝
 Երկինքը,
 Խուժած է ծովուն մէջ, վերստեղծուած ու մեծվայելուչ,
 Խոր ու հանդարտական ամբողջութեամբ:
 Ետ՛վը: Երկինքը: Բացակայութիւնը փոքրիկին,
 Ծանր, անհղ շգոյութիւնը մեծ փոքրիկին՝
 Որ կը սարսէ, կը շրջէ, կը վերիվայրէ ամէն ինչ:
 Եմունդէն առաջ, ծնունդէն վերջ, ահա դեռ ծնունդի՛դ ընթացքին
 Ով սէր, ով մե՛ծ, ով ահագնատարած սէր,
 Ես գացած, նոյնացած, ամբողջաւորուած եմ փոքրիկներուն
 մեծամտայլ ոգիին:

digitised by A.R.A.R.®

Փոքորիկը կը բերէ զիս ու հս կը փոքորիկիմ մէջս, չորս դիս, ամէն բան:
Իմ արիւնքս սնունդն է ան, հիւսքը գոյութեանս կենսածովն,
Ջիւերուս ու կամփիս մղակամութեան բացարձակ օրէնքը: Ուժը:

Արագութիւնը:

Շարժել անշարժութիւնը, տեղափոխել, մղել, հանել, շրջել, քանդել

Ու վերստեղծել ամէն բան, հոգի, երեսոյթ, ըմբռնում:

Մեկնիլ տակաւ աւելի բուռն սաստկութեամբ տեղէ տեղ,

Աստղէ աստղ, անջրպետէ անջրպետ, ճեւափոխել ու անցնիլ.

Ճեղքել մշուշը, ռվկիւննոր:

Փոքորիկը.

Իմ տարս է ան. իմ հաշիշս ու վերքս.

Եւ մարդ կը սիրէ իր հաշիշն ու վերքը.

Ամէն բանէ աւելի, զիմք կազմող հոգէն իսկ աւելի:

Մրրկակրօն, խռնապաշտ ու մոլեռանդ երիտասարդն եմ հս միշտ,

Մ'վ իմ սէրս:

Ով իմ աստղային սէրս, աստղածաւալ սէրս:

Ծովագնորի բոլոր աստիճաններուն վրայ.

Գիտե՛մ, աղը իր զառնութիւնը կը բաշխէ այս տարտամ յետմիջօրէին.

Եւ խաբակները մէջն են,

Անօրական ու սգաւոր գոլորշածուխներու:

... Պիտի ծննդաւն, գաս, բերուիս, յա՛ղթօրէն նակատագրուիս ինծի, սէ՛ր,
Հուսայիմ պայծառքնաց արագութեամբ.

Մտածայիմ, բզխում, ժայթքում,

Անագնահրաշ ու գերացա՛յտ հասնումով,

Մինչեւ ներսս, խո՛րս, գոյակեղրոնիս վերջին ծովին ու կէտի՛ն մէջ,

Պիտի անդնածայրուիս, միտիս ու մնաս հոն, քիմիանաս՝ հոն,

Հասնիս երկնային, տիեզերային

Ու աստուածային ծայրագագաթ վերածումներու

Եւ կեանքի կատարելութեան լոյսի՛ն, լոյսի՛ն, լոյսի՛ն...

Ծնունդդ... Եւ փոքորիկը:

Ճիշդ ա՛յն ատեն է որ պիտի գայ, ազաւորմա՛յ ու փչէ հզօր փոքորիկը.

Սպասուած բազում բանաստեղծներու ներքին տենդաւ

Կլիմաներու, հրաքաւալումի եւ դժոխքի՛ մէջ:

Սպասուած եւ ազերուած եւ ազօթաւո՛ծ նաեւ.

Հագեցիւրե՛ղ մաքրութեամբ.

Ու ցոլացումովը իր պե՛րճօրէն աղամուկեայ կամփին՝

Տղայէ մը՝ որ հս եւ, բանաստեղծէ մը որ հս եւ նորէն,

Նուրբեալէ մը Աննգրին, որ հս եւ զարձեալ:

Ե. Պ.

(«ԱՆՔ Եւ ՎԵՋ»)

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

Ա Ր Ջ Ա Կ Ա Գ Ի Ր Ը

Բանաստեղծութեամբ թէ արձակով, գրագէտը իր մէջ թաւալող զգայնութեանց, մտածումներուն, ներքին մթին պահանջներուն ու փոթորկումներուն արտայայտութիւնն է որ կը փնտռէ: Իր քերած նորութիւնը ինքն է, եթէ կտրենայ ինքզինքը առաջ աշխարհին, արտայայտել ձեռով մը, որ ըլլայ փոխանցող ճշմարտութեան զգայնութեան, եւ զեղեցիկին:

Հարկ չկայ մտնելու զեղեցիկի եւ ճշմարտի սահմանումի փորձերու, բիւզանդական վէճերու մէջ. վերջին հաշւով ամէն ժամանակաշրջան կը բերէ իրեն յատուկ սահմանում մը, կամ չափանիշներ ճշմարտի ու զեղեցիկի, որոնք ինչքան ալ տարբեր թուին իրենց նախորդներէն, խորքին մէջ միշտ ունին ենթակայական կարեւոր, հիմնական բաժին մը՝ ընթերցողին զգայնութիւնները:

Ընթերցողը կրնայ ըլլալ պարզ անհատ մը, կամ գրական քննադատ մը, իրեն յատուկ խոստացանքներով, չափանիշներով: Երկու պարագային ալ, արժեւորումը գրագէտին չի կրնար ամբողջովին առարկայական ըլլալ, ու պիտի ըլլայ մեծ մասով անձնական գո-

չունակութեան, ջերմութեան եւ փոխանցումի ուժղնութեան չափաստիճաններու վրայ հիմնադրուած:

Յղուարդ Պոլսեան արձակագիրը կը ներկայանայ մեզի երեք հատորներով՝ «Հողը», 156 էջոց միջակ մեծութեամբ գիրք մը, յոյս տեսած 1948-ին, բաղկացած 15 վերնագիր կրող գրութիւններէ, որոնց դժուար է պատմութեամբ տնտեսը տալ. «Թուղթ Զաւակներու», 116 էջոց գրութիւն մը, գրուած զաւակներուն ուղղուած նամակի մը, «Թուղթի» մը ձեւին տակ, յոյս տեսած 1960-ին, ուր հեղինակը ինքն իր հետ կը խօսի, հրաւիրելով որ մենք ունկնդիր ըլլանք իր ներքին տրամախօսութեան, որուն ընթացքին հետզհետէ կը քակուին մեր գիմաց իր նկարագիրը կազմող գծեր, իր օպրումները, զգայնութիւնները, իրը հղող ճշմարտութիւնները, իրեն յատուկ ոճով, ու վարակող ջերմութեամբ. «Տոմար Տարագրի», 224 էջոց հատոր մը, 10 պատմութեան շարքով, գրքի ձեւին տակ հրատարակութեան տրուած 1963-ին, սակայն գրուած շատ աւելի առաջ:

Ձենք ներառներ վերջերս, 1987-ին յոյս տեսած իր «Դէմքեր»ը, համարելով զայն զրական տարբեր սեռ մը, Բնակա-

նախար ունի դեռ պարբերաթերթերում էջ ըմնացած պատմութեանքներ, եւ անտիպ գրութիւններ:

Երեք հատորներուն մէջէն է որ Եղւարդ Պոյաճեան պիտի ներկայանայ մեղի, աշխատէ ինչպէս որ է: Եւ ոչ մէկ արտաքին վկայութիւն կրնայ աւելի քան բոսյ Հնդկականի մը մասին, քան անոր զործերուն բերած ներքին վկայութիւնը: Եղւարդ Պոյաճեանին ծանօթանալու յաւաքոյն միջոցը իր երեք հատորներուն դիմէն է, մանաւանդ 1960-ին գրուած ու տպագրուած «Թուղթ Ձաւակներուս»-ին մօտենայն է, բարեկամաբար, բնկալելու կանխատրամագրութեամբ:

Որովհետեւ Եղւարդ, իր կեանքին թափարին, իր անձին կամ գրականութեան Հանդէպ կանխատրամագրութեանց արդիւնք վերաբերում գտաւ ընդհանրապէս: Այդ կանխատրամագրութիւնները մեծապէս կ'ազդեցին անոր անձին թողած տպագրութեան, որ յաճախ տարբեր կ'ըլլար քան այն, ինչ որ ինքը Եղւարդ կ'ուզէր որ ըլլար: Հիմա՝ որ ճապատագրի վաղաժամ հարուածումովը չկայ իր անձը, անհրաժեշտ է, որ գրականութեան սէրը ունեցող, Հայութեան Հոգեկան աշխարհին Հարցականներուն մտահալածանքը ունեցող, Հայ Հարստութեան ծարաւ Հայը, բարեկամական ապրումով, Եղւարդ Պոյաճեանէն ճառագայթող զգայնութիւններն ու ճշմարտութիւնները ընկալելու կանխատրամագրութիւններով մօտենայ անոր գրականութեան: Եթէ իր անձը չէր ճառագայթեր գեղեցկութեան ու արժէքաւոր ճշմարտութեանց իրրեւ արտացոլում, իր գրականութիւնը ի էր սակայն անոնցմով, անոնց Համար, որոնք ծարաւ ունին նման բաներու, եւ տրամագրութիւնը՝ ընկալելու գեղեցկութեան ըստած դառն խօսքեր, որոնց տակ ճշմարտութեան գեղեցիկ բաներ կան պահուած:

Մարմնական ու Հոգեկան խառնուրդներ կան, որոնք գոյախտ Համադրումներու արդիւնք, զիրենք կրող մարմիններէն եւ նաեւ արտաքին գոյախտու-

թեան կը դատապարտեն, Հակառակ ներքին Հարստութեան, եւ այդ Հարստութեանց ու գեղեցկութեանց ընծայող երջանկութեան բոլոր կարելիութիւններուն: Նման գոյախտ խառնուրդ մըն էր Եղւարդ: Հակառակին տպագրութիւնը ճառագայթող մը, որ կը գիտակցի ատոր եւ կը տառապի ատկէ:

«Այն անոր՝ որ չի կրնար իր մայրաւորէն սիրոյ մտազգայք մը գրել կը մնայ մը, քարեկամի կամ գաւկի: Ձեր հօր մայրաւորէն, ձեր եւ աշխարհի վրայ, — Ես գիտեմ — անտեղծութեան կ'աւելնայ կը քուր: Եւ հոգիին մէջ ամբարշտած անպատեւել կը գգար ատկիկա եւ կ'արտաւելնայ, երբ շրթները... կը ժպտնեն:» («Թուղթ Ձաւակներուս», էջ՝ 44):

Ներքին Հարստութեանց ու գեղեցկութեանց զգայնութիւնը, արտաքին թոյնի տպագրութիւններուն Հակադրութեան Հետ դարձած աւելի տառապեցնող, կը նեղեն դրազէտը, որ կը ճշնի արտայայտել ինքզինքը եւ իր արտայայտութիւնները դառնութիւն կը դառնան, արտաքինապէս գէթ: Այդ երեւոյթին առջեւ սարսափահար, կանգ կ'առնէր ուզէ մը, կը մտածէ իր Հակասութիւններով Հարուստ ներաշխարհին մասին, վերջին Հաշուով միայն ու միայն գեղեցիկ անհրաժեշտութեան, բարիք ու լաւի տիրապետութեան մը անհրաժեշտութեան մասին, ու կը ձգտի գրել իր Գիտութիւն, իր ամբողջական գիրքը:

Մեռաւ զայն չգրած, կիսաւարտ գրական Հարստութիւն մը ձգելով իր ետին: Այդ կիսաւարտ գրականութիւնն անգամ, սակայն, Հարուստ է ըմբռնունքի էջերով, գեղեցկագոյն պատկերացումներով, եւ խորապէս զգացումով ապրումներով, որոնք կը վարակեն անպայման ընթերցողը, եւ գեռ երկար առան պիտի վարակեն՝ երբ իրական արժէքներու ծարաւ Հոգիներ կարդան զինքը:

Եթէ չունեցաւ ժամանակը, կամ քաջութիւնը՝ գրելու իր գիրքը, ունեցաւ ժամանակը եւ քաջութիւնը՝ խօսելու այդ քաջութեան անհրաժեշտութեան մասին, զրքէ մը իրական արժէքին մա-

սին, մեր կենքի արտաքին աճուղ ընթացքին տակ պահուած, վտանգաւոր սահմաններուն եւ աւերիչ ազդեցութիւններուն մասին:

Կրկին ու կրկին կարգացուելէ չընէր նա, իր թուղթ Ձաւակներուս գրքի գրիթէ բոլոր էջերը, ուր պեղելի, խորը պահուած հարստութիւններ կան, հակառակ լեզուի համ տուող իր դառն արտայայտութեանց: (Էջ 41-42)

Անդրադառնալով նաեւ այս դառն բաներուն, աւելարար ազդիւն, չարին, վատին, սեւին մասին արտայայտութիւններուն, որոնք Եղուարդի գրականութեան մեծագոյն մասը կը կազմեն: Անհրաժեշտ է այդ հարցը դնել իր իրական եւ պատճառական հիմքերուն վրայ, որպէսզի գառնանք ընկալելու պատրաստ ընթերցող, եւ ոչ թէ մերժողական կանխատրամադրութիւններով պրկուած, շուտով գիրքը մէկ կողմ նետելու պատրաստ ընթերցող: Արուստի բմբուխն ու մի մը համար անհրաժեշտ է որոշ յամեցում, ներքնկալում եւ ներքին բիւրեղացում, օտարական անձի հարստութեան մասնակցութեամբ զգայնութեանց փրկագոյնը:

Գրականութեան անհոգ ժամանակաշրջան մը կար, երբ գրագէտը ուրիշ բան ընելու կարիքը չուներ, կը բուէր որ նկարագրէր իրեն պատահածները: Նման պարզ բաները սակայն, ներկայիս, բնդունելի չեն թուիր մեզի: Անցնող հարիւրամեակը յեղաշրջած է շատ բան, եւ այդ բոլոր գահաժիթումներուն եւ ղէպի տիեզերք կատարուող սլացումներուն մէջ, երբ մակերեսին վրայ կը նկարագրուին ՄԱՌԴը եւ ԵՍԻՆ պատահած բաները, բնդունելի չեն թուիր այլեւս որդի դիտակցութեան:

Սովորական մահկանացուներէն ստրբեր, աւելի սուր, աւելի խոր զգայնութիւններու տէր մարդը, որ գրագէտն է, ճամարտութիւնները յայտնաբերելու, իրը եղող ճամարտութիւնները պարզելու կոչում մը ունի: Ինքն իր մէջ, ինքն իրեն հետ մէկ մէջ է ան այս դարուն. պէտք է ըլլայ: «Ուրիշներու հետ մեր

ունեցած վեճերով հանդարտութիւն կ'ընենք, մենք մեզի հետ անեցած մեր վեճերով՝ քանաստեղծութիւն կ'ընենք», կ'ըսէ Երց: Արուստագէտը ընկերային գործիչ մը չէ անշուշտ, զեկամար մը չէ, հարցերը լուծելու պարտականութիւնը չունի, սակայն «Ցուցանեմ իմ ճշմարտութիւնը, իր սեփական եւ յստակ միջոցներով, կ'առաջացնէ յուզումը, որ կը մղէ բուժումին» (Ա. Քէօսէր):

Իր ճամարտութեանց հաճելի ըլլալը պայման չէ, ոչ իսկ դիւրահասկանալի ըլլալը, պայման է սակայն իրականին պայմանութեան փոխանցումը:

«Վիպասանին փորձութիւնները» վերնագրով դատախազութեան մէջ, Արթուր Քէօսէր հետեւեալ ձևով կը ներկայացնէ ժամանակակից ճամարտութեանց արտայայտման հարցը:

«Քանի որ հեղինակը մեզի ժամանակակից մըն է, իր զգացածը առանձնաբար տառապանք մը պիտի ըլլայ:

«... Տարօրինակ եւ ցուազիմ գործողութիւն մը (Գրագէտի հոգիին մէջ տեղի ունեցող գործողութեան կ'ուհեարկէ Քէօսէր, Բ. Փ.): Երբ կը մտածեմ վիպագիր կոչուած տեսակին մասին, միշտ ալ կը յիշեմ Աւստրալիոյ տերմիտներում արտառաց բաքքերը: Այս խմբակին պատկանող մրցիւմները, ի վիճակի չեն օգտուելու իրենց հաստատութեան սահմանին մէջ գտնուող սնունդային խմբակին, իրենց մարտական գործարարներու անբարարութեան պատճառով: Անոնք անօթութեան պիտի մեռնէին, եթէ չըլլային որոշ տեսակի, մասնագիտացած աշխատողները, որոնք կը հաւաքեն բերքը, կը պատրաստեն, կը մարսեն, կը պատրաստեն սնունդ: Եւ կը կերակրեն միւսները՝ քաղուհի, գործաւոր, քուստր չափաւորներ: Կարգ մը տեսակետներ մօտ, այս մասնագիտացած աշխատողները ընտելեմ են հնամար բոյնէն. կը մնան կախում միջին կամարներէն, գլխիվայր, եւ կը վերածուին կենդանի շտեմարաններու: Իրենց փոխած, առաջակամ փոքրիկ մէջ ուրիշ մրցիւմներ կը բերեն ու կը



Պապուատ 1965: Լեւոն Գարսեւ, Նդուարդ Պոյանեան եւ Յովակ Յովսէփեան

լեցնեն ուտելիքը (որպէսզի իմ ամբար, օգտագործելի դարձնէ) յետոյ, երբ ամօթի ըլլան, հոնկէ կը քաղեն իրենց օրնունդը:

«Կախումած, գլուխն ի վար, մեր մրջնատուններու մթին կամարներէն, հայքայքեղու համար պատերազմիկներուն, քեւտար չափահասներուն, հախօրօք մարտումս սննդախիբը քունաւոր եւ լեզի բերքի մը, այսօրուայ գրագէտը դէպի չարաշուք մտածումներ է որ կը քեֆաւի»:

Մենք անհող պատերազմիկներ, կամ թեւաւոր չափահասներ, մենք յաճախ կը նեղուինք, երբ մթին կամարներէն դուրսն ի վար կախումած ապրող գրագէտը, մեզի որպէս սնունդ կը հրամցնէ լեզի բաներ: Մենք կը ցանկանք միայն քաղցրը հաշակել, միայն հանելին ունեղիլը ըլլալ: Միայն նման բաներու մատուցում մը այս դարուն, կեղծիք պիտի ըլլար, եւ ոչ ճշմարտութիւն:

Կը գիտակցի իր հրամցուցածի համին դրազէտ Պոյանեանը, երբ կը գրէ

իր «Թուղթ Զաւակներուս» 92-րդ էջին վրայ, իր զաւակներուն բերնին մէջ դռնելով բառերը, (եւ մենք, բոլոր ընթերցողներս ենք դրազէտին զաւակները) «Որքան սեւ բառեր կտակեր եւ մեզի, հայք. սեւ խօսք՝ ազգիդ, սեւ խօսք՝ մարդկութեան: Սեւ խօսք՝ աջ, սեւ խօսք՝ ձախ: Կեանքը փոխանակ կամք ու կենսունակութիւն տալու ոմիդ, տըւած է անոր դառն ու դաժան հետաքրտիւն մը»: Եւ *կ'աւելցնէ թիւ անդին* (էջ՝ 96-րդ եւ 97-րդ) «Կրնա՞ք անշի յուզումով եւ անիլի կիրքով խօսիլ: Կրնա՞յ ձեր սերունդը վէպ մը խօսք ըսել իմծի ու իմ սերունդիս: Խնդիր չէ: Ներսիլ չէ մեր վերջին փափաքը. չտխալիմ է:

«Կրնա՞ք պնդել որ հրկիզուող արժէքներու շրջանի մը դժոխքը կը կրքեցնի տղերքուն մէջ, եւ կը կատարուի հոն մութ նախատեսութիւններ, աղագայի հաշտոյն: Զափազանցած պիտի ըլլա՞ք քերես, եթէ միայն սեւ բառեր նարակէ՛ք իմ բուզքիս մէջէն: Բայց այդ

պառաւիմ համար այլեւ ջուրը լեզի»:
(«Տոմար ճարագրի», էջ՝ 29)

Այս ձեւով էր բառերը յաւելեալ
թանձրութիւն մը կը ստանան:

Որեւակայութեամբ հարուստ, հա-
րուստ բառամթերք մը ունի Պոյաճեան,
որ կը պարծածէ աննման ճարտարու-
թեամբ: Կը գրէ էջ մը, էջեր թերեւ,
միեւնոյն նիւթի մասին, միեւնոյն բա-
նեքը կը կրկնէ, սակայն չեն կրկնուի
բառերը, չեն կրկնուիր պատկերները,
անոնք կ'ըլլան մէկը միւսէն աղուոր,
մէկը միւսէն տարբեր՝ երանգով, նըր-
բութեամբ մը, ու կը բերեն ուրիշ զգա-
յնութիւն:

Կ'ըլլան իր տողերը պարզ զեղեցկու-
թեամբ, երբեմն ալ կը թանձրանան, կը
խտանան. կը հագնին մթին գեղեցկու-
թիւն մը: Բայց միշտ ալ կը պտենն ճշ-
գրութեամբ: «Հողը» հատորին մէջ,
հոտաղ Դանիի մասին իր գրած էջերը
կը փոխանցեն ճշգրիտ պատկերը Դա-
նիին, առանց մաթեմատիքական պաղու-
թեան, ընդհակառակն՝ բանաստեղծու-
թեան վարակիչ շերտութեամբ թաթա-
ւուն:

Ճշգրտորէն վկայագրող մըն է Պո-
յաճեան. վիպասան մը չէ, Գեղեցիկ ձե-
ւով վկայող մըն է: Ճառապող ու տըր-
տում վկայագրող մը նոյն ատեն: Դարը
տըտում է բոլոր անոնց համար, որոնք
նիւթականէն տարբեր, հոգեկան, իմա-
ցական արժէքներու վրայ կը հիմնա-
րեն ամէն ինչ: Դարը դարն է, արուես-
տական չէ, արդիւնք է կեանքի հոյ-
մոյթին: Գրագէտն ալ մաս կը կաղժէ
կեանքին եւ դարուն: Իր դոյութիւնը,
երբ կայ իրրեւ իրաւ, կոչումին հաւա-
տարիմ գրագէտ, դարը փրկող երեւոյթ
է: Անգիջող գրագէտը, սեփական տես-
լականի ամբողջական պատկերացման
հետամուտ՝ ժամանակը հարստացնող
երեւոյթ է:

Նման գրագէտ մըն էր Շղուարդ Պո-
յաճեան:

Աւելի ճիշդ, նման գրագէտ մը ըլ-
լալու կարելիութիւնը ունէր: Այս երկու
արտայայտութիւնները հակասական չեն

իրարու. լրացնող են պատկերը: Երկու-
քան պակսեցաւ Պոյաճեանին՝ ինքզինք
վերանորոգելու կարելիութիւնը նախ:
Կը թուի ընթերցողին, թէ ինքն իր վը-
րայ կը դառնայ Պոյաճեան: Ներքին,
մթին, փոթորկոտ աշխարհ մը կը ախ-
րապետէ իր գիտակցութեան, կ'առնէ
զայն իր թաթին տակ, կը պարտադրէ որ
ինքզինք փնտռող, ինքզինք արտայա-
տել փորձող արուեստագէտ գրագէտը
չկարենայ դուրս գալ ճշումին տակէն,
չկարենայ բանալ իր նայուածքը արտա-
քին աշխարհի նորանոր գրգռներու,
նորանոր, վերանորոգող հորիզոններու
վրայ: Կը պակսէր ապա զտուժի ու կա-
ռուցումի համար անհրաժեշտ եղող յա-
մառ աշխատանքի կարողութիւնը:

Յամառ աշխատող մըն է անկաս-
կած՝ ստեղծագործական ժայթքումը
թուղթին յանձնելու տեսակէտէն. սա-
կայն ոչ՝ դասաւորելու, յապաւելու,
եւ ու առաջ տանելու, մէկ խօսքով գը-
տումի ու կառուցումի մարզին մէջ: Այս
երկրորդը պակսեցաւ իրեն հաւանաբար
որովհետեւ առաջինը կը պակսէր՝ ներ-
քին փոթորկումները գիտակցականին
բերելով. անոնց հանդէպ վերէն նայող
նայուածք մը, բացուելու, տարբեր բա-
նէր ներառնելու կարողութիւնը:

Գիտակցութիւնը չէ որ կը պակսէր
իրեն: Գրագէտի կոչումին մասին իր ու-
նեցած մտածումները փաստն են ատոր,
գիտելով Ձաւակներուսին մէջ կ'ըսէ.

«... Գրողը: Ան այսօր ոչ բաւարար տա-
ղանդ կը յայտնաբերէ, ոչ բաւարար
լրջութիւն: Յագնած ջիւղեր ունի շարու-
նակ ու գրչի ծայրին վրայ նախադասու-
թեանց եւ իմաստի ստուերներ միայն:
Ամէնէն ճախարար անձերէն մէկն է մեր
խանութեան մէջ: Ամուլ յոյս մըն է,
յուսահատութիւն պատճառով յոյսի կը-
տար մը՝ որ ոչ կատարելապէս մերկայ
է եւ ոչ ալ կատարելապէս բացակայ:
Երազիմ եւ իրականութեան մէջտեղերը
կեցած անհուն քմեքմեքութիւն մըն է,
թուլութիւն մը, ամբարկում մը: Ձի գի-
տեր, երազի՞ն կողմը երբայ քէ կեանք-

քին: Ձի գիտեր, ներկա՞յ ըլլայ քէ բացակայ: Երկարամեայ բիրիմացութեան մը մէջ ըլլալով՝ սկսած է թիւրիմացութիւններ շարադրել ալիւս ժողովուրդին, փոխանակ լրջօրէն ստեղծագործելու: Ժողովուրդի աչքին՝ մեծ, քաճմուռաց իրականութեան մը մոլոր է լակ, որուն բոցին ու կրակին ի գուր կը սպասուի: Ի գուր սպասուեցաւ այսքան տարի:»

Կը գիտակցի ինք, իր ներսը տեղի ունեցող տատանումներուն, երտգի եւ իրականութեան միջեւ: Կը գիտակցի անհրաժեշտութեան՝ բռնուլ իր խօսքը, դրելու իր գիրքը: Գրած է նախաբանը տնոր՝ «Թուղթը» իր զանակներուն: Ուր հարցականները դրած է, կարգ մը պատասխաններ տրամադրած է, վորանքով երբեմն, հաստատուն քայլերով յաճախ, անկեղծութեամբ ու գեղեցկօրէն՝ միջոյ:

Գրագէտը մարդ մըն է ամէն բանէ առաջ: Պայանքան նաեւ հայ գրագէտ մըն էր: Եւ իր մտասեւեռումը այս երկու դադաթնակէտ ձգտումներուն մէջէն կը տատանի իր գրականութեան մէջ: «Տոմար Տարագրի», ու մանաւանդ «Թուղթ Ձուակներու»-ը ներքին մտորումներ են «Վատին, Զարին, Բարին, Բարոյականին, Մարդկայնութեան, Միւրոյ, Պարտականութեան, Գրագէտի պարտականութեան, Հայ մարդու պարտականութեան, Հայ ժողովուրդի կոչումին, Հետեւելիք ճանապարհին, Հայու հայրենասիրութեան տեսակին, Հողին եւ անոր աղեղցութեան մասին հայ մարդու պրայ: Կ'ուղղուին իր խօսքերը. «... Բարձր գիտակցութեան մը, մտքի ու հոգիի յայն հարկաւորութեան, քննադատական ռաւը ոգիի մը եւ բարդ խնդիրներու առջեւ վերանայալ եւ ազատագրութեան ընդունակութեան»:

Բարձր գիտակցութեան բնուէր ճանաչողութեան մէջ կը դառնէ փրկութեան ճանապարհը, հայոց ազգին համար: «Եւ քսէ՛ք նայ ազգին, որ նամայող ըլլայ: Ձի էր՝ եւ չէ եիմա: Թող իր բոլոր սերունդները, մանչ եւ աղջիկ՝ նամա-

չողութեանը դաւանին իրեն թիւ մէկ գիտութիւն, թիւ մէկ հաւատք, թիւ մէկ յայտ: Եւ Սէր: Եւ կեանքի խաբիս: Բազակներու եւ հոգիներու մէջ դրած յայտանակի բացարձակ խոստումնագիր:

«Թող ցրած հայութիւնը իմանայ, եւ հայրենիքի մէջ ապրողները գիտնան: Ճանաչողութիւնն է առաջին գիտութիւնն եւ վերջին գիտութիւն: Առաջին յեղափոխութիւնն եւ վերջին յեղափոխութիւն: Առաջնակարգ վարչաձեւ եւ վերջին վարչաձեւ: Միակ ուժն է, որ խոստումներ ունի. ու միակ ուժը՝ որ տուած խոստումները կը յարգէ, չ'ընկեր յուսախաբ:»

«Թող մեր ազգը չկարծէ քէ ուրիշ մարմններ եւս կան բարձրագոյն ճաշակաւորութեան մը եւ բարձրագոյն մշակաւորի մը համար: Թող չկարծէ՝ քէ կայ աւելի բանկազին ու մանաւանդ աւելի անպահապ լինող մը՝ ինքնապահպանումի համար: Համեմարի համար եւ սիրոյ համար: Ազատութեան համար, արւեստի եւ ստեղծագործութեան համար: Զկայ:»

Տրդատ էմմին՝ որ Հայաստանը կը փորէ, Միսաք ու Սիսակ, Զորեպան Գալուստ, գիւղի բոլոր անձնաւորութիւնները, ճանճեքէն ու մալարիայէն հալածուած հայ գիւղացիները, եւ հետագային գէպի Հայաստան ներգաղթող Այնճարցի, Ծէպէլ-Մուսաղիներ, բոլորը, բոլորը կ'ապրին հայ մարդու տաղնապ մը, մարդու տաղնապ մը: Բոլորը հարցականներ ունին նետած աշխարհին, մարդկութեան, եւ Աստուծոյ, որուն ծաղրանկարն է դարձած մարդը, մարդկութիւնը՝ բոլոր Պայանքանի:

Տաղնապ կայ իր ամէն մէկ տողին մէջ, վարակող, ջերմ, եւ մառնումներ խթանող տաղնապ: Գեղեցկօրէն կ'արտայայտուի այդ տաղնապը, նոյնիսկ երբ սմբողջապէս ու կառուցուի չի կրնար: Հատուածներու մէջ ամբողջական է կառուցումը: Ամբողջութեան մէջ է որ կը պահուի ան, հատուածական կը դառնայ:

Հաստատվածներն իսկ պիտի բաւեն գինը գտնուելու համար հայ գրականութեան մէջ, ամենապատեհական գրագէտներու կողմէն ։

Գրագէտն է Ուլ մէկ արտաքին վկայաւորութիւն կրնայ աւելի քան բաւի հեղինակի մի մասին, քան ամեն գործնական քննարկ մը քիմ վկայութիւնը ։ Նման վկայաւորութիւններ են նաեւ գրագէտին գրած նամակները ։

Իր մասին գրուած այս տողերը, որոնք յաւանդութիւնը շունին իր ամբողջական պատկերը տալու, կ'ուզեմ վերջացնել 1960 Հոկտեմբեր 9-ին, Պէյրութէն Սմերթիկա գրած իր մէկ նամակէն հատուածներ տալով ։ Կը գրէր Պոյաճեան այս տողերը գրողին՝

«Պէտք է գրեմ ։ Թերեւս շատ ժամանակ շունիմ այլեւս գրելու ։ Արդէն շատ րան պէտք էր գրած ըլլայի ցարդ ։ Ըսէ, արժէքաւոր, լիարժէք բաներ ։ Մինչդեռ փոխանակ առանց շունիմ նայելու, մոռնալով դուրսի կիսները պէտք էր արտագրէի միայն՝ եւ շունիմ նայեցայ միշտ, դուրսի կիսները չիցի միշտ ու ծնունդ տուի մէջս բազմաթիւ Բոմբիլէներու (Փրոններէն գրուած նամակին մէջ) ։ Հիմա, առանձինս, միայն իմ սեփական ուժերուս յենած՝ ի վիճակի չեմ ինքզինքս ազատելու հոգեկան այդ բարդ դոյլներէն ։ Կարենալ մտերմի մը, մէկ երկու մտերմի յայտնել վիճակս միութարութիւն մը, յետին յոյս մը կը համարեմ ինծի համար ։ այդ պատճառով ահա կը գրեմ, մոռնալով յաճախ գիտագիտական նոյնքան մեծ սեփական մտահոգութիւններն ու տաղանքները, որոնց թեթեւացման համար փոխադարձաբար ոչինչ ըրած չեմ ։ Դուք անշուշտ մեծ կ'ըլլաք եւ կը ներես, սիրելի ընկեր, որ առաքելութեանդ սա ծանր օրերուն, նոր պարտականութիւն եւ նոր տրամաբան կ'աւելցնեմ ճամբուդ վրայ ։»

«... Իսկ ես 20 տարիէ ստորի, տկարացած եւ փլած մարդ մըն եմ ։ Փրութ խրճիթ մը չեմ սակայն, փլած տաճար մըն եմ աւելի եւ ինծի կու գայ որ չնդգնական տաճարներու ճոխութիւն կար

մէջս ։ Ինչ եւ է. ձգենք այս մեծամիտ որոտալստութիւնները ։»

Ն... Ես այս միտակ մարդուն (ԻՄ) եւ մտերացող աշխարհին ողբերգութիւնը կը գրեմ, պարտաւոր եմ եւ պէտք է գրեմ, պէտք է ժամանակ ունենամ եւ սր առաջ գրեմ ։ Կրնամ ։ Ասկէ մինչեւ Երեւան, մինչեւ Սմերթիկա եւ այլուր, այլուր՝ բոլոր գէշ մարդիկը կարծես արդէն զիմովիմ տա զիմովիմ, կենցաղ առ կենցաղ, արարք առ արարք կը տեսնեմ, կը պատմեմ, սեւեռած կեցած են Ներսէս, Խղճիտ պատմաբան վրայ ։ Պէտք է ասոնք ձախողին այլեւս, պէտք է յաջողի լաւը, ուղիղը, արժէքաւորը ։ Գրականօրէն պէտք է տիպարանան անհատական եւ հանրային գծումները ժողովուրդի աչքին եւ ժողովին ամէն տապաւնի դէպքերու, ուր անոնց գոյութիւնը փաստակար է ։ Գրողներուն դերը այս է ։ Ինչո՞ք յուսալ որ այս ազգը, մանաւանդ Սփիւռքի հաստատումով, գրականութեան նուիրական դերը կ'ըմբռնէ եւ գրագէտ կ'ապրենք, կը համարեմ այսուհետեւ աւանակութիւն ։ Ես ալ, գիտես, գրողի հերթական աւանակութեամբ մը նման յոյս մը ունեցայ ասկէ դեռ տարի մը առաջ ։ Մաշկ-սպանդէն դատ ոչինչ չկայ, աւելորդ է յուսալը ։ Դպրապետ, ժամկոչ, թաղականութիւն եւ գերեզմանատան յանձնարարութիւն սիրող մանր հաւաքականութիւն մնալու դատապարտւած ենք երեւի ։ Այն օրէն ասդին, երբ մեծով պատկերով (Աւելի մեծով քան պատկերով) սեւ լաթ կապած ենք մեր խղճին եւ արամաբանութեան աչքերուն՝ ազուր բաներ յուսալը կարելի է դժուարի ծէսերու կարգին դասել ։

«Դուք, ես, եւ բոլոր անոնք որոնք իրենք զիրենք ազգային նուիրական խանի մը ներկայացուցիչը կ'ընդունին՝ պէտք է հայուն սորվեցնենք տկար մարդ եւ առողջ պահել, ակին վրայ չըսկել, ակին վրայ գուրգուրալ եւ ոչ թէ ակին հեռու գտնուող ջուրերուն, ջրիկներուն, իսկ թաղականութիւն, քահանայ մը եւ ժամկոչ մը, եւ դպրապետ մը եւ անոնք մը, ակ չեն ազգային կեանք

քին մէջ, հեռաւոր տարի ջրիկ են մի-
այն: Ակերէն մէկը, մեծագոյնը՝ ազգին
քաղաքական իտէսյն ու անոր նիւթա-
կան ու բարոյական զոյգ գետններն են
(Հայրենիքը իր ամբողջական ստորագե-
լիներոյ): Ակերէն մէկը, մեծագոյննե-
րէն դարձեալ՝ մշակոյթն է իր բոլոր ե-
րեսներով եւ առաջին հերթին իր ստեղ-
ծած գրականութեամբ: Եկեղեցին ալ
մըն է, իր հազարաւոր տարիներէ աւելի
գոյութեամբ: Յիսուն տարիէն աւելի

(70 տարի) Դաշնակցութիւնը, աւելի
ճիշդ Դաշնակցականութիւնը՝ դադարա-
րական ամէնէն մաքուր ալն է այս ժո-
ղովուրդին: Մենք ասոնցմով պիտի դա-
դինք եւ պիտի դրադինք անհաւանդո-
րէն եւ ներքին կատաղի զօրութեամբ
մը: Ամօթ է ջրիկներու համար, ջրիկնե-
րու մէջ խեղդուիլը, մոխուիլ եւ սպա-
ռիլը: Վայել է հայուն, վայել է 20-րդ
դարուն:

Բ. Փ.


ԵՂՈՒԱՐԻ ՊՈՅԱՆՆ... Դարագոյն ճեւերու, յանգգնա-
քիւններու իր քափին մէջ արդէն անցած է Ափիւսիս գրական ան-
դաստանը, գլուխը առած, փնտռելու բան մը, զոր ինքն ալ չի գի-
տեր: Անշուշտ փնտռող մը միշտ աւելի կ'արժէ, քան պանդոյր մա-
կազուղը:

Ե. ՕՇԱԿԱՆ

ՇԱԽԱՐԵ ՄԻՍԱՔԵԱՆ

Ա Հ Ա Գ Ի Բ Գ Մ Ը

– Հող՝ եւ մարդիկ, հող՝ եւ հողի, հող՝ եւ ամէն բան...
Այսպէս կը սկսի դարնանալուն հատորի մը առաջին պատմած-
քը, – «Մեր Հողին կարօտով»:
Արդէն իսկ յատկանիշ մը՝ այդ մէկ հատիկ նախադասութիւնը, Մու-
սա-Լերան առաջնորդաւոր զանկի համար (եղ. Պօյաճեան):
Եւ ուրիշ գիծեր ու պատկերներ, նոյնքան ինքնուրոյն: Առոյշ եւ
Հասուն:
– Ծառ՝ եւ մարդիկ, ծառ՝ եւ հողի. ծառ՝ եւ անբոյս բաներ:
– Թմբուկ, եւ ի՛նչ. Թմբուկ՝ եւ ի՛նչ Թմբուկ եւ ի՛նչ...
– Վերջ՝ եւ ստուեր. վերջ՝ եւ հող. վերջ՝ եւ մնաք բարավ...
Երբեմն չափազանց բիրտ են բառերն ու նկարագրութիւնները: Դա-
ժան եւ թթու, ինչպէս ապերախտ Հողի մը մարդիկը:
Եւ սակայն, ամէնէն թանձրացեալ, կոպիտ բառին, տեսարանին առ-
ջեւ ալ, տաք սիրտ մըն է որ կը բարասի: Այդ մը պայծառ եւ սրտեռ:
Ամէնէն տկար տողերուն տակն ալ՝ ոչ միայն Մուսա-Լերան, այլեւ
ամբողջ մարդկութեան մը Հողին է որ կը սարսռայ:
Կարգացէջ որեւէ դուրս, – «Փոր Մկ»», «Ճունքը», «Պանդուխտ
Մէկը», «Այնճարի մէկ տղան», «Իր տետրակին մէջ», «Պարտկները»,
«Հրաշալի պանդուխտներ», եւ այլն: Ամենի Մուսա-Տաղն է ձեր առջեւ, իր
քարաժայռերով եւ պտուղներով, իր իմաստուն ծերունիներով եւ կտրիճ-
ներով, իր տուններով ու հողմբարձով:
Սորհուրդ եւ բարբառ՝ ամէնէն անշունչ իրերը: Նոյնիսկ ընտանի
անասունները, ինչպէս Հողն ու ծառը, Զուրն ու ծաղիկը:
Այս անիրաւ աշխարհը Լեռը – դարաւոր ծննդովայրն անզամ շատ
կը տեսնէ հայ շինականներուն համար:
Եւ առտու մը արմատախիլ, ցիրուցան բազմութիւնը իր ամբողջ
ծանրութեամբ կ'իջնայ տափարակ, ճախճախուտ դաշտագետնի մը վրայ:
Այնճար: Փլուզում:
– Անփական տունէն դուրս, բոլոր տուններն ու բոլոր ժամանակնե-
րը կեղծ են, ճամբաները սուտ, եղանակները շորսն ալ խափշիկ:
Եւ երբ տարագիրները իրարու հետ կը խօսին, կը թուի թէ Մաքսիմ
Կորբիէ ճախիկին մարդիկն են, հայկական դիմագծով:
... «Հողը» ոչ առաջինն է, եւ ոչ ալ վերջինը պիտի ըլլայ, իրրեւ
վկայարան Միջին Արեւելքի նոր սերունդին ստեղծագործութեանց:
Սերունդ մը, որ նախընտրեց իր ճակատագիրը կապել տարադիր
բազմութեանց փառքերուն եւ փոթորիկներուն հետ: Եւ ուզեց դառնալ
արտայայտիչ անոնց խոյանքին, խռովքին եւ իմաստութեան:
Սերունդ մը, որ միւսոն ունի ճակտին վրայ, որ ունի նայուածք եւ
լիզ, ինչպէս ոգի եւ լեզու: Ո՛ճ եւ արուեստ:
«Հողը»: Հողին օրհնութիւնն է, որ կը կայծկլտայ իրենց բերքուն
մէջ...



«Հողըն հակառակած եւրաշխարհ ժըն է. անորոշ ու չփոթ տրամադրութիւն ժը. ունի կենդանի ուն, ալլաբան երեւակայութիւն, կըբնատ լեզուի ժը ըզուտ ցտէրաութեանով: Բովանգրականութիւնը դրբին պատշաւաւ, որովհետեւ արբելու իրաւունքն անգամ չունեցող բացասական գիծերու ունի հերոսները կը բանան իրենց օրբտին կապարիշը, ցեղին հոսցող հաւատքն ու անշափելի տանջութիւնը հաստատելու համար: Անմահական աշ մէկ սեփականութիւն. ո՛չ ժողիւ, ո՛չ արցունք. ինչ որ կայ՝ ժողովուրդինն է, իր յաւ կամ պէշ կողմերով:

Պոյսնեան արժանի է ներկայի գնահատանքին. ազգայնիւր կընայ շատ աւելի մեծցընել իր տարողութիւնը: Մեր օրերու աճնէն ինքնատիպ ու հաւատարմաւ երիտասարդ դարձան է, որուն համար նիւթը կու գայ ժողովուրդէն, կը վերադառնայ ժողովուրդին ու միտմանակ գծուարժան զատակարարին:

1048

Ա. Ն

ՄԵՐ ՀՈՂԻՆ ԿԱՐՕՏՈՎ

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ)

Հող՝ եւ մարդիկ. հող՝ եւ հոգի. հող՝ եւ ամէն բան...

Մեր գիւղը մարմին մը սկէր եւ նաշխան գգեսոներ. հողի մը եւ խոնձուածքի ցայտուն գիծեր:

Մեանչիկ էր անոր մարմինը՝ իրրեւ մարմին, գգեստը՝ իրրեւ ըզգեստ, հողին՝ իրրեւ հոգի. ծայրէ-ծայր երիտասարդութիւն՝ - Մարմին՝-նը, ծայրէ-ծայր բարձրութիւն՝ - Մարմինը, ծայրէ-ծայր առողջութիւն, կենսայորդութիւն եւ երաշխի՝ - Մարմինը, նոյնիսկ երբ աշուն ըլլար, նոյնիսկ՝ երբ ծմնա:

•

Ծառ՝ եւ մարդիկ. ծառ՝ եւ հոգի. ծառ՝ եւ սա՛ւրք բաներ...

Մեր գիւղը անմահորէն անուշ գիւղ մըն էր. ամէն տեղ պարտէզ, ծառաստան, ծաղիկ, մարեմիներու քուփեր: Նարինջ՝ - ո՛վ կընար հաշուել. ճարտարք, ծիրան, յանձար՝ - իրենց ճիւղերը կոտորուելու չափ. եւ նաւ. ընկնող, խաղող, թուզ եւ դեղձ՝ - ուզածէդ անիւի, երեսակայածէդ շառ. գոյն բազազ, հաւաքող եւ ծախող ձեռքերը յոգնեցնող, ձանձրացնող, դժգոհեցնող: Եւ ամէն տեսակ պտուղ՝ իր տեսակ մը գոյնը, հոսը, ճառագայթը. վրան բաշումն ու ե՛րգը:



Վերջ՝ եւ ստուեր. վերջ՝ եւ հող. վերջ՝ եւ մնա՛ք բարով...:

Ամէն քան առատ էր մեր գիւղիկն մէջ. ամէն քան հեղեղ: Տուները՝ քարձրացած Աստուծոյ ամսպառ շտեմարաններուն քովն ի վեր կարծես: Օղիմ՝ հոն, ազանդերը՝ հոն, միւսը, ցորենի հացը, սլանիրն ու ձէթը՝ հոն: Պարէնի ամանները խոշոր կ'ըլլային այնտեղ. կարաս, տակառ, ամբարներ: Խիտ, խարունկ, առողջ կետմէ մը: Եւ մա'հը յետայ՝ որ աշխարհներ կը լեցնէ, կը ծածկէ տափաստաններ, անտառներ եւ անմատչելիօրէն քարձրաքերձ լեռնագագաթներ՝ բոլորներու այս կամայ հովիտին մէջ ունէր աւայն հագիւ ափ մը խորութիւն: Լեզի, գառն ու վերջնական չէր Մանն այնտեղ. տնեցի էր կարծես, կարծես քարեկամ մը, եղբայր մը. կրնայիր ամօր հետ երթալ մօտ, կամ հեռու՛, հեռու՛, շատ հեռու տեղեր. առանց կանկածելու վերադարձի մասին: Եւ իրաւ, օր մըն ալ կը տեսնէիր՝ մեռել մըն է վերադարձած գիւղ, տուն, մեռել մը. դուք չէ՛ք հաւատար տեղուշտ. բայց իրենց հայրենիքն. գիւղիկն, տունի՛ն մէջ ապրողները, եթէ պահ մը անդրադառնան ըսածին վրայ, պիտի չգարմանան ձեզի պէս ու պիտի հաւատան ինծի:

Կը մեռնէիր, եւ հայրենի գիւղիկ մէջ իսկ քաղաքացի. դուն՝ իրական մէջ, կ'ապրէիր. թիշղ է. հարկահաւաք քեզմէ քան մը չէր պահանջեր ա՛լ, թիշղ է. կտաւորութիւնը կը ջնջէր անունդ իր արձանագրութեան տաւարներուն մէջէն, թիշղ է թարէն. քէ դուն չէիր գար ա՛լ Սօսիկն տան, երթայիր արտ, եկեղեցի, ծաղովի. տնեցիներդ քեզ իրենց հաւրանէին չէին տակնցներ, ոչ ալ ընկերներդ. ոչ ալ դրացին, ոչ ալ թշնամին: Մեռելները կային ապրողներուն ցանկին, համբաճին եւ ընդհանուր գումարին մէջ: Տարի մը գիւղերէն քացակայող մը գտնէ աւելի՛ մեռած համարուէր, քան իսկապէ՛ս մեռած մը՝ ա՛յդ տարուան համար: Այսպէս. որովհետեւ ճակատագրական բախտախաղին մէջ կորսնցուցած էիր միայն մարմինդ, ուկորներդ. հագիղ վերցուցած էիր իր վրայէն զիմք ծածկող խորանիկ քողը՝ եղած էր աւելի տեսանելի, աւելի յստակ, մաքուր եւ ազդու. կեանքով աւելի լեցուն: Հայրենի հողը կը պարտադրէ ինչ մեռելները ապրելու, գործելու, ներկայ՝ ըլլալու: Հողը՝ — Ձեր մեռելներով ես ձեր գիւղը, տունն ու պատմութիւնը պիտի գործարեմ, — կ'ըսէր, — եւ այդ գործերը աւելի կենդանի, աւելի գեղեցիկ՝ պիտի թլլան, քան ձեր եւ աշխարհի բոլոր ապրողները, ու ձեր մեռելները պիտի ապրին ձեր ապրողներէն աւելի...:

Հայրենի մահը չէ մըն էր. կեանքը տեսա՛լ մը ապրելու ամէնէն գեղեցիկ եւ վսեմ օրերէն մին: Թող ամբողջ աշխարհը պահակ կամզնի հայրենի մեռելի մը նոր գողցուած գերեզմանին շուրջ. անօգուտ, անտուն՝ դուք բացուած պիտի գտնէ՛ք գերեզմանը. հայրենի հողը ճամբած պիտի ըլլայ իր մեռելը եւ հայրենի երկինքը գայն պահած ու պատրաստած: Մահացի՛ր հայրենիքդ, կոխկռտէ ամօր սահմանը, ինկիր օտար ափերու վրայ, եթէ որոշած ես վերջնականապէս ոչնչանալ: Մահը այնտեղ է, խորանիկ, անյատակ ջուրներով մահը:

Մեր գիւղը հայրենիքի մը սկիզբն էր: Հագարաւոր այդպէս գիւղեր. միլիոնաւոր այդպէս մարդիկ՝ եւ կեանքը կ'ըլլար ընդարձակ խաղավայր ու մահը, բոլոր մեծ քաներու մէջ աննշան գրասանք մը, այդ խաղավայրէն ներս. բայց՝

Վերջ՝ եւ ստուեր. վերջ՝ եւ հող. վերջ՝ եւ մնա՛ք բարով...

(«Հողը»)

Ե. Գ.

ԵԴՈՒԱՐԴ ՊՅԱՃԵԱՆ

Եղևարդ Պայանեանի գրական վաստակը մեծաքանակ գեղարուեստական հաջողութիւն ունի դարձաւ հայ ստեղծագործութեան անգլաստանին մէջ: Վերջին քանակ տարւան ընթացքին տարաբախտ գրագէտը անընդհատ գրեց ու ստեղծագործեց եւ եղաւ ամենէն ուշագրաւ քերական գրական հորիզոնին վրայ:

Դիմացի էջերէն «ԲԱԳԻՆՆԻ» ընթերցողները պիտի ծանօթանան իմ գաւառական, ոչոք գրական քանակ տարի առաջ ԱՅԻՆԱ ՇԱՐԱՐՈՐԻՆԱԿԻՆ մէջ, երբ Եղևարդ Պայանեան թոր երտաբանական էր ԱԼԻ ԵՒ ՎԻՇՏ քանակագրական փառքի գրքով: Այդ օրերուն կ'այնպէս կ'ընդունէր Շարար-օրիպիւն, գրելով արժեքաւոր պատմական ժողովրդական եւ խորհրդայն քանակագրական ժողովրդական:

Այն օրերուն, Վանական կարծիքս ունեց համար չափազանցութիւն թուեցաւ: Քանակ տարի յետոյ, այսօր, Եղևարդի վաւերական եւ խոր գրականութիւնը ընդհանրական գիտատարածքի արժանի դարձած է:

Անշուշտ գրագէտին գլխաւոր ստեղծագործութիւնները գրական եւ հեղինակութեան 1945-էն յետոյ: Որքան ծոխագաւ անոր գրականութիւնը, ա'յնքան անկի համագրեցայ իմ առաջին դասականներուն մէջ:

Եղևարդ Պայանեանի տիրույթ վախճանը մեծ կարգաւ մը եղաւ հայ գրականութեան համար, որովհետեւ տնտեսագործելու անհուն կիրք մը ունէր եւ անպակաս հոգեկան ծրարութիւն մըն էր: Անոր քանակագրական մեղմ տնտեսական ռուզի մը մասնակց գրական խորագրերէն: Աւ այսօր, երբ այս անգամ իր էջերը կը յատկացնէ բնական գրագէտին, որ այլեւս յիշատակ մը դարձած է, վստահ եմք թէ անոր արժանի թէ չափաւոր գրականութիւնը յաւելու հոգեկան անհոգեկան յաւելու գաւառի տնտեսական եւ անոր անկախութիւնը պիտի զգան ու ապրին իրար անմիջապէս որ հայ գրականութիւնը պիտի սիրեն:

«ԲԱԳԻՆՆԻ» այս քանակագրական թիւին մէջ մեր խորագրերէն ու տնտեսական կիցները Պայանեանի գրական ստեղծագործութիւնները կը վերլուծեն ու կը բնութագրեն ինքնաշարժական գրագէտին:

Իմ բնութագրերը ըրած եմ իմ անոր առաջ: Դիմացի էջերուն մէջ կը վերադառնա զանազան, հաստատելու համար, թէ Եղևարդ Պայանեանը մեծ գրագէտ մըն էր եւ թէ անկի իմ հաստատ կը մնամ իմ տնտեսական ծրարութեան վրայ, որոնք գրականութեան պատմական համար վկայութիւն մը կը հանդիսանան:

Կ. Ս.

Կ՛ՍԱՍՈՒՆԻ

ԳՐԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

«Ազգակ Շարաքօրեակ»
28 Դեկտեմբեր 1945

Պատմութեան անցնող տարրան ղոները կը փակենք Շարաքօրեակի այս թիւով: Պատեհրազմէն յետոյ եկող ժամանակաշրջան մը կը բացուի մեր Գրականութեան առջեւ: Պատմական մեծ դէպքեր, ազգային վերածնութեան յոյսեր ու խանդավառութիւններ, Հայրենի կարօտի բազմազունեան հեքիաթներ, տնտեսական ու քաղաքական վերիվաբումներ նոր դարաշրջան մը կը բանան ողջերու առջեւ, իսկ մեր ազգին հորիզոնը աւելի քան ծիածանաւոր է, քանի որ մշուշն ու լոյսը, անձրեւն ու արեւը իրարու կը յալորդեն մեր բարձունքներուն վրայ:

Պատմական այս սեմէն անդին՝ դաւիթ սերունդները կոչուած են նոր քան մը բերելու մեր Գրականութեան: Յետպատերազմեան նոր դրականութիւն մը՝ նոր ապրումներով, հոգեկան նոր թափանչարումով, նոր զգայնութեամբ:

Ի պարտականութենէ կատարուած տարեկան տեսութիւններուն մէջ շատ բան կը գրուի, միշտ նախորդ տարիներու սալարկուն ճանապարհներով, նոյն շեշտերով եւ ծածկմամբ որակումներով: Ու ինչ որ վրդովիչ է, անտաղանդ, բայց ռէքլամի ճարպիկութիւն ունեցողները ի պատուի են այդ էջերուն մէջ: Անշուշտ, անուշ պատիւ մը, ապա զոհացուցիչ անոնց համար, որ հոգի կուտան իրենց անուան յիշատակութիւնը տեսնելու:

Այս սիւնակին մէջ գրական այդ մթնոլորտի Հաշուեյարդարն ընելու մը տաղարութիւնը չունիմ: Ինչ որ զիտ կը մզէ, նոյնիսկ անհանգիստ կ'ընէ արձա-

կանդ մը հնչեցնելու, տարին դեռ չը փակուած, երիտասարդ գրագէտի մը անունն է, որ քանի մը տարիներէ ի վեր՝ փայլուն տաղանդով մը՝ մեր յետպատերազմեան քառորդ դարու վերջին տասնամեակը ուշադրաւ կը դարձնէ: Այս համոզման դալէս ի վեր, ուշադրութեամբ հետեւեցող մեր գրական շարժման եւ գնահատութիւններուն՝ ընդգրծած եւ վաւերական որակում մը տեսնելու այս արձակագիր եւ քանաստեղծ տաղանդին, սակայն գնահատութիւնները զտայ գաղջ ու սովորական, ինչպէս շատ յաճախ կը կիրարկուի սկսնակի մը համար, ապագայ ստեղծագործութիւններու յուսադրումով:

Անուն մը երբեմն, չըջանի մը գրականութիւնը կրնայ փրկել ուրացումէ:

Սուրիոյ եւ Լիբանանի գրականութիւնը այդ անունը ունի արդէն — Նոյնարդ Պոյաճեան:

Եւ որովհետեւ անձամբ իմ գնահատանքը յայտնած եմ այս տաղանդաւոր արձակագիրն եւ բանաստեղծին, հիմա ըսածներս կ'արձագանգեն այս առդերուն մէջ: Կր մտածեմ թէ գրականութիւնը ընդհանուրին պատկանող երեւոյթ մըն է, ու անոր գնահատութիւնն ալ պէտք է ըլլայ հրապարակով:

Արդ, Նոյնարդ Պոյաճեանի արձակ երկերը եթէ մէկտեղենք, երկուստուար հասոյրներէ աւելի կ'ըլլան: Ամսագրերու եւ շաբաթաթերթերու մէջ լոյս տեսած այդ ստեղծագործութիւնները մեր նոր գրականութեան ամէնէն ինքնայատուկ եւ գերազանցապէս արւեստով օծուն էջերը կը կազմեն: Խնջ

փոյթ, թէ Հեղինակը առկաւին մեծ հաստոյով մը չի ներկայանար մեզի: Ռ. Զարդարեան երկու տասնամեակ վաւերական գրապէտի անունն ունէր, առանց հասար մը ունենալու:

Այս տարի Եղուարդ Պոյաճեան լոյս ընծայեց «Սէր եւ Վիշնա» բանաստեղծութեան հատորը: Երբ շատերը կը քապասէին տեսնել անոր արձակ գրութեան, զիրքը, բանաստեղծութեան այս հատորիկը իսկական անակնկալ մը հաւ գրականութեամբ հետաքրքրուողներուն համար:

Եղուարդ Պոյաճեան խորունկ բանաստեղծի իր խառնուածքով ամբողջական գործ մը կուտայ՝ ինքնիրմով բանականացող եւ լեզուով, եւ ոճով, եւ հաղթականներու պատկերաւոր ու բարդ կառուցումներով: Երիտասարդ Հեղինակը այդ գրութեանով իսկ մեր նոր բանաստեղծութեան մէջ ինքնայատուկ բարձունք մը կը գրաւէր... առանց աղմուկի:

Եղուարդ Պոյաճեանի գրականութեան, որ հայ պիւրի մը անկիւնէն կ'երկարէր գէպի հայ թերթերը, երբեք չածին յատկութեամբ, լեզուի եւ ոճի ճոխութեամբ եւ հայեցի երակով, Սուրբիոյ եւ Լիբանանի մեծազանգուն հայութեան մէջ նոյն գերը կոչուած է կատարելու, ինչ որ Համաստեղը կատարեց Ամերիկահայ գրականութեան մէջ: Համաստեղի երեւումը կը գուզագիպի 1920-1930 թուականին, որմէ յետոյ ամերիկահայ գրականութիւնը լուրջ ու յաջողութեան կ'առնուի: Իսկ Պոյաճեանի գրականութիւնը կարելի է ըսել կը սկսի 1935-ին ու աւար 1945-ին վճիռով մը կը փակէ իր առաջին հանգրուանը: Միայն այս վերջին երկու տարիներուն Վեդդաի Եարաթօրեակցին մէջ անորադրած կտորները հատոր մը կը կազմեն: Հասար մը վաւերական գրականութեան:

Ի՞նչ է վաւերական գրականութիւնը եւ ո՞վ է վաւերական գրագէտը:

Ինչ որ կը փնտռուի այս որակումներուն տակ, լրիւ կերպով ունի Եղուարդ Պոյաճեանը:

Այս երիտասարդ գրագէտը ունի նիւթ եւ կառուցում: Նիւթերը տեսելու, ապրուած եւ հոգեկան խորութեան մը մէջ հալեցուած՝ կու գան դրսեւորուելու: Ու գրապէտ ճարտարագետը այդ նիւթէն արձան կը կերտէ իր ոճով եւ ճկուն լեզուով: Ոճ եւ լեզու միաձուլուած կը տեսնենք այս Հեղինակին քով: Ոճը լեզու է, եւ լեզուն՝ ոճ: Ու պէտք է ըսել թէ այս երկու լաւագոյն յատկութիւնները Հեղինակին ձեռքին մէջ ճկուն գործիքներ դարձած են իր կառուցումներուն համար: Ու երբ աւելցնենք հոգեկան խորութիւնը որ յայտ կուգայ թէ՛ արձակ եւ թէ՛ բանաստեղծական գրութեանը մէջ, կ'ունենանք ամբողջական պատկերը վաւերական գրագէտի մը:

Վաւերական է այն գրագէտը, որ տաղանդն ունի հում նիւթէն բարախուն կեանք մը կ'երտելու, ապրումի մը վերածելու եւ մեզ նոր գլախտութեան մը առջեւ դնելու: Ու այս բոլորը՝ իր ոճով եւ լեզուով, հոգեկան խորութեամբ եւ երեւակայութեամբ:

Մեր գրականութիւնը թոյլատու է աղմուկով ու ուշադրով անուններ լողալողեցնելու եւ բարձր պատուանդաններու վրայ դնելու: Սակայն գրականութիւնը իր վաւերականութիւնը կրնայ ապահովել միայն ու միայն գեղարուեստական արժէք ներկայացնող երկերով: Երկն է, ստեղծագործութիւնն է, որ կրնայ շարժել Հեղինակի մը վաւերական անունը: Այլապէս, տարիներ յետոյ, երբ ուշադրը դադրի, մեծահնչիւն անունն ալ կը դադրի արձագանգելէ:

Եղուարդ Պոյաճեան ուշադրաւ գրագէտ մըն է մեր այս երկու մեծ գաղութներու Հորիզոնին վրայ, ու կրնայ իր գիւղական շարունակելով ճակատաբաց քաւի Փարիզի եւ Ամերիկայի մէջ անուն շինած լաւագոյններու կողքին:

Առանց մանրամասն քննութեան, այս համարձակ վճիռով կը փակեմ 1945-ի տարին, գրական արձագանգ մը հասցնելով գրաւէր ընթերցողներուն:

Կ. Ս.

« Հ Ո Ղ Ը »

«Ազգակ Շաքաթօրեակ»
19 Նոյեմբեր 1948

Երկու ամիս առաջ լույս տեսաւ Եղ. Պոյաճեանի «Հողը», երկտասարդ եւ տաղանդաւոր գրադէտի պատճառաւ ճանաչուաւ եւ պատկերներու գեղեցիկ փունջը՝ մատուցուած գրասէր հասարակութեան:

Հայ գրողներու միութիւնը գեղեցիկ մտածումն ունեցած է իր հրատարակութեան առաջին հատորն ընելու Եղ. Պոյաճեանի արձակներու այս հաւաքածոն, վստահ՝ թէ մեր գեղարուեստական գրականութեան զանազանին մէջ արժեքաւոր դոճար մը կ'աւելցնէ: Այս պատճառով կատարած վկայութիւնը եւ շատ տարիներ յետոյ դաւիթ սերունդներու գնահատական վկայութիւնները ցոյց պիտի տան, թէ Գրողներու Միութիւնը սխալած չէ իր գնահատանքին մէջ:

Իրօ՛ք, ուշագրաւ երեւոյթ մըն է Եղ. Պոյաճեանի արձակը մեր օրերու գրականութեան մէջ, ինքնաշատուկ իր ոճով եւ լեզուով, կառուցումով ու խորքով, որոնք լիութեան մը, կատարելութեան կնիքը կը կրեն: Եւ այս կատարելութիւնը նշմարելի է գրեթէ իր առաջին գրուածքներէն սկսած: Հաստատում մը որ կը նշանակէ, թէ Եղ. Պոյաճեան բնածին խառնուածք ունի, աստուածատուր այն շնորհքէն, որ անհրաժեշտ աւելն է գեղարուեստական ստեղծագործութիւններուն:

«Հողը» նոր եւ արժեքաւոր նշանակէտ մըն է մեր գրականութեան մէջ, ճիշդ: Նման Համաստեղի «Գիւղը» հատորին, որ գլխաւորը չէր մեր վերջին 30 տարուան գրականութեան ամէ-

նէն սիրուած գրադէտին: Ինչպէս «Գիւղը» Համաստեղին, նոյնպէս «Հողը» Եղ. Պոյաճեանի վաւերական արձակագրի գրական դէմքը կը պարտադրէ Սփիւռքի գրականութեան շարժման եւ նոր հանգրուանի մը կը ստեղծէ մեր արձակ գրականութեան համար, որպէս լեզու եւ ոճ եւ մանաւանդ որպէս կառուցում, որ գեղարուեստական ձեւը խորքին հետ ձուլուած, կուտ ու տարողական կը ներկայանայ մեզ:

Երբ ասկէ երկու տարի առաջ Եղ. Պոյաճեան հրատարակեց իր բանաստեղծութեան առաջին հատորը, «Սէր եւ Վիրտ» վերնագրով, ժամանակին չուշտեայ իմ անվերապահ գնահատանքն ընելու այս նոր բանաստեղծին, միեւնոյն ժամանակ շնորհով թէ այս բանաստեղծը շատ աւելի ուշագրաւ արձակագիր մըն է:

Ուրախ եմ, որ այսօր Եղ. Պոյաճեան իր արձակներու մէկ մասը «Հողը» հատորով արդէն հրապարակ դրած է: Այս ուրախութիւնը նոյնիսկ կ'ուզեմ պոռալ, որպէսզի, եթէ անտարբերներ կան, քիչ մը արթնութեամբ եւ աշխոյժով մօտենան այս գրքին ու կարդան անպայման՝ յանուն հոգեկան վայելքներու: Որպէս գրական արժէք, «Հողը» շատ ալ չի կարողիւր գովեստի հռչակման. ժամանակը ճշմարիտ ստեղծագործութիւնները կը փնտռէ եւ կը գտնէ: Ինչ որ ես կ'ուզեմ հասկցնել գրասէր ընթերցողներուն, այն է՝ որ գրական վաթիւք մը ըմբռնեն ճիշդ ատենին:

Եղ. Պոյաճեանի «Հողը» կը պարու-

նակէ 15 պատմութեանքն եւ պատկերներ: Ամէն մէկ գրութեան մասին կարելի է գրախօսական մը նուիրել եւ քնննութեան առնել անոր խորքը, կառուցումը, պնդարուեստական յատկանքները եւ միտք բանին: Բայց ես պիտի մտնանք միայն քանի մը հիմնական երեւոյթներ, որոնք այս գրականութեանը կ'ընեն ուշադրաւ եւ արժէք են գրական ստեղծագործութեան կալուածին մէջ:

Նախ պարտք կը զգամ նախազգուշացնել ընթերցողը այն առաջին ապաւորութենէն, որ պիտի ստանայ արագ թղթատող մը: Եղ. Պօյաճեանի 15 պատմութեանքը, ոչ միայն «Հողը» անունը կը կրեն, այլ եւ ենթաՀող ունին ձէպէլ-Մուսայի գիւղաշխարհը, յետոյ Այնճարը, որպէս նոյն ժողովուրդի փոխադրական: Հայ գիւղը, Հայրենի լեռները, այդինքն ու քաղաքաբնակ արտերը, մարդիկ իրենց ամբողջական կեանքով, բարեքրով, անհատական եւ Հաւաքական ապրումներով աստղծը կը կազմեն Պօյաճեանի ստեղծագործութեան: Տեղաշարժում եւ տարագիր այդ բաղադրիչները Այնճարն է հիմա, ու կը մնայ նոյն ձէպէլ-Մուսային, Հայրենի կարօտով, տենդաւար բնութեան ու Հողի խորունկ ու անդամանելի կարօտախառով մը: Որով՝ առաջին Հայեացքէն դիւղի գրականութիւն մը (սովորական ու անիմաստ դարձուածք մը) կը շարժուի, մանաւանդ նոյն տեղը եւ նոյն մարդիկ:

Այս երեւոյթը սակայն միայն արտաքին կեղեւ մըն է: Ներս պէտք է թափանցել եւ այն աստիճանը ընթերցում մը մեղի պիտի բերէ բազմաթիւ ապաւորութիւններ ու թելադրութիւններ, որոնք ամբողջ աշխարհ մը պիտի բանան մեր գաղափարական հորիզոններուն:

Այդ պարագային պիտի կրնանք հաստատել, թէ հեղինակը իր սահմանափակ շրջանակէն դիտած է Հայ մարդուն կեանքը իր տիպերուն եւ անոնց արտայայտութիւններուն մէջ, ու գրութեանը

ընդգրկած է Համազգային մեր ոգին, մեր նկարագիրը, մեր լաւն ու վատը, մեր ամբողջական կարօտը: Որով՝ իր «Դանին», «Այնճարի մէկ տղան», «19-Էրբորդը», «Նկար Դուկասը», եւ մնացեալները բոլորն ալ խիստ ուշադրաւ են իրենց իրական շրջագծին մէջ, Հարազատ միջավայրի, բարքի եւ նկարագրի կատարաւ իրապաշտութեամբ նկարուած, ինքնին արժէքաւոր այդ Հայաստանի շրջով իսկ, սակայն դիւրութեամբ մենք կ'անցնինք այդ նեղ շրջագծէն եւ կը տեսնենք Համահայկական նկարագրի, բաղադրանքներու, կիրքերու, աստիճանութեան եւ անկումի ընդհանրական յատկանքներ՝ դունազեղ ձեւով կարկառուած:

Այս գաղափարական որպէս եզրակացութիւն՝ կարող ենք ըսել, թէ Եղ. Պօյաճեանի գրական ստեղծագործութիւնը տեղական գոնաւորութեամբ՝ Համահայկական խորք ունի:

Մեր Հողին կարօտով գրութեանք մեզ ձէպէլ-Մուսային կը տանի շատ հեռուն, ամբողջ Հայաստանի կարօտը, Հողի, Գողի, Երկնակարգաւ լեռներու, Հայ մարդոց կեանքի բոլոր քաղցր երեւոյթներու ապրումը կը Համակէ ձեռք: Նոյն ընդհանրացումը տիպերու, գրութեաններու եւ բազմաթիւ արարքներու մէջ անմիջապէս մեր կրած տպաւորութիւններէն կրնանք եզրակացնել:

Այս երեւոյթը տեղական արժէք մը կու տայ Եղ. Պօյաճեանի գրութեանը, որովհետեւ այսօր եւ ապագային՝ ամէն Հայ երբ կարգայ անոր պատմութեանը, իրմէ ալ մասնիկ մը, բաղադրանք մը, կարօտ մը պիտի դնեն անոնց մէջ, կամ իր տեսած ու հաստատած Հայ նկարագրին եւ ոգիին պիտի հանդիպէ զէնդիտէն էջերուն վրայ:

Անկի խորը քննադատութիւն մը, մանրակրկիտ մէջբերումներով, պիտի կրնայ հաստատել Համամարդկային տարրը Եղ. Պօյաճեանի գրականութեան մէջ: Մարդը իր հոգիին ներքին ծալքերով, իր բնածին փիլիսոփայութեամբ:

իր արտաբերութեան ներքին գործունէութիւնը թափանցուած է հեղինակի կողմէ, եւ այս թափանցումը լատ սուր նայուածքի մը արդիւնքն է։ Դիտող ու թափանցող հեղինակ մըն է երիտասարդ գրադէտը, որ բազմազան բաւելիներէն, հոգեկան եւ իրական երեւոյթներէն գիտէ յափըլտակել նկարագրի մէկ դիմը, որ ըլլալով Այնճարցիի նկարագրի, կը դառնայ հայկական, աւելին՝ կը դառնայ մարդկային։

Իրաւ, Հարազատ եւ ներաշխարհով հարուստ գրականութիւն մըն է Եդ. Պոյաճեանի արձակը։

Այս քանի մը յատկանիւնները որ մենք ընդգծեցինք, բաւական են որակելու «Հողը» հեղինակի գրականութիւնը թէ՛ որպէս արժէք եւ թէ՛ որպէս այլազանութիւն։

Թէեւ սկիզբն ըսինք, բայց կրկնենք աւելի հիմնադրելու մեր մտքին մէջ թէ՛ այս բոլորը գեղարուեստական մնայուն տարագ մը ունին Եդ. Պոյաճեանի գեղեցիկ, կուռ եւ ոճաւոր լեզուին

շնորհիւ։ Ու այդ լեզուն եւ ոճը ինքնաշատուկ, միայն իր հեղինակի հոգեկան կաղձախօսութենէն կը բխին։

Անշուշտ կան քանի մը աննշան թեւութիւններ, որոնք հեղինակի ուշադրութենէն չեն վրիպած եւ իր ճաշակն իսկ իրեն պիտի թելադրէ անոնց սրբագրութեամբ։ Ինչպէս օրինակ պատկերներու կրկնութիւնը, որ կը տկարացնէ առաջին պատկերի ամբողջական տպաւորութիւնը։ Բառերէ կազմուած կարճ նախադասութիւններ յաճախ յաջորդ, բայց երբեմն անյաջող ու անտեղի։ Այս քանի մը հազիւ նշմարելի թերութիւնները կրնան չյիշուիլ։

Եդ. Պոյաճեանի «Հողը» մեր վերջին տասնամեայ արձակ գրականութեան փայլուն յաջողութիւնը կը վաւերացրէ, եւ իր գրական ոգիով, առողջ ճկուն եւ հարուստ լեզուով հայ գրականութեան մայր ծառին վրայ՝ նոր պտղաբեր եւ բարձրունիչ ճիւղ մը կ'աւելցնէ։

Կ. ՍԱՍՈՒՆԻ



ԵՂՈՒԱՐԳ ՊՅԱՆՔԱՆ
(ԿՑՈՐԳ ԿԷՏԵՐ)

ՆՇԱՆ ՊԵՇԻԿՅԱՆՆԵԱՆ

Վերջերս, առաւօտները, սկսած եմ
վախով բանալ «Թառաջ» օրաթերթը:

Պատճառը իրերայաջորդ տխրունի-
ներն են. մահազոյժները՝ զրոգներու,
գործիչներու եւ ուսուցիչներու (որոնք
յաջորդներ չունին Սփիւռքի մէջ):

Ամէն մէկ մահուան մօթ՝ առաւելա-
պէս կը տպաւորէ հիւանդները: Թանախ
շարաթներով, արթուն թէ երտգի մէջ,
մարդ կը միանայ, կը մտերմանայ մեռ-
նողին հետ, ու կը տուայտի...

Կը յիշեմ Սղիա Տէմիրճիպաշեանի
եղերական սա տողերը.

— Ամէն մեռել զիս իրեն հետ կը քաղէ.
Իբր շղջ կու լամ, իբրեւ մեռել

կ'որդնադիմ...
Երկնաւորիմ ես ի՞նչ արդեօք

կը պարտիմ,
Որ այն անուր տանջանաց զիս

կը մատնէ...

Բոլոր անոնք, որոնք մենէ ընդմիջտ
հեռացան, մեզ դրին կրակներու մէջ
կսկիծի:

Պը կարծեմ որ վերջին շարքէն ամէ-
նէն կսկծալի, ամէնէն վաղատմ, ամէ-
նէն ցաւալի մահը նդուարդ Պոյաճեա-
նինն է, որովհետեւ դեռ իրմէ կը սպառ-
ւէր նոր հունձքեր, առատ ու ազնիւ:

Մահը՝ որ յանախ շարադործ մըն է
ու քիչ անգամ փրկագործ, անսահմա-
նելի դաժանութեամբ յարձակեցաւ տա-
րաբախտ նդուարդին վրայ, ու դործեց
բազում շարիք: Թողուց Հայունի մը
այրի, գաւակներ՝ որք, ընկերներ, քա-
րեկամներ ու համակիրներ՝ ազանար: Եւ
Այնճարցիները կրակուած կսկիծով:
Քից մարդը, հայը, ուսուցիչը, բայց
մանաւանդ զրադէտը տաղանդալի:

Անտարակոյս, Պէյրուքի մէջ, ինչ-
պէս ամենուրեք, զրասէրներու բազմու-
թիւն մը կայ, ոգացող նդուարդին մահը:

Բայց բոլոր այդ կսկծահարներուն
մէջ, կայ մէկը, որ «աւելի քան մի աղ-
գական» է, աւելի քան զբնիկայր է, ա-
ւելի քան զործակից է. հոգեկից Պօղոս
Սնուպեանն է ան, մտաւոր եղբայրու-
թեամբ ընդելուզուած սիրելի սղբացեա-
լին:

Այս աշխարհի տրտում առիթով, կ'ողջանայի Պօղոսը, անգոր ցաւակցութեամբ անմարտութեամբ, ողորդուած Հոգիով ու աշխարհով՝ կը համբուրեմ:

Եւ արցունք ու լաութիւն, ու լուսթիւն եւ արցունք...

Տակաւին դովք, աղօթք, խունկ ու ծոծ...

Լաութիւն...

❖

Պէյրուսի Հասնէլէն (1961-ի սկիզբը) կարծեմ երկու օր ետքը, առաւօտ մը, պանգոկի սրահին մէջ այցելութիւնը ընդունեցի երկու անբաժանելի Սուէ-տիացիներուն, Մնայեանին ու Պօյաճեանին: Եկած էին բարի գայուստ մաղթելու, յայտնելու իրենց ինքնակցութիւնը Լիբանան ժամանելու առթիւ:

Այս երկու աւելի քան զբնիկայրները կը անսնէի անձամբ առաջին անգամ՝ ըլլալով, Մնայեանին հետ թղթակցած էի. իսկ Պօյաճեանին հետ, առիթը չէր ներկայացած նամակագրութիւնով իսկ փոխանակելու երկու խօսք:

Մնայեանը գոյալ այնպէս՝ ինչպէս կ'երեւակայէի. մարդամօտ, մտերմացող, հաղորդական, հրաշունչ: Իսկ Պօյաճեանը նման չէր երեւակայածիս: Իր զրականութեան ազդեցութեամբ, զինքը կ'երեւակայէի հասակաւոր, փոթորկուն չունչ նկարով ու նկարագրով բուն ու բիրտ արուեստագէտ մը:

Սյուպէս չէր: Կը յուսայի ծով մը տեսնել, երբ տեսայ լճակ մը հանդարտ ու տրտում: Ու խոր, թաղուած թախիժ մը իր էութեան մէջ:

Կարծէք որոշ անորոշութեամբ ակուսակ էր իր ճակատագրին:

Կարծէք կեանքի պայքարին մէջ, անտեսանելի զօրութենէ մը վարժուած էր, ու անկարող պայքարելու, քէն ըրած էր...

Կ'ուզէր ըլլալ, ճամբորդելու ի վիճակի: Հաղարար, բիրաւոր, միլիոններ իմարներ կը տեսնէին հին ու նոր աշխարհներէ: Միշտ զփայտները ժառանգաւորները, ընտրեալներն էին:

Աշխարհի վրայ լաբեր քաշուած են: Անոնց վրայ խաղալու համար կամ պէտք է ըլլալ լաբախազաց կամ բախտաւոր:

Տաղանդաւոր տառապողներուն համար ունէր հիացում եւ համակրանք:

Երբ խօսք կ'ըլլար հայ դրողին արգելքներուն ու զրկանքներուն մասին, նշուարդ թէ եւ չէր խօսեր, սակայն խօսուն կը դառնար իր արտայայտութիւնը:

Չէր կրցած եւրոպայ երթալ իրրիւ ուսանող. գոնէ եւրոպայ երթար իրրիւ, այցելող...

Իր խորհուրդներու խորքին մէջ թաղուած բաներ ունէր...

Կ'արժէ քննել իր հրատարակուած լուսանկարին մէջ իր նայուածքը. այնտեղ է ցոյցացում նշուարդին հոգիին:

Այնտեղ՝ իր աչքերուն մէջ: Լուս ու տրեմարբատ. արտայայտութիւն. դառնութիւն, տխրութիւն, թախիժ, բողբոջ, արհամարհանք, քէն ու աշխուշութիւն:

Արուեստական արտայայտութիւն մը չէ այլ հոգիւրիւ, հարազատ պատկեր:

❖

Պէյրուսի մէջ, քանիցս եղանք միասին հանդէսներու եւ հացկերոյթներու մէջ:

Ինչ էր որ էլըէֆէի հանդէսին (կադմակերպուած Համազգայինի մասնաճիւղին կողմէ), խօսեցաւ զրականութեան մասին: (Ինչպէս Պէյրուսի մէջ զրականութեան մասին խօսեցաւ Մուշեղ Իշխանը, իսկ Պուրճ Համուտի մէջ՝ Պօղոս Մնայեանը):

Եղուարդ, տաղանդաւոր այս զբնիկայրը, միւսերուն նման, հիւսեց դնահատական դեղօն մը: (Թող թող արուի այստեղ ըսել որ տաղանդաւորներն են որոնք գիտեն դնահատել տաղանդը, իսկ անտաղանդները տեսակ մը մախաբոս վրէժխնդրութիւն ունին տաղանդաւորին հանդէպ, ու ճախաւեր նշանադրութեամբ կ'արժակեն թունաւոր նետեր: Իրենց եղկելի վրէժխնդրութեամբ կը վիրաւորեն միայն իրենց զիրենք):



Այն Արար 1961: Ն. Պէշիկ-աշիբեան եւ Եդ. Պոյանեան շրջապատում
խումբ մը երիտասարդներով

Եղուարդին հետ միասին եղանք այլ
տոբիներով ալ, թէ՛ Պէշիկ-աշիբեան, թէ՛
Էֆսթրա մուրա:

Մինչեւ Պէշիկ-աշիբեան պալատը ու
անկէ անդին հեքիմագեղ գիւղերը, Ս.
Նշան վարժարանի խմբերգող ուսուց-
չուհիներով եւ ուսուցիչներով, որոնցմէ
էր Եղուարդը: Այդ դրօսապատյալը, ար-
մակուրդի առթիւ, կազմակերպուած էր
Ս. Նշանի անօրէն Յակոբ Իսկէնտէրեանի
կողմէ:

Բայց մանաւանդ վերապրումով կը
յիշեմ Այն Արարը...

Երբ որ էր այն, ի՞նչ արար...

Օրն էր Կիրակի. կրկնապէս Կիրակի:

Այնտեղ սարքուած էր ճաշկերպի
մը, ի պատիւ այս տղերքը դրողին:

Կազմակերպողն էր՝ Կազմակերպ-
չու մասնագէտ Պողոս Սնապեանը: Բանի
մը նուիրեալներ ալ իրեն անկից:

Առաւօտուն կառերու կարաւաններ
ուղղուած էին դէպի Այն Արար: Գրա-

սէրներու մեծ, ընտիր, Լրկսեռ խումբ
մը ակմբուած էր լիբանանեան լուսադեղ
բնութեան մէջ բացուած այդ օթեակին
մէջ, որ ունէր հաստատութիւն մը ճա-
շարան-ըմպելարանի:

Օթեակ՝ կարծէք կախօրրանի մէջ:

Սրահ, սեղան, սեղանակիցներ ու
սրարբեցութիւն:

Եղուարդին հետ յաճախ դառնեցայ
քով ջովի:

Ողջ օր մը խանդավառութեան, ապ-
րումի:

Հակառակ Յունուարի վերջը բլլա-
լուն, գարնանամուտ էր գրեթէ:

Ամէն տեսանկիւնէ դիտուած՝ օր
մըն էր հիանալի: Այն օրերէն, որոնցմէ
հապիւ քանի մը հատ կրնայ ունենալ
մարդ, իր կեանքի ընթացքին, եթէ
Բախալը թարեհածի:

Բիշ անգամ հաւաքոյթ մը կ'ըլլայ
ներկանկուած այգեան՝ քարութեամբ
ու բարձրութիւնով, երբ խամբին մէջ

չին պտնուէր փոս ընթ արաբածներ:

Գոհունակութիւնը զագաթ մը Հանած էր կռնականները: Լոյսը կը յորդէր բնութենէն ու արտերէն:

Հոգի կշտացնող օր մըն էր: Ինչմփերը զեղապարդուած էին ժպիտներով, որոնց արժաստները կը գտնուէին ներքին խորութիւններու մէջ:

Ակմբում մը գրողներու եւ գրասէրներու, որոնց սուրբ օէրը հանդէպ հայ մշակոյթին կը տրոփէր:

Կը կարդայի Եղուարդին հոգին: Եւ կ'ընէի ակնարկութիւններ: Յաճախ լուռ էր: Կը կարդայի իր լուսնին ալ:

Բարբախտաբար, գուշակ շէի կարգաւում համար նաեւ իր դժիւբ՝ ճակատապիւրը, հինգ տարի ետքը, իր մահը ամբողջովին անսպասելի:

Այդ անմահական օրը, ո՞ր մարդարէին մտքէն մահը պիտի անցնէր ունէ մէկուն:

Երբ մանաւանդ ետանդուն ուղերձներու, կենացներու, երգերու, արտասանութիւններու, նուագներու շատըրուաններ կը շառաչէին... Ո՞վ պիտի կըրնար կանխասացութիւն մը ընել՝ անհունօրէն կակծալի...

Թէեւ ամպեր մնացած էին հողիններու մէջ (մենք մեր ամպերը միասին կ'իտանինք ամենուրեք, կարծէք զեղապարդելու համար արշալոյսներն ու վերջնալոյսները), սակայն, շէշող շատրուաններով հարուստ այդ Կիրակին, ամպերը ցրուած էին ի վերջոյ: Եւ խինդն ու խենթութիւնը ծաւալած ու ծովացած էին:

Գոհունակութիւնը բազմական էր Եղուարդի մէջ, տեսնելով որ երէց գըրչեպալը մը կը պատուեն խօսքերով ու արարքներով համակրութեան եւ հիացումի:

Սա պահուած, հրեւակայութեան մէջ կը վերարտադրուի երկար սեղանը, տունն մէջ կեդրոնական դէմքը ալ եւ չեմ, այլ Եղուարդը իր եղբայրական, իր հագեւոր, իր նուիրական ներկայութեամբ: Զամբարդը ե՛ս էի. ինք եղաւ բուն ճանա-

պարհորդը: Հիւրը ե՛ս էի. բայց Հիւրը Եղուարդն է եղեր:

Անպիտակ ճակատադրին վճռին, ըմպեցինք ճաշակելով ու արեցցանք կըրկատկի: Խէհեւ այդ օր կարեւր էր արբենալ առանց պուս մը ըմպելի: Որովհետեւ, բացուած էին ակերը ներքին նեկտարներու, որովհետեւ օր էր գրական պատարադի, որովհետեւ բազմականները կը համբարգէին: Եւ որովհետեւ Կիրակին գրական տօնական էր, քերթըններու շնորհակալութեամբ:

(Ինչպէս չի լինի այն շնորհագող Արմենուհին-Սթ. Շաքէ Թոքաթլեանը, որ արտասանեց կտոր մը ինձմէ - զՓառք Արմենական Հանճարինը, այնքան ուրախացաւ փառաբանութեամբ, ձայնի, սեւի, յուզումի, շնչերու, ելեւէջներու այնքան ինքնակ, հաղորդական արուեստով ներքին, որ լեցուց աչքերս):

Տեսայ խոսովահար գէմքը Անոր, որ ալ մեր մէջ չէ, կամ միայն մեր մէջն է: Այն ի՞նչ Կիրակի էր... Եթէ անգամ երանելի՝ Կիրակի:

Եւ արդ սեւ մուր ամպեր... Հաղար ու հաղար արտո՞ւ...

Կեանքի մէջ ամէն ինչ վախճանաւոր է: Վերջին վախճանը մահն է: Երբեմն անողորմաբար վաղահաս: Երբ բարձրարժէքին դիմուն իջած է, նման սեւ կայծակի: Եւ ատոր համար իսկ խորապէս կակծալի:

Այն Արար...

Տիրատուր տեսիլ մը Կիրակնօրեայ... Արդ տրամութիւն տեսական...

Այդ Կիրակին եղած էր օր ժպիտի ու արցունքի: Երանութեան ժպիտի ու երջանկութեան արցունքի:

Ժպիտները արդ եղած են արժատախիլ, իսկ արցունքները ցամաք են:

Հիմա, տարբեր տարբեր խաչերու տակ կը ջրտնինք:

Այն Արար... Եղուարդ... Պօղոս... Եւ հոյլը սիրելի... Դրախտ կորուսեալ...:

Այն Արար... Գլուխ մը մեր կենսապրութեան մէջ... Գլուխ մը ասպրումի եւ արտասանքի...



1964: Նդ. Պոյանեան, Կ. Սատուհի եւ Պ. Սնայան

Իր կարճ կեանքի ընթացքին (կէս դար առաջ, յիսունը եթէ երկար կեանք չէր, կարճ ալ չէր համարուեր. բայց մեր օրերուն, յիսունը կարճ է) Եղուարդ բախտաւորութիւնը ունեցաւ, իբրեւ դրող, շմաշաւ պատն երեսի, մեկուսի: Ունեցաւ շրջանակ: Ունեցաւ, ընդունած գրչեղբայրէ մը պատ, գրչահայր մը, որ գնահատութեամբ. ու գուրգուրանքով փարած էր իրեն: Կարօ Սատուհին է ահ, որ հօր մը պէս գոհունակութիւն կը պար, երբ մէկը ներքողէր Եղուարդը: Աւ երկու Սուէտիացիները ընտրած էր, իբրեւ անմիջական խմբագիր «Բազմիկ»:

Եւ ահա թէ ի՞նչ կը դրէ Սատուհի-

- «Մեզմէ յաւէա կը բաժնուի փոթորկալի բանաստեղծը, որ ծնած էր ձէպէ-Մուսայի ժայռերէն: Այդ երկրին հրաբխային դալարումներով զարբնուած էր անոր հոգին եւ սիրտը, որ անշունչ կը

մարի, այնքան կրակ ու բոց ժայթքելէ յետոյ:

«Եղուարդ Պոյանեան, բանաստեղծը խորհուրդներու, մտածումներու, վիշակ ու յուզական ապրումներու, կայծակնացայտ ամպամբրիկ մը եղաւ սփիւռքահայ գրականութեան հորիզոնին վրայ:

«Բանաստեղծ ու մտածող՝ զգուհ ու ըմբոստ իր ներաշխարհը հորիզոնէն երբեմն ոտկեզօծ շառագունումներով, երբեմն ալ թուխ պայքրով ծանրացաւ մեր հողիին վրայ, Խոսիքի եւ յուզումի մատնեց իր ընթերցողները, որոնք քալեցին այդ հեղինակին հետ, ու մտածման գալարումներու մէջ մնացին, երբ հեղինակուած դիրքը շատոնց մէկ կողմ նետուած էր:

«Լաւագոյն յիշատակներ կ'արթննան մէջս, բաժանման այս պահուն, երբ վերադարձով կը յիշեմ բանաստեղծի եռանդուն աշխատակցութիւնները «Ազգակ Շաբաթօրեակ»ին, Ստեղծագործ

անսպառ աղբիւրի մը պէս, Եղուարդ Պօլսոնեանի բանաստեղծութիւններն ու պատմութեանը կը զարգարէին սրտական աշխատանքներէն կ'ընէր, մեծ ու վաւերական գրագէտի մը յայտնութիւնը բերելով մեզի:

Իսկ Եղուարդի շնորհաւորեալ գրչեղբայրը, Պօղոս Սնակեան կը գրէ.

«Ճանապարհ չէր, գրողութեան ճիւղ, մտածող, ու արտայայտանքներէն չէր. էր աշխարհը ամէնուն համար, բայց աշխարհը չէր տարբեր բան մը կար, որ ինքի կը պատկանէր, թերեւս միայն ինքի. մտերմութիւնը էր, եղբայրութիւնը: Ասոր համար էր արդեօք, կեանքիդ վերջին երկու ամիսներուն, երբ իմացայ հիւանդութեանը անողորմութիւնը, սկսած փախուստ տալ եւ ինքի չէր ուզեր հողիւն հետ առանձին մնալ, որովհետեւ հողիւն հետ առանձին ըլլալ կը նշանակէր առանձին չըլլալ, հետք ըլլալ, ու հետք ըլլալը ահաւոր էր այս երկու ամիսներուն: Մենք այլեւս նոյն ձեռքով չէինք ապրել, մաշող տառապանք մը կար քու դէմքիդ, դիմակ մը կար իմ դէմքիս, պաղատանք մը կար քեզիդ, մէջ, անգործութեան ահաւոր դիտարկողութեան մը՝ իմ մէջ, ու կը ջանայի փախուստ տալ եւ ինքի կ'երկու հարկադրանքէն, անգործութեան զգացումէն:

«Բայց կարելի՞ էր միթէ այդ փախուստը: Միւր կրնայի երթալ ու առանձին մնալ, ինքի ինքն մոռնալ: Բոլոր գիրքերը քու ներկայութիւնը կը յուշէին, բարեկամներս աչքերուս մէջ քեզ կը տեսնէին, սրճարանները, փողոցները, ամէնքէն քու մասիդ կը խօսէին: Այս քանի՞ տարի էր այսպէս էր, այսպէս անցան օրերը: Ուսուցիչ եղար ինքի, գործակից եղար քեզի, զինակից եղանք իրարու, տալիսներ, սասնամեակներ, կեանքիս քանքեթը ասորին անցաւ այսպէս, ու այսօր քու տառապանքներուդ բաժինը աւարտած՝ դու կը մեկնիս. բայց կ'ըմբռնեմ արդեօք մեր տառապանքը, իմ տառապանքը, որ կը սկսի հոս, անգործութեան տառապանքին հետեւող երկ-

րորդ տառապանքը, որ կու գայ քեզի զարմեալ եւ կը կոչուի առանձնութեան տառապանք:

«Դու օրէնք շատ չէիր սիրել, եւ օրէնք շատ չեմ սիրել, բայց անգամի մը համար թո՛ղ գործադրուի օրէնքը ու ըսեմ երթաւ քալով, սիրելի Եղուարդ, մնաս բարով, դու կը մնաս բարով, իմ բոցաշատ բարեկամս:

«Երբ շատ բան գրուեցաւ ու խօսուեցաւ Եղուարդի մասին: Մենք կը բաւականանանք այս երկու արտասույտներով, մէկը գրչի հօրմէն, միւսը եղբորմէն գրչի:

✽

Ճէպէլ-Մուսա... Մշակավայր Եղուարդի:

Իր հայրենակիցները հերոսացան, իրեն ձէպէլ-Մուսայի: Մարտիրոսացան, իրեն զաղթական: Իսկ Այնճարի մէջ հաստատուելով հանճարացան:

Անոնք, այսօր, թէ՛ իրենց աւանին, թէ՛ երկրին ոտտանին մէջ ունին զէմքեր ու զիրքեր: Երեսփոխան, ուսուցիչներ, ընտիր հայեր, յորդառատ հայութեամբ օրինակելի:

Եւ երկու մարտնչորդ ու քանաքաղար գրագէտներ, որոնցմէ անդրանիկը անդարձ մեկնեցաւ, հրեշտակի մը պէս հարուածեալ Հրէշէ:

Այնճարցիներ... Անկարելի է ունկնդրել անոնց յինսմեայ պատմութիւնը, առանց պոռթկացող հիացումի եւ յուզումի:

Եղուարդ գրեթէ նորածին մըն էր, երբ կը մզուէր Մուսա-Լեւոն քառասնօրեայ հերոսամարտը:

Այս մեծ զօրախուսութեան մէջ, հորինի՞ Եղուարդին, որ թաղուեցաւ հերոս ու մարտիրոս իր զմայլելի ձէպէլ-Մուսայիներուն մէջ, անոնց մօտ:

Ձմռանը ըսել որ այս լեռնորդիին գրչահայրն ալ է սարի զաւակն սասունած լեռնէ մը, որ այնքան ատեն եղաւ արծուերոյն, հրաբուխ յեղափոխութեան:

Լեռներն ու լեռնորդիները կը ճանաչանաւ զիրար եւ կը զնահատեն:

ՏՈ

Երբ Մարտիկէն գէպի Պէյրուսի կը նաւարկէինք, կարգալու համար հետս գտած էի ձրեք գիւրջ։ Բէկը Եղուարդին զեռուղի Ձաւակներու հատորն էր, արուն համար մտքիս մէջ ունեցայ մէկ զիտողութիւն։

— Քիչ մը կանուխ գրուած են այս նամակները...

Սխալիւր եմ։ Այդ նամակները գրուած էին ճիշդ ժամանակին։ Անգիտակից նախազգացում մը մղած է Եղուարդը, որ զրէ այդ նամակները կարծէք Մահը իր առաջին ու խուլ անազանող հնչեցուցած էր իր մէջ։ Եւ հաւանարար այդ պատճառով այդքան լուս էր ու լուրջ, մտախոհ եւ մելամաղձոտ համարուելու աստիճան։

Սուրիոս այցելելէս ետքը, երբ զեռըստին Պէյրուսի էի, առիթով մը Եղուարդին հետ խօսեցանք մահուան մասին։ Պատմեցի իրեն երազ մը, ու Եղուարդ ունկնդրեց զարմանահար։ Այդ հարազին մէջ ինծի յայտնուած էր մօրս կողմէ, որ մեռնելու հերթը զեռ իմն չէ, թէ հիմա այնինչն է որ պիտի մահանայ։ Եւ քանի մը օրէն, երազը իրականացաւ։ Տարիներ առաջ տեսնուած այս երազը, օրը օրին պատմած եմ այլոց, որոնք ապա ապշահար մնացին։

Ռօսելէ յետոյ այլ երազներու մասին, դարձեալ խօսեցանք այն մեծ, այն մասի առեղծուածին մասին որ Մահն է։ Եղուարդը ընկզմեցաւ մտածումներու մէջ։ Եւ սակայն, մտքէս երեք չէր կրնար անցնիլ, որ հինգ տարի ետքը, Եղուարդը ընդմիջապէս պիտի հեռանար այս պոսիդիստութեան պոսիդիզէն։

Կեանքը անակնկալներու անել մըն է։

ՏՈ

Հակառակ որ ես կը նախընտրեմ Եղուարդին արձակը իր տաղաշարիս խորքներէն, երկու քերթուած կը ներկայացնեմ մասամբ, լուսաւորելու համար իր քարոզ ներաշխարհը։ (Իր արձակը կարծէք արձանագրուած է քարե-

լու վրայ եւ անոր մէջ է իր բանաստեղծութեան բարտիուն մասը)։

«Տխուր Բաներ Ու Թախիծ» չորս տուննոց քերթուածին մէջ կան ու վըտաթաթախ տողերը։

— Կեանքն ի՞նչ է որ, վերջապէս, ափ մը հողի պատմութիւն, երգանկութեան ի խընդիւր, խուլ սպասում մը տակաւ, Կեանքն ի՞նչ է որ, եթէ ոչ ապրիլ-տիւնի մը տօգոյն, Քիչ մը ժպիտ, սրտի մը սէր ու տըւայտանք մը անքաւ։ Ի գո՛ւր մարդիկ կ'աշխատին ու կ'երգեն ու կու լաւ, Ի գո՛ւր մարդիկ կը սիրեն ու կը տեսնեն, կ'ազօթեն Կարն է Կեանքն այս եւ Կալայն ունի ցաւեր անվայտան, Խաչելութիւն եւ ապա՝ սուգ մըն է մեծ մայն տունն։

Ահա երեք տուն ալ «Մահուան Համար Սննդոնի» քերթուածէն, ուր յորդած է յոռետեսութիւնը, խորքին մէջ այնքան իրաւագի։

— Քաղցրամարմին իմ երագ, Բաղցրամարմին իմ երագ, Մահուան սայլակն անուրախ կը ճռնէ վերստին։ Մոռացումիս համբայէն կ'անցնի Կարո՛ւս մը անհաս, Ազօթանե՛ւ ու լոկի, կու լայ Թախիծն աշունին։

Ու մեկնումի կը հնչէ խուլ մահագանգ մը հեռում, Կարելի չէ ա՛յ մնալ այս տանգանքին մէջ անյայտ, Պէտք է ա՛յ տալ հրաժեշտ սիրուած բոլոր բաներուն, Եւ չճանալ յաւիտեան ունայնութեան մէջ անյայտ։

Ա՛յ չըմնաց ո՛չ մէկ սէր, ո՛չ մէկ տեսնանք, ո՛չ մէկ յայտ, Սպասեցա՛ւ ամեն ինչ, տխրութեան տե՛ւ ցայգին մէջ,

Հիմա վերհերձեմ եմ՝ առատ, որ կը կատարեմ
 իմ անոյս
 Թողիքս միտ մէջ հիւանդ ու կարօտիս
 տըտամաւիչ:

Այս տխուր տագնաբեր ետք ու խոր խ-
 մաստ, սեւ, երանգ եւ մանաւանդ յաւել-
 ձալ յազում կ'ընդունին, բանաստեղծին
 վաղահաս մահաւամբ:

Եւ մտածել, որ մարդիկ ունայնու-
 թեան զգիլանքի պէս մեծածաւալ ուռ-
 ւանին մէջ բռնաւած, կամ որոացուած
 փառամոլութեան եւ մեղքերու մեղքա-
 ծարան խայծերով, անվերջ կռիւներու
 մէջ են, ոտնակոխելով քաղցրութիւնը
 տաքութիւնը՝ քանի մը օրերուն:

Եւ խորհիլ, որ անհունութիւնը երե-
 մակայելու անկարող մարդը, երբ կը
 դիտակցի իր փոքրութեան, կը զգայ որ
 արարած մըն է եղկելի: Միաժամանակ
 իր մեծնալու ճշտումը, ամէն ինչ գիտ-
 նալու տենդը, վերջապէս իր մտածելու
 կարողութիւնը՝ զինքը կը դնեն երկու
 հուրերու մէջ: Եւ մարդը կ'իջնէ միա-
 տնութեան վիճին ջուրերուն անխորաչա-
 փելի յատակը, ծանօթացած Ունայնու-
 թեան: Տեսելու տենդը զինքը վեր, մա-
 կերեսին վրայ կը հանէ թէեւ, բայց ան
 գիտէ որ ամէն ինչ անողուտ է, եւ ու-
 կամայ կը հաշտուի իրողութեան հետ,
 որ այդ կ'ըլլայ իր փիլիսոփայական
 յաղթանակը: Սակայն, ներքնապէս հա-
 մոզուած է որ պարտեալ մըն է: Երկրի
 վրայ մէկ յաղթական կայ: Մահը, Մարդ
 արարածը չի գիտեր թէ ինչպէս եկած
 է, ո՛ւր պիտի երթայ... Ժամանումն
 ալ, մեկնումն ալ է ակամայ, երկուքին
 մէջ: Կը տարածուին տառապանքները
 տարտաբոսի...:

Ա. Քանի՞ հոգի կը հասկնան Եղուար-
 դի պէս մտածող մտքի մը եւ զգացող
 սիրտի մը՝ երեւելիները փոթորիկներու
 մէջ:

Թակոր իտէլիտէրեանը քանի մը
 տարի առաջ, երբ փարիզ էր, յայտնեց
 ինքի արգար դասնութիւնը Եղուարդին,

որ բուն փափաքը ունէր անգամ մը
 զուրս ելլելու Լիբանանէն, այցելելու
 համար քանի մը եւրոպական երկիր,
 տեսնելու լոյսերը դուրսի: Կը սպասէր
 բախտաւոր առիթի մը, որ չէր ներկա-
 յանար: Մինչդեռ ուրիշներ, արժանա-
 ւորներ ու մանաւանդ անարժաններ, կը
 ճամբորդէին ճիներու պէս: Եւ տաղան-
 դաւորը զրկուած էր ատ շնորհէն, որ
 իրաւունք մըն էր արուեստագէտ եղո-
 ղին համար:

Վերջապէս, Բախտը անգամ մը
 ժպտեցաւ Եղուարդին, եւ ան այցելեց
 Հայրենիք, Հանգամանքով ուսուցիչի:
 Գնաց ամէնէն հակած, ամէնէն օրհնեալ
 վայրը, մանաւանդ Հայ դրողին համար:

Գնաց իրբեւ ուսուցիչի, բայց չեմ
 գիտեր, թէ Հայաստանի մէջ ճանչցա՞ն
 զինքը, Հասկցա՞ն որ իրբեւ ուսուցիչ
 եկածը դրազէտ Եղուարդ Պոյաճեանն
 է: Իրմէ ալ ոչինչ կարգացինք իրբեւ
 նկարագրութիւն ու տպաւորութիւն:
 Թերեւս իր անտիպներուն մէջ գտնուին
 դրութիւններ Հայրենաստեանի:

Հայաստանէն վերադարձին, քանի
 մը օր մնացած էր Փարիզ, տեսնելով
 Լոյսի Քաղաքին արտաքին քանի մը
 մասերը միայն: Երկու օր Փարիզ մնա-
 լը՝ մեծազանգուած դուրսգործոց նկա-
 րի մը երկվայրկեան մը նայելուն հագիւ
 կը նմանի:

Ժ

Դժգոհ ու դառնացած էր կեանքէն:
 Լոյսերը քաղած էր կաթիլ առ կաթիլ,
 դժուարութեամբ, շնորհիւ իր ընդունա-
 կութիւններուն: Ու բաւած էր չիտ-
 ոտու:

Համայնարաններ չէր աւարտած:
 Իր համալսարանը եղած էր կեանքը, իր
 հայութիւնը եւ ինքնաշխատութիւնը,
 ինչպէս շատերունը մեր գրադէտներէն:

Բախտաւոր մէկը չէր եղած անտա-
 րակոյս: Եւ սակայն, ժառանգութեամբ
 տուած էր իրեն կարեւորը՝ կու տա-
 զանիւր: Բախտը միշտ բան մը պակաս
 կու տայ. մանաւանդ Հայուն:

Բազմաթիւ համալսարանականներու կրնար ուսուցանել հայերէն ու հայութիւն:

Լոյսի ու ժողովի պայտարը կը մղէր թէ ինք իր մէջ, թէ՛ իրմէ դուրս, խաւարին, խարդաւանանքին, խարէութեան ու խորթութիւններուն գէժ:

Կ'ենեւէջէր յուսափառութենէն յուսահատութիւն: Մեծ հոգիի մը համար բնական էին այդ շարժումները: Թոխիքներէ դուրս եղողներուն համար կը թըւէին անըմբռնելի:

✽

Աւատապետներ կան, զանազան տեսակի, հայաշատ քաղաքներու մէջ: Մեծ ու պզտիկ կամ միջակ աւատապետներ: Իրականին մէջ ամէնքն ալ փոքրիկ, քիչ բացառութեամբ:

Եզուարդ անոնցմէ չէր: Անոնցմէ ըլլալը ապացոյցներէն մէկն էր իր զըտարին արուեստագէտ մը ըլլալուն: Ինք պարզ դիւպոցի մըն էր, բայց գիտակից շինական: Կը պայքարէր ինքն իր մէջ, Ծանրագոյն էր այդ պայքարը: Իրական մենամարտ: Ինք էր պարտեալը, Ինք էր յաղթականը: Բայց ինչպէ՞ս բռնէր, Վերջին յաղթականը Մահն է միշտ:

Եւ ինկաւ մանդաղին տոջէն:

Բայց երանի՜ Եզուարդին, որ գէթ յետ-մահու եզաւ աւատապետ-կալուածներէն, ունենալով գերեզման մը, իր ժողովուրդին մեռելներուն մէջ, ու ողջներուն ծօթիկ: Հայկական տաքութեան մը՝ զոգր: Քանդի ոչ միայն մեր հերոսներն ու մարտիրոսները մնացին անդերեզման, այլ արտասահմանի անհուն տարածութեան, տարադրութեան մէջ թաղուածները անգամ կը համարին անդերեզման, որովհետեւ հայր չի կրնար հանդիլ օտար ու անծանօթ մարդոց հետ: Արտիկա պանդխտութիւն մըն է յետ մահու, պանդխտութիւն յաւիտենական եւ մնալ է անդերեզման:

Երանի՜ Եզուարդին... Արժանի էր այդ երանութեան:

Եւ զուցէ, օր մը, հեռուոր հայ գրէեղբայր մը այցելէ իրեն, ու հողակոյտին տոջէն ծնրադիր մընջէ:

«Ենթանձնայ քում համգրտանաղ, ընկալ եւ զիս...»:

«Հողը»-ին անմոռանալի հեղինակը իր հողը գտաւ: Սիրեց ու երպեց հողը, տաղանդով ու տառապանքով: Այնճարի հայացելու հոգն ալ թո՛ղ սիրէ զինքը, ու երգեր տարափէ տարաբախտ Եզուարդին վրայ, իրբեւ փունջեր լոյսի:

Հանդիւր հայրենակիցներու մէջ, մանաւանդ ծօթիկ հայրենակիցներու քովիկը, զուցէ համարուի տկարութիւն անհիթիթ: Եւ սակայն, յաճախ, զօրութիւններ կազմուած են տկարութիւններով:

Քաղցր է ննջել (որքան ալ ըլլայ անգգաւի) յեղուակիցներու հետ, հակառակ լուծեան ու լապորէզին:

Միշտ կ'ըսեն — «Մեռեալը ոչինչ կը զգայ...»: Երանի՜ ճիշդ ըլլար: Հազա հողին... Համակ զգացում ու մտածում մարդը՝ կարելի՞ է որ յանկարծ դառնայ անզգայ: Մեռելներն իսկ ունին իրենց կեանքը...

✽

Եզուարդ գիտցա՞ւ որ դատապարտած մըն է մահուան:

Մեզի հասած տեղեկութիւնները հակասական են:

Թերեւս չգիտցաւ զինքը հարուածող հրէշին բուն բարբարոս անունը, օտարաբան գգա՞ց որ սահմանուած է մահուան...:

Քննութիւնը բարի է յաճախ, հանդէպ մահամեծներուն: Վերջին վայրկեաններուն կ'ընծայէ նուազում մը բանականութեան, որպէսզի ճամբորդը իր մեծ ուղեւորութիւնը կատարէ թմրութեան մէջ:

Գիտակցարար մեռելիք, բաժանում մը բոլորէն ու ամէն բանէ, տառապանք մըն է անկրիթ:

Երանի՜ անոնց՝ որոնք կը մահանան Յոյսի օրօրներուն մէջ, ննջելով նման մահուակի:

Ահա այժմ քաջիկու համար անգամ,
կը գործածուի թմրեցուցիչ: Հապա հո-
գին մարմինն արմատախիլ ընելու հա-
մար որքա՞ն անհրաժեշտ է թմրութիւ-
նը...

Տ

Եղուարդ սիրեց
Հայերէնը, իբրեւ լուսայեղու,
Հայութիւնը, ազգ՝ մարտիրոսաց եւ
մարտիկներու,
Եւ Խո՛ղը, Խո՛ղը, որ մեզ պահէ, ու
պահպանէ յետ մահու:
Հայերէնը, Հայութիւնը ու Հողն այ
պիտի սիրեն զինքը յար եւ յաւիտեան:

Տ

Իր լեզուն նման է հայ հողի:
Հող Սուէտիոյ, հող Հայաստանի:
Հող քարքարուա ու գազաթացեալ:
Մերթ բիրտ բայց բարի:
Հո՛ղ՝ որուն մրայէն կ'անցնին հող-
մեր ու հուրեր:
Հո՛ղ՝ ոռոգեալ արցունքով ու ար-
եամբ: Նաեւ գետակներով քրտինջի:
Հո՛ղ՝ հրաբխային: Լեզու լաւա ու
յոյս:
Այդ հողով հասան, հասունցան իր
մշակուած միրգերը մտքին:

Տ

Հուսկ խօսքեր.
Եղուարդին մահուան առթիւ, խօս-
ւեցան դամբանականներ ու գրուեցան
յօդուածներ: Ամէնքն ալ արտայայտու-
թիւններ սիրոյ, յարգութեան ու հիւ-
սումի:

Սակայն, ատոնք, վերջ ի վերջոյ,
որքան ալ ըլլան սրտագին, խօսքեր են:
Մինչդեռ սիրելը, յարգելը ու հիանալը
կը պահանջեն գործողութիւններ:

Տեւական սէրը, յարգանքն ու հիւ-
սումը գրագէտի մը հանդէպ, հարկ է որ
վերածուին գործի:

Իրապէս ու խորապէս սիրած, յար-
գած, հիացած կ'ըլլան անո՛նք միայն,
որոնք բարոյական կամ նիւթական գո-
հողութիւններով՝ հատորներու մէջ կը
հիւրընկայեն տարաբախտ Եղուարդին
գրութիւնները, ցրուած թերթերու եւ
հանդէսներու մէջ, ինչպէս նաեւ ան-
տիպները:

Եւ այս կ'ըլլայ լուսագոյն ազօթքը,
յաւիտենական հոգեհանգիստի:

Իրաւամբ ըսուած է.

— «Ամէն բեզուէն դործի վերջին խօս-
քը՝ գոհողութիւնն է»:

Պէտք է մտածել իր զաւակներուն,
ինչպէս նաեւ իր գրական զաւակներուն
մասին:

Այս տեսակ պարտականութիւններու
կատարումը մեր ժողովուրդին հասակէն
վեր գործեր չեն:

Եւ արդ, հեռուէն, հոգեւին կը համ-
բուրեմ իր հողակոյտը, ու կանգնելով
սպիկիրներու շարքին առջեւ, կը համ-
բուրեմ իրենները, գրչակիցներ, պաշտօ-
նակիցներ, այնճարցի հայրենակիցներ
ու հարազատներ...

Սիրենք մեր քանքարաւոր մեռեալ-
ները, որպէսզի հայ կոչուելու ըլլանք
որժանի:

Զ. Գ.

Փաթիկ, Վիլնոսից

ԿԱՊՈՅՏ ՔԵՆՐԹՈՒԱԾ

Նուէր ծխամորճի մը

Քաղաքի ծե՛ր իրիկուն,
Արիւնիս մէջ հրավառ,
Կու լար թախի՛ծ մը նկուն
Հիմ հեֆթաթի՛ մը համար:

Քաղցրամնուց ու տրտում,
Հովերուն դէ՛մ երջանիկ,
Հագիս կարմիր ասլըշում,
Կու տար անունդ երգեցիկ:

Յետոյ երազ անարեւ,
Կարօտաչուի՛ հեռաւոր,
Յետոյ թախի՛ծ ու անձրեւ,
Մեկնումի ժամ էր խոժռա:

Ոսկետրտում աշունի
Քերթնաւածի՛ մը համար,
Ներշնչումս վիթխարի,
Երակններէս կը պոռթկար:

Դեռ մտաւցում մը կայայտ,
Հիւանդ pipe-իս մէջ կ'այրէր.
Դեռ վերջնում մը անփայտ,
Երակներում մէջ կը ծաղկէր...:

Հիմ գրայցներ pipe-իս հետ
Պատմեցի միշտ, ամէն օր,
Մինչեւ պատկերդ անհետ,
Գրկեց հոգիս վերաւոր:

Զար ու քարի օրերում
Ընկերուհիմ էիք դուն,
Նայումաճֆիս տակ տխրայայտ
Քճճոյշ ծաղիկ մը լում:

Մեծցամ օրե՛րս ցրտիմ,
Եղան վրաս հովանի,
Անունդ շուֆի՛մ տակ մթիմ,
Դարձար այնպէ՛ս ընտանի:

Ամենուրեք կայի՛ր դուն,
Որպէս երա՛զ, որպէս սէ՛ր,
Սակայն ինչո՞ւ արդ տրտում
Այլ չկաս միշտ ի՛մ ընկեր...:

ԵԳ. ՊՕՏԱՅԵԱՆ

Մէկը իր տաղանի անունով եւ
միւր ծանկանոցով ու արեւելահայե-
րէնով գրուած վարի հրկու կտորնե-
րը, Պոլսեանի ստորագրութեամբ
ձեզի ծանօթ ազգային տաղի բա-
նաստեղծութիւններն են ոչոնք ըստ
տեսանքի «Հայրենիք» ամսագրի 1836
Դեկտեմբերի թիւին մէջ: Կ'աղագրենք
հետաքրքրութեան համար:

ԱՇՈՒՆԻ ՈՍԿԵՂՈՅՆ ՄԵՂԵԴԻ

Աշունի ոսկեգոյն մեղեդի,
Լացում է մի երազ իմ հոգում,
Մի թախի՛ծ հեռաւոր հեծկտում,
Հնացած յիշատակ արեւի:

Անշնչի տաճարում անցեալի,
Մտաւցումս մի ազօրք կար բարի.
— Ընծայիր մի ողբոյն ու անցիր,
Սերերիս, յոյսերիս ամբարի:

Գագազի է մի յո՛ւշ վերստին,
Հեֆթաթի հեռաւոր ավերից.
Մի վայրկեան մօտեցիր ինձ թորից,
Գագազի է մի յո՛ւշ վերստին:

Լուսավառ օրերի լապտերից,
Իջնում է ոսկեգոյն լուսաթիւն,
Խնկաչոք մի տա՛յն հեռուից,
Ազօրում, հեկեկում ու յիշում:

Դու կը գա՞ս էս հիւզում էմքան ցուրտ
Աշունի մշտագեղ էս երկրում,
Կը լինե՞ս մի տեղեմք անյագութիւն,
Գրատաւ մի լու ճոյր անտրտում:

Հնացել է աշխարհը հիմի,
Մտաւցումս է իշխում իմ հոգում,
Ուզում եմ յամօճակ մի մանի,
Այլ չաղրել անպայծառ էս կեանքում:

✽

Աշունի ոսկեգոյն մեղեդի,
Մտում է մի երազ իմ հոգում,
Մի թախի՛ծ հեռաւոր հեծկտում,
Հնացած յիշատակ արեւի:

Ա.Ա.Ր.Ր.



Մեր առհասարակ ժողովուրդին հասարակ ու զին ու յախանձանքն արեան մը հրահանգով իր ժամածնէն ու զգացումները ձեռնարկող չեղինակ մըն է, զԹուշ Գաւակներու հեղինակը, բարձր ու հոգեւոր, համեստ ու յախանձ, թափառող ու յարձակող, արդարութեան ծառու ու իմացական արկածախնդրութիւններու մշտնարկող հիասթափ խելագար մը:

Կը սեւագրէ ու կը զգուշացնէ:

Կը վերանայ ու կը վարակէ:

ԶԹուշ Գաւակներու հրաշատու լեզու մը կ'աւելցնէ Սփիւռքի գրականութեան վրայ ու կը հանդիսանայ Պոյահեանի ստորագրած գործերուն ամէնէն առաջ, անմիջականը, ամէնէն հանդիսաւորը: Պերճաւուք նախագահութիւններու հոխ հանդէս մըն է զիբըջ ծայրէ ծայր, անհրեղական յորդ, մտածումի փայտափումներով եւ ներքին լոյսերով ողորդած բարախան պատկերասրահ մը:

1982

Գ. Մ.

ԹՈՒՂԹ ԶԱՒԱԿՆԵՐՈՒՄ

(ՀԱՏՈՒԱՇՆԵՐ)

Իբրեւ ծնող մը. որ սինչեւ ողն ու ծուծը հայ է, յայտնեմ, թէ հայ ծնողներուն սէրը հանդէպ իրենց գաւակներուն, անհամեմատ կերպով աւելի է քան բազում այլ ազգերու ծնողական սէրը: Այս ուղղութեամբ հասարակ շունցող սէր մըն է սն: Իննք, ծնողներս, հայրենիքին ալ պարտականութիւնը պիտի կատարենք հանդէպ ձեզի. քանի որ հայրենիքը ի վիճակի չէ առ այժմ իր պարտականութիւնները լրիւ կատարելու: Ուրիշներուն հայրենիքը, կը տեսնեմք, մեծագոյն օժանդակն է ծնողական մտահոգութեանց, ծնողներուն քեզը թեթեւցնող մը, գաւակներու առտուածային բռնակիր մը: Մենք շատ անգամ գրեթէ ամեն տեղ, ծնողք ըլլալէ ետք, հայրենիք եւս պիտի ըլլանք ձեզի: Պիտի ըլլանք անոր ամբողջ պատմութիւնը, ամբողջ աշխարհագրութիւնը, ամբողջ լեզուն եւ ոգին: Խորհուրդը:

Հայրենիքին բռնակիրը պիտի ըլլանք եւ քայքայ օտարութեան մտքն ի վար, համբան ընելով անորոշ ծագով ահաւոր ազդամուղջի մը, ամեն քան մեր աւիմ՝ քանի որ հայ ծնողք կը կոչուինք եւ դուրս եմք մեր նրկրէն: Այսպէս է: Մեր երկիրը դժբախտ է. եւ մենք ազնիւ եմք: Աստղ պէտք է հաւատաք միմեծ մեծմաք եւ միմեծ մեծմիք: Ապրած եմք բազում դարեր եւ ստիպած գահազութեան գերագոյն իմաստութիւնը, ճիշտ, եզրի եւ կեանք ըստածիմ մէջ:

digitised by A.R.A.R.®

•

Ծառայեցէ՛ք բարեկամին, ծառայեցէ՛ք ազգին, ծառայեցէ՛ք մարդկութեան: Ծառայեցէ՛ք մի՛շտ: Բայց բարձր ոգիով մը: Բայց ամուր և կարող լինելով մը: Բայց հոգեկամ անկախութեամբ, մոռնալ լայն հորիզոնով, անըսկա հարստութիւն մը ծախսողի պայծառ առատաձեռնութեամբ:

Հաւատքով առաքինութիւններէն մէկն է ինքզինք ծախսելը ու բիշմարակ հրաշմանկութեամբ համար: Երբ վայրկեանը գայ (եւ ստեղծէ՛ք ժամանակէ՛ք զեր աշխարհը) մի՛ վարանիք ինքզինքնիդ քանդելու (մանաւանդ աշխարհ մահու, դաւն): Ինքզինք յարմար վայրկեանի մը քանդելը բուն ստեղծագործութիւնն է ահա, յաւիտենական արարչութեան, անկորուտոն հարութեան հիմնական գաղտնիքն է ահա: Ներքին լոյսի մը առջեւ քանդելով՝ կառուցուի՛ր ըսել է: Դժուարութեան կարծր հունտը պայքարեցնել եւ ծլիլ ըսել է: Եթէ կ'ազնեմ կեանքին վերջնական իմաստներուն հասնիլ՝ պարտաւոր եմք խորանալ, հողին եւ լոյսին պէտք բարձր, հեռաւոր եւ ընդհանրական ըլլալ: Ազատագրուիլ այսինքն՝ մասնաւորին պարսկականէն, մեծ սկզբունքներուն ճշգրտածել կեանքին ու մահուան շէնք: Տիեզերքին պէտք պարսկական թուր ժամանակները, բոլոր հեռաւորութիւնները, բոլոր ծնունդի սկզբունքները:

Ժամանակէն դուրս ձեր սեփական ժամը ունեցէ՛ք, տարածութենէն դուրս՝ ձեր սեփական տարածութիւնը: Դուրսի ճոխութենէն անկախ՝ ներքին ճոխութիւն մը միշտ ձեր սեփականութիւնը թող ըլլայ: Ամէն բան եւ թէ ճախողի, ամէն բան մեռնի՝ ներքին ճոխութիւնը կը մնայ ու կը մեռնէ ձեզ աւելի ուժգնօրէն կեանքին համբաններուն վրայ: Եւ երբ համագումար, որ մահը ձեր հոգիին տրուած խորհրդաւոր օժանդակութիւն մըն է, երկու տառաւոր ժամանակներու մէջ ինկած կամարը մը՝ անպարտելի պիտի ըլլայ: Պիտի ըմէ՛ք Աստուծոյ եւ աստուածայինին գիտը:

•

Անշուշտ որ կեանքը ընդհանուր եւ խորին բան մըն է աստղային տարածութիւններու մէջ: Անշուշտ որ կեանքը, մարդուն, ամասունին քէ բայցեմ մէջ՝ լոյսին սփռելի մէկ առաքելութիւնն է, քերական հրապարտում մէկ ծաղիկը, իմացականութեան թիւ մէկ վարդենին: Անշուշտ որ տարածութեան ու տեղութեան յախտնական քաղաքինն է ան:

Փիլիսոփայական ուսման մէջ չէ բնաւ, գիտական վարկած մը չէ երբեք: Կրօնք մըն ալ չէ: Լինելութեան համայնադէպ եւ համաբախանց հեղեղ մըն է տիեզերքի ակօսիմ մէջ: Աստուծոյ մասին գոշակութիւն մը ըլլալէ նստք բոլոր ուղղութիւններում վրայ, է՛ր հաւեւ եղբայրական ընդհանուր կտայ մը, ընդմէջ մեծագոյնին եւ փոքրագոյնին, ընդմէջ լատգոյնին եւ յոռեգոյնին: Ընդմէջ բարիին եւ ջարհին: Յարաբերութիւնն է ամէնուն, շաղկապը բարիին: Անհատական է բոլորին եւ ոչնչացումը ամէնուն: Դիմադրելու, վերածելու եւ վերածնելու, դասելու, արդարանալու, մերելու եւ պատժելու ուժ մըն է միշտ: Շարժում մըն է դէպի վեր, դէպի տրեւ, դէպի վերջնական արտայայտութիւն մը, դէպի վերջնական ժեպ մը, վերջնական պատկեր մը, վերջնական կշռոյթ մը, լինելութիւն մը, բխում մը: Նպատակն է հասնիլ բացարձակ գեղեցկութեան, բացարձակ յաղթութեան, բացարձակ սիրոյ: Այսինքն՝ բացարձակ հարստութեան: Այսինքն՝ Աստուծոյ եւ աստուածայինին:

Ե. Գ.

(*Բոլորք Զաւակներուն*)

Մ. ԻՇԽԱՆ

ԵԴՈՒԱՐԴ ՊՅԱՃԵԱՆ

Մահը եկաւ փակելու Եդ. Պոյաճեանի աչքերը, որոնք կէս դար շարունակ մեծաբաց յառեցան այս կեանքի երեւոյթներուն, միշտ անյապուրդ ծախուով, շփոթահար, դժգոհ ու զարմացած աղու ցաւազին նայուածքով:

Այսօրուան պէս կը յիշեմ զինք, երբ զեռ պատանի, ձեմարան ուսանող եկաւ Ճէպէլ-Մուսայի գիւղերէն: Ամէն ինչ յուզական աշխոյժումներու աղբիւր կը հանդիսանար իրեն համար, խորհուրդ, խաւար, լոյս եւ կախարդանք: Ե՛ւ գիրքերը, որոնց էջերուն մէջ գիտէր ընկերմիլ ինքնամոռաց յափշտակութեամբ, է՛ւ մայրաքաղաքին շրջնող պերճանքները, է՛ւ շարժանկարի երազային պատահները, ամէ՛ն, ամէ՛ն բան: Եղուարդ գիւղացի աղու իր պարզամտութեամբ՝ անմեատուր կ'ըլլար երբեմն ծայրայեղ խանդավառութիւններու, երբեմն յուսահատական տրտմութիւններու՝ անստուգելի բնաւորութեան եւ տարօրինակ մարդու անուն մը պտտեցնելով ընկերներուն մէջ:

Ջարմանահար այդ աղան միշտ նոյն գիւղացին մնաց մինչեւ իր մահը: Անյապ ծախուով վազեց կեանքի անմատչելի դանձերուն հոտէն, լուսնի ճառագայթներ հալածեց եւ անոնց հասնելու անկարելիութիւնը գինք նետեց ըմբոստ դժգոհանքի եւ՝ մթին յոռետեսութեան գիրկը:

Եղուարդի կեանքն ու գրականութիւնը եղան այս չդաճած հոգեվիճակին հարազատ արձագանդը:

Ինքնուրոյն խառնուածք մըն էր անկական եւ շարունակեց պահել իր խառնրածքին այդ դրոշմը՝ թէ՛ իր ոճով եւ թէ՛ երգած նիւթերով:

Ճէպէլ-Մուսայի գիւղացին չմեռաւ երբեք Պէյրուիի պողոտաներուն վրայ: Հողին ու կորսուած լերան սէրը մնաց տիրապետող եւ հզօր կանչի վերածուեցաւ Եղուարդի գրականութեան մէջ, տարերային, գրեթէ անազգային պոռթկումով: Ինչ որ կը բնորոշէ անոր տաղանդը եւ ինչ որ պիտի մնայ գրական անոր վատտակէն՝ առաւելաբար հողին այդ խորարմատ սէրն է, զոր գիտցաւ գիւցաղներգել մարտունակ կորովով:

Հողագործի լա՛յն ակերտով շտալոսընէ շաղ տուաւ հայոց լեզուին բառերը, անոնց հետ վարուելով այնպէս, ինչպէս գիւղացին կը վարուի հողին հետ, իբրեւ անկախելի, անհաշիւ եւ անհատնելի հարստութիւն:

Ողբերգական բան մը կար միշտ Եղուարդի կեանքին, ձգտումներուն եւ ապրումներուն մէջ: Ողբերգական շեշտ ունեցաւ անոր գրեթէ ամբողջ գրականութիւնը՝ թլուառ մարդոց, տառապող հողիներու եւ սեւ ճակատագիրներու պատկերացումով: Ողբերգութեամբ վերլուծաւ նաեւ անոր կեանքը՝ լարումի ընթացքին յանկարծ փրթող թելի՛ մը նլման:

Տարօրինակը հոն է որ իր Թանձր յոռետեսութեամբ ուշադրաւ՝ այն բանաստեղծը վայրկեան մ'իսկ չկասկածեցաւ մահուան մերձաւորութեան, երբ



Մ. ԻՇԽԱՆՆԻ ԵՒ ԵՒ. ՊՅՈՒՅՆԱՆ

ժառանգան շունչը կը զգար իր դէմքին վրայ շարաթնեղէ ի վեր։ Եղուարդը մօտէն ճանչցողները պիտի չզարմանան այս տարօրինակութեան վրայ, որովհետեւ իւրքին մէջ ան կեանքին կառչած, կեանքին ծարաւ, կեանքի եւ ստեղծագործութեան կիրքը ունեցող պատանի մըն էր տեւարար, մինչեւ իսկ յիսուն տարեկանին։ Քիչ մը անմշակ, քիչ մը անզուտ, հոգախառն, բայց անկասկած

թանկարժէք հանք մըն էր, որ ահա հողին կ'երթայ, առանց լրիւ կերպով պեղած ըլլալու։ Զգայութեանց եւ զգացումներու դեռ կոյս խաւեր կային իր կուրծքին տակ, որոնք, աւա՛ղ, այլեւս լոյս պիտի չտեսնեն։ Եղուարդին յատուկ նսկատագրի ողբերգականութեամբ մը։

Եւ հիմա անհուն արտօնութիւն մը կ'իջնէ դրաս։ Հայ գրականութեան անդաստանէն անհետացողը մեր սերունդէն էր, զրչեղբար մը, ուղեկից մը։ Մէկը այն սերունդէն, որ երկու պատերազմներու միջեւ հասակ նետեց, զսրոցի մը զուռը բաց գտնելու համար հազար զփուարութիւններ ճանչցաւ, ծանր զբերաններ ճաշակեց, բայց գիտցաւ դադարաւորով անանիւ եւ ժանաւանդ հայ զրին ու լեզուին պաշտամունքը վառ պահել իր հոգիին մէջ։

Այոքան շուտ պիտի սկսէր այդ սերունդին տերեւաթափը։

Ահսո՛ւ...

Մուսա-Լեւը փոխարինող Այնճարի հողը թող առջ արտի պէս զրկէ հողը երգող իր զուկին սառած մարմինը։

Մ. Ի.

ՄԱՀԵՐԳ ԵԴՈՒԱՐԴ ՊՅՑԱՃԵԱՆԻ ՀԱՄԱՐ

Ամառը կեանքի բաժակները լեցուն էին .
 Ամառը կեանքի բուրվառները կ'օրօրուէին
 Կը հնչէին ծնծղանքն աւախաբեան .
 Ամառը կեանքի ծաղիկները տուած էին
 Իրենց խոտումներն անսահման ,
 Եւ հնձաններուն մէջ գիւնի եւ խունկի
 Առատութիւն էր բերկրաւէտ :



Ամառն էր ռսկեհար գեղեցկութիւն .
 Ամառն էր աստաւածագեղ երազ՝
 Որուն տեսիլքն էր համատարած
 Ծաղկերու եւ լեռներու մէջ :



Բանաստեղծ մը կտր աշդ ամառուն ռսկի գահին վրայ ,
 Ազօրքը շրթներուն , եւ տաւիղը մատներուն տակ .
 Բանաստեղծ մը յայտ ամենավառ բաժակը ձեռքին մէջ .
 Լուսանեղ ջանքը շուրջն էին անոր ,
 Բազմութիւնը կ'ունկնդրէր անոր խօսքերուն՝
 Որոնք թէ պատգամ էին եւ թէ ներդաշնակ մեղեդի .
 Որոնք հեքիաթ էին եւ զրոյց :



Օրեմութեամբ գեղուն ամառը կեանքի .
 Զայները լուսաթռիչ աղաղակներ ունէին .
 Կապոյտ էին բլուրները ծաղկաւէտ
 Եւ ձորերուն մէջ մեծախորհուրդ լուսիւններ կը ծաղկէին :
 Ամպերը հեգասաւ կ'իջնէին անտառներուն եւ դաշտերուն վրայ .
 Եւ ծովի աւազներուն վրայ գաղթող թռչուններ
 Իրենց առասպելագիր հետքերը կը քաղէին
 Փոքրակասաւտ քամիներուն յանձնուելէ առաջ :



Բայց ինչո՞ւ մեղունները պար տուած էին սպիտակ փեթակներէն ,
 Եւ ծաղիկները կ'օրօրուէին մահազուժօրէն ,
 Մպառած էին խունկները բուրվառներուն .
 Զանքը շրջուած .
 Բաժակները փշրուած շրթներու դէմ արեւմտ .
 Զեռքերը խաչածեւ հեռապառ կարծեքու վրայ :

digitised by A.R.A.R.@



Այն ատեն բանաստեղծ մը կար՝ որուն քնարին լարերը խզուած էին.
Բանաստեղծ մը՝ որ այլեւս չէր հաւատար յայտին.
Կը փորձէր խելայեղօրէն կառչիլ շուրջի խորտակուած կամարներուն.
Կ'աւզէր ազազակել օգնութեան կանչիւս համար,
Բայց անհաւար լռութեան մը սեւ աղաւառներուն դէմ
Կը փշրուէր ճակատը մահատիպար:



Ամառը կեանքի ցնորքի ստուեր էր միայն.
Ամառը կեանքի պարպուած սափոր մըն էր՝ ատենօք
Այնքա՛ն առջում գինիով:
Ծամբած էին ազգիւրները լուսակարկաչ,
Թառամած՝ դափնեփարդերը մեղրաբոյր.
Մեղունները մոլորած էին իրենց փեթակին ճամբէն.
Իժեր ռոզմակած էին ազանհետան մէջ,
Եւ պարտէզի մը քառին վրայ
Ձայգ մը գեղահրաշ սիրամարգնէր կը մեռնէին:



Ամառը մահուան.
Ամառը բանաստեղծին՝ որ պիտի մեռնէր,
Եւ տիեզերքի ներդաշնակութիւնը պիտի խզուէր յանկարծ,
Ձայները պիտի ստուէին ազօթաւայ շրթներու վրայ,
Ձեռքերը պիտի կարկամէին խժուար տաւիղներու վրայ կծկուած,
Որովհետեւ գերեզմանի մը անդունդը պիտի բացուէր...



Որովհետեւ բանաստեղծ մը կայ եւ ամոր հետ
Կեանքը դաշինք էր կնքած
Իր ամէնէն գեղեցիկ եւ հրաշքերս ամառուան մէջ,
Մէքը մըմջած էր անոր իր հրդումն անդրժելի,
Յայտը պսպղուն պսակ մը կապած էր ամոր ճակտին շուրջ.
Եւ լեռներն ու ծովերը հըռւանդանէ հրաւանդան,
Ամառանքն ալ իրենց եղնիկներով
Ամոր համար ամայարագրելի գեղեցկութեամբ աշխարհ մը ստեղծած էին:



Որովհետեւ բանաստեղծ մը կար՝
Որ հիմա կը ննջէ յիշատակի լայնատարած քեւերում տակ:
Եւ մեծք որ ամբողջ եմք,
Տերեւ դադաւար փոքորիկի մէջ,
Մեծք որ սգալու կարողութիւնն ունիմք միայն,
Մեծք որ կերպներ կը վառենք գերեզմաններու վրայ,
Եւ մահապսակներ կը լքենք անձրեւին տակ,
Եւ խնկամաններ կը վառենք,
Արտասուենք ծնրադիր եւ գլխահակ՝ անմահ բանաստեղծին համար:

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

ԺԻՐԱՅՐ ԱԹԹԱՐԵԱՆ

ՄԻԱՅՆ ՀՈՂԷ՛ ՇԻՆՈՒԱԾ ԵՆՔ ՄԵՆՔ

«Où qu'ils aient perdu le regard,
Non, non, cela n'est pas possible !
Ils se sont tournés quelque part
Vers ce qu'on nomme l'invisible.»

SULLY PRUDHOMME

Որքան դժուար կ'ըլլայ եղեր, Աստուած իմ, երկու յստակ խօսք խօսիլ բարեկամի մը մասին, որուն օրերը վերջ գտան յանկարծ։ Որքան դժուար կ'ըլլայ եղեր, այս տեսակ առիթներով, երկու յստակ բառ դնել, երկու նախադասութիւն չարել, առանց որ անոնք ծիծաղելի զեղումներու շատաշնորհներ քեզ, երեւմեական լայկանութեան չյանգին։

Որքան դժուար կ'ըլլայ եղեր գէր ու գրականութիւն փորձել բարեկամի մը մասին, որ օրերուդ մէկ կարեւոր դանդաղածին կայտաւճառէրն էր դարձեր, որ ժամերուդ որոշ թափ մը, որոշ խանդ մը տուած էր եւ որ յանկարծ այդ ամբողջը մէկ անդամէն ու մէկ գիշերուան մէջ մտնեց, վերջացուց։ Այդ թափն ու խանդը եւ օրերու այդ ահագին կայտաւճիւր տարաւ փոքր լեռան մը կողին, տաւառ ու հոն դերեղմանեց։

Եւ հիմա, հիմա որ իր մասին աշխարհ մը բան ունիւ ըսելիք, հիմա որ աշխարհին եօթը պորտը մինչեւ, գոն նայեղ ու փարթամ... բառերու հեղեղով մը ողողելու պաշար ու փափաք ու-

նիս, ահաւասիկ որ հիմա կը պապան-
ծիս, կը գալարուիս կը մնաս։

Ահաւասիկ որ հիմա տարօրինակ կուրուքիւն մը կը տարածուի ուղեղիդ, տարօրինակ համբուքիւն մը լեզուիդ կապար կը կապէ։ Ու առկաւին տեսակ մը շփոթ, տեսակ մը մութ իրարանցում, տեսակ մը խուլ դաւադրութիւն էութիւնդ իր հիմերէն կը սկսին տարանջլ։ Ամայութիւն կ'ըլլայ յանկարծ, ունայնութիւն կ'ըլլայ յանկարծ ու կ'ըլլայ քառս, կ'ըլլայ բաբելոն ամէն անգամ, երբ իր մասին կը մտածես, երբ կը փորձես բառեր դնել, խօսքեր ըսել անհետացած բարեկամիդ հասցէին։

Պէտք է սակայն փորձել հիմա, Եւ ուրեմն՝

Եղուարդ Պայաճեան...

Նախախնամութեան մէկ շատ գիտուն ընտրութեամբն էր անկապած, որ հայ ծնած բլլար Եղուարդ, Հայ ու տա-
կաւին այդ Հայութեան ամէնէն ամուր, ամէնէն յամառ ու ամէնէն անճկելի մէկ անսակին աշխարհէն՝ ձէպէլ Մուսայէն։

Նախախնամութեան մէկ շատ դիտումն խաղին շնորհիւ էր անկասկած, որ պատմութեան ամէնէն հին էջերէն իսկ ծնունդ առած ժողովուրդի մը ծոցէն ծնունդ կ'առնէր Եղուարդ ինքն ալ։ Ամէնէն հին, ամէնէն տաշուած, ամէնէն հասունցած ու պատմութեան էջերը վերահասութեամբ, ազնուութեամբ յորդեցուցած ժողովուրդի մը ծոցէն, որպէսզի ինքն ալ, լեցուած, հասունցած, միտք ու մասնութ գարձած կարենար աշխարհ գալ։

Նախախնամութեան մէկ զիտակեց կարգադրութեամբ էր անշուշտ, որ փառք ու բարօրութիւն ըստած բաները Եղուարդին հետ թշնամութեամբ վարուեցան, որ նիւթ ու նիւթեղէն ամէն տեսակ բաւարարութիւն, միշտ հակադիր, միշտ հակառակ ճամբաներով ընթացան, որպէսզի Եղուարդ ինքզինք նուիրէր նիւթէն բարձր, նիւթէն շատ վեր ու նիւթական բաւարարութիւններէն շատ աւելի ազնուութիւն բաւարարող բաներու։ Եղուարդ Պոյսճեան... Ահաւոր, անյապարհ ծարաւ մը, մտքի բաներու, սրտի բաներու...

Բայց ահաւասիկ որ կը սկսեմ պատկերել։ Խելօք-խելօք ու իմաստուն այս խօսքերուն միտքս գտնար կը հեռանի, միտքս գտնար կը հանդուրժէ։ Անմիջապէս որ Եղուարդին մասին է, կայմը կոտրած նաւու նման, միտքս կ'երթայ կը խրի Հոկտեմբերի եղբայրներուն։ Հոկտեմբերի առտուններէն մէկուն մէջը միտքս կ'երթայ կ'ընկղմի։

Հոկտեմբերի այդ առաւօտը, լոյսը տակաւին ինքզինք չէր յայտնած, երբ խեղճ Եղուարդին վրայ տիեզերքին տաքող խաւարը փլոււ։ Արշալոյսի փոխաբան, այդ օր զիշեր ծագեցաւ Եղուարդին համար, անհուն, ահաւոր ճիւղ այն գիշերը, որ կար բոլոր ժամանակներէն առաջ, որ սկիզբն էր արարչութեան եւ որուն մէջ թաղուեցան եւ առաւ, եւ որուն գարունը, եւ քեզեցիկ ամէն բան, որոնց Եղուարդ արժէք կու տար, որոնց Եղուարդ մոլեգնօրէն փարած կը մնար։

Անգաղ ու պաղղ իրիկունները ամ-

բան, խորունկ ու քաղցր տրամութիւնները աշնան ու գարունը իր վարակիչ խնթութեամբ եւ մինչեւ իսկ յուսալքիչ անձրեւները ձմեռուան, եւ ամէնը եւ ա-մէն բան մէկ անգամէն այդ ահաւոր, այդ սոսկալի խաւարին մէջ սուշուեցան Եղուարդին համար։ Բարեկամներ եւ բնականներ եւ զաւակներ։ Եւ զաւակներ մանտանդ, որոնց համար մինչեւ իսկ երկինքները փլցնելու պատրաստ էր Եղուարդ, բայց որ թողուց հեռացաւ։

Եղուարդ թողուց, հեռացաւ ու ալ երբեք չտեսաւ, թէ Հոկտեմբերի այդ արշալոյսը որքան առօրին ու պղտոր հասաւ գէժի լեռներուն վրայ եւ թէ ինչպէս փոսեցաւ անոնց զազաթին, նեխտած օտտակի նման։ Եղուարդ այլեւս չտեսաւ, թէ այդ Հոկտեմբերէն առօրին եկող բոլոր օրերը երբեք, երբեք փայլուն չեղան ընկերներէն ոմանց համար...

Բայց կ'երեւի այդպէս կ'ըլլայ, կ'երեւի գոհար կ'ըլլայ, որ օրերը կը տեղեկան, կը սեւնան, երբ այդպէս յանկարծ բարեկամք քեզ կէս ճամբան կը ձգէ ու կ'երթայ։ Ու գոհարը այն կ'ըլլայ, գոհարութեանց ամէնէն անուշին, որ չեւ կրնար հաշտուիլ, չեւ կրնար համոզուիլ, թէ ընկերդ այլեւս չկայ, պիտի չըլլայ ալ երբեք։ Ձեռն կրնար համագոյնիլ, որ այդպէս յանկարծ... որ կեանք ըստածը ու մահ ըստածը այդքան իրարու մօտ կ'ըլլան, այնքան նման կ'ըլլան իրարու...

Ո՞վ ինչ կրնայ ըմբռնել սակայն, ո՞վ ինչ կրնայ հասկնալ, երբ գոյութիւն մը յանկարծ անէութիւն, ոչնչութիւն կը դառնայ։ Փանի անգամ մէկը պէտք է մնած ըլլայ, քանի անգամ վերտոն ծնած, որպէսզի փորձառու դառնայ, որպէսզի հասկնայ, թէ գոյութիւն ըստածը ճիշդ այդ ոչնչութիւն կ'ըլլայ։ Ո՞վ ինչ կրնայ հասկնալ, երբ այդպէս յանկարծ բացարձակ սուտը բացարձակ իրաւին հոմանիշ կը դառնայ, ո՞ր մէկ դիտունը իր ո՞ր պիտութեամբ կրցած է երբեք այս տեսակ խնդիր լուծել, այդքան խրթին ու այսքան պարզ, այսքան

անհուն ու այսքան ժանր հարցեր պարզել:

Բայց որովհետև հոգը, ո՞վ ինչո՞վ յանցաւոր է, երբ գուն ախտան... անփորձ կ'ըլլաս, ու անգոյշ: Մանուկ էիր, թէ վաղահաս պատանի, որպէսզի տակաւին սորված ըլլայիր, որ շունչ ու շարժում ունեցող եւ ոչ մէկ բանի պէտք չէ երբեք շատ մօտենալ: Այսօր պատանին իսկ գիտէ, որ կեանք ունեցող եւ ոչ մէկ բանի ժարդ չի կրնար տէր դառնալ եւ թէ պէտք է միշտ զգոյշ ըլլալ, յետոյ այսպէս ցիցի մը պէս միմեկ չմնայու համար: Այսքանը գոնէ գիտցած ըլլայիր դուն ալ, որ մարդ պէտք չէ երբեք կապուի կեանք ու շարժում ունեցող եւ ոչ մէկ բանի, ոչ իսկ շան մը կամ կատուի: Այսքանը գոնէ պէտք էր գիտցած ըլլայիր, որպէսզի հիմա այսքան ծանր... չփոթնելու չմտնուէիր:

Մանաւանդ որ, անհետացող բարեկամդ ալ կարծես հեռուէն մասնաւոր ջանք կը թափէ քեզ այդ չփոթնելուն մէջ պահելու համար: Կարծես զաղտնօրէն կը գուարճանայ քեզ այսպէս յիմարած, մոլորած տեսնելով: Ինք որ իբրեւ թէ այլեւս չկար, ինք որ իբրեւ թէ այլեւս բացակայ պիտի ըլլար, տարօրինակ կերպով աւելի ներկայ է յանկարծ, աւելի կենդանի, քան երբ տակաւին շունչ ունէր ու կերպարանք: Այդ իբրեւ թէ անհետացած բարեկամդ, զարմանալի կերպով աւելի մօտդ է կարծես, քան երբ դէմդ նստած կ'ըլլար...

Եւ այսպէս, երբ այլեւս շուրջդ գոյացած անտանելի պարապին հետ հաշտութիւն մը կնքելու երկչոտ փորձեր կ'ընէիր, կ'անդրադառնաս անմիջապէս, որ զանց տուած ֆիդէլիտեան ներկայութեան մը պատճառած հաճոյքը, շատ ալ այդքան բան չէ փոխուած քու եւ իբրեւ թէ անհետացած այդ անձին միջեւ: Այն պղտիկ տարբերութեամբ, որ առաջ ուրիշ տեղ մը կրնայիր հանդիպել քու բարեկամիդ եւ որոշ պահերու միայն, մինչդեռ հիմա... հիմա կրնաս յարաբերել ամէն ժամու եւ ամէն տեղ...

Իր սիլուէթն է յանկարծ, որ կը

փրթի սա դիմացի անկիւնէն եւ այնպիսի մէկ պահու... եւ ամէնէն ջնպստեալ, շուտացուած մէկ պահու: Քալիւրու իր ձեւն է յանկարծ, տենդոտ, հարգատ, որ աչքիդ կը դարնէ ժայթի միւս ծայրէն անպարտող սա անցորդին քով: Եւ իր ծայրին շեշտն է յաճախ, որ կ'արձագանգէ կարծես եւ անակնկալ, անսպասելի կերպով, բոլորովին անծանօթ օտարի մը քով, բայց ճիշդ իր շեշտը, կրնաս դաւաճել գալ... Եւ տակաւին, հազար-հազար ուրիշ բան, որ իրն էին, որ զինք կը յատկանշէին եւ որ այժմ կարծես հասկնայի կ'ուզեն, որ տակաւին իրենք կան, կը մահան: Ո՞վ է ըսեր, որ մեռնելը կորսուի է, անհետանալ, չգտնալ: Երբ այսպէս կրնայ մէկը ինքզինք ամէն ժամու յայտնի ընել, երբ այսպէս, մէկը իր ուզած ժամու եւ ուզած վայրը ինքզինք կրնայ ներկայ ընել՝ ո՞վ է ըսեր, որ ասիկա մեռնել կ'ըլլայ:

Եղբարդ Պոյաճեան...

Երէկ էր տակաւին, կը խօսէինք իրարու հետ: Եկած նստած էր սովորական իր տեղը, սովորական իր ժամուն ու կը խօսէինք իրարու հետ: Կը խօսէինք անդադար, ինչպէս ամէն օր, ինչպէս մեր սովորութիւնն էր, մեր միտքը տանջող հարցերուն մասին: Հարցեր՝ որոնք նիւթ ու նիւթեղէն ոչ մէկ բանի հետ նուազագոյն կապ մը նոյնիսկ չէին ունենար...

— Դուն ալ կը զգաս արդեօք, Եղբարդ, — հարց կու տայի ես իրեն, — կը պատահի՞ քեզի ալ, որ երբեմն յանկարծ զգաս, որ այս երկրին ժարդը չես դուն, ոչ ալ այս ժամանակին: Կը պատահի՞ քեզի ալ, որ յանկարծ անդադրադառնաս, թէ սխալ տեղ ես ինկած: Քեզի օտար մոլորակ մը եւ շատ սխալ ժամանակ մը ցամաք ես ելած: Կը պատահի՞ քեզի ալ, — կը պնդէի անընդհատ, դուն ալ այսպէս անդադարձներ կ'ունենաս, թէ ոչ ես եմ, որ այսպէս...

— Ինչեթ մի ըլլար, Ժօ, — կ'ընդմիջէր յանկարծ Եղբարդ, մտաւորութիւն ներշնչող իր հաստատ շեշտով, — ան-

չուշտ որ կը պատահի, անշուշտ որ ես ալ կը զգամ... — ու աչքերը խուշոր խուշոր բանալով, — Ծօ այս աշխարհքը ի՞նչ տուաւ մեզի, այս աշխարհքէն մենք ի՞նչ կրցանք ունենալ, որ մենք մեզ այս աշխարհէն կտրենստոյնք Համարել, մենք մեզ տեղացի զգալ...

— Այո... անկասկած, — կը միջամտէի ես վարանումով... մեր ուզածը, մեր փնտռածը, բայց այդ չէր որ քսել կ'ուզէի... քսել կ'ուզէի, թէ մեզի համար ուրիշ հոգ մը կար արդեօք, ուրիշ հոգէ շինուած էինք արդեօք ու եկած ինկած օտար այս տեղերը, մեզի համար այս շատ հին եւ կամ շատ նոր ժամանակին մէջ...

— Ուրիշ անձ մը, ուրիշ տեղեր, — կը խոսկէր յանկարծ Եղուարդ, — անշուշտ որ կան ուրիշ տեղեր... խենթ մի ըլլար կ'ըսեմ քեզի... Ծօ ճիշդ այդ է որ կ'ըսէի, եթէ չկան ուրիշ տեղեր, եթէ մենք այդ տեղերէն չենք, հապա ինչու համար այստեղ այսքան պիտի զրկուէինք, մեր ուզածը, մեր փնտռածը չգտնէինք... Ծօ դիտցած եղիւր, եթէ այսքան քան կը պակսի մեզի, եթէ մենք մեզ օտարի պէս, անծանօթի պէս կը զգանք, եթէ յաւիտեան զրկուած կը զգանք, այդ անոր համար է, որ այս աշխարհքը շատ աղքատ է մեզի համար... շատ աղքատ, եւ որ, մանաւանդ, մենք չենք կրնար գոհանալ այսքան աղքատ, այսքան... ճղճիմ բաներով:

— Բայց, Եղուարդ, անիմաստ են ուրեմն մեր տաղանակները, անտեղի են ուրեմն մեր բոլոր փափաքները... հապա մեր միաբեմը, մտածումները, տիեզերքին ու անհունին անհունութիւնները մինչեւ հասնիլ ուզող մեր դիտակցութիւնը, անոնք ինչու կան հապա...

— Ծօ եղբայր, լաւ ըսիր, այս բաները եթէ կը զգանք, այս բաներուն գիտակցութիւնը եթէ ունինք, ինչու չեն ուզեր հասկնալ, որ անոնք կան անպարտաւ, բայց ոչ անպայման այս հողին վրայ... այս մեր կեանքը նկար մըն է, ցոլացում մը, արժագանդ մը միայն այն

միւս տեղան, յաւերժական գոյութեան դիմաց, ուր այլեւս...

— Աղուոր քարոզ կը կարգաւ, Եղուարդ... ինչ աղուոր միտքերն է:

— Ծօ քարոզին մէջսէպր...

Հիմա պիտի նստած ըլլար քովս Եղուարդ, հիմա պիտի դէմ ըլլար ու դաշրանար ու խօսէր...

— Ծօ ի՞նչ կը կարծէիր հապա... մարդիկ ինչպէ՞ս կը մաքրուին, կ'ազնւանան, կը բարձրանան... Մարդիկ ինչպէ՞ս մարդ կը դառնան ու յետոյ ալ կ'տեմաշանան: Եթէ այստեղ ամէն ինչ շով գոհանային, եթէ այստեղ կշտանային, յաղենային, յղփանային, այլեւս ինչու երկինք նայէին, աստուածներուն մօտենային... Ըսէ տեսեմ, — պիտի շարունակէր Եղուարդ, — ինչպէ՞ս կ'ըլլայ, որ հասարակ անուխը աղամանդի կը վերածուի: Եթէ մէկը չզրկուի, եթէ մէկը չճգմուի, չյղկուի ինչպէ՞ս կրնայ իր փրկական մեծին հասնիլ, ինչպէ՞ս կրնայ բիրեղանալ ու այլեւս անյղկելի... անպերճանալի դառնայ:

— Ուրեմն պէտք է միշտ զրկուիլ, ճգմուիլ, — պիտի ընդմիջէի ես, — ուրեմն պէտք է միշտ ստատիլ, որպէսզի յետոյ...

— Ի՞նչ կը կարծէիր հապա, — պիտի յանկարծ պոռթկար Եղուարդ, — բան մը զիտե՞ս որ կարենայ ջերմութիւն տալ տանց ինքզինք այրելու, մէկը գիտե՞ս որ կրցած է շրջապատը տաքցնել, տանց ինքզինք հրկիզելու: Եթէ մէկը ջրանկիւ, չզրկուի, չհատնի... եթէ Գրիգոր շարժարուէր, իրաւունք, յետոյ ինչպէ՞ս պիտի յարութիւն առնէր, եթէ Գրիգորս փշապսակ չկէր, ո՞վ իր մասին կը խօսէր... Բայց չեղեցանք մեր նիւթէն:

Երէկ էր տակաւին, կը խօսէինք Եղուարդին հետ, աշխարհք մը նիւթ կը սպտոնէինք, կը շեղէինք շատ մը նիւթերէ ու կու գայինք ու կը կենայինք միշտ նոյն տեղը, նոյն անոնքն ուէմ: Գու գայինք կը խրէինք նիւթերուն նիւթ հայթաթող միշտ նոյն անոնքնուածին ուէմ:

— Մոռնիլ չկայ կ'ըսեմ քեզի, — կը

կրկնէր եզուարդէւ - այստեղ ոչինչ չի կորուսիր, չի վերջանար: Անշուշտ որ կայ ուրիշ տեղ մը, ուրիշ մէկ վիճակ, ուր այս ամէնը կը վերակենդանան: Ի՞նչ կը կարծէիր Հապա, միայն Հողէ՞ քնք չի՞նչ... Պարապ տեղը կարողացեր ենք Աւետարան, ոտքեր աշտան բան, Ծաղէ անանձ, ցորենի հունար, որ կը թաղուի Հողին տակ, կը մեռնի՞ երբեք...

- Ոչ, մենք միայն Հողէ չենք չի՞նչ... - պիտի պոռար Հիմա եզուարդ, արեւ կայ մեր մէջ, լուսին կայ մեր մէջ, կան ստուղներ ու երազ ու տենչանք... Եւ արեւը, եւ լուսինը, այս աստղերը եւ այս անհուն եւ այս անծայր ու անվարձաւ բաները ստեղծուած կ'ըլլան միայն ու միայն սա Հողերէն ու անցաւոր ու սա ճղճիմ գոյութեան Համար: Ո՞վ կ'ընդունի այսքան յիմար, անիմաստ բան, ո՞վ կ'ընայ Հաւատալ, որ այս անհուն, որ այս անվերջ բաները՝ արեւ, լուսին ու աստղեր ու նաեւ միտք ու մըտածութիւն, գիտակցութիւն ու գլխադիր գիտակցութիւն, չի՞նչու կ'ըլլան այսպէս անիմաստ կերպով ու անպատասխան... Մօ, ըսէ անանձ, միեւնի Հողէ՞ չի՞նչ... Եւ քնք մենք, կ'ընդունին՞ք զոն, կը Հաւատա՞նք... Միեւնի Հողէ՞...

... Ընդունի՞մ, Հաւատա՞մ, որ ի՞նչ յետոյ: Որպէսզի յետոյ Հող եւ ուրիշ ոչ մէկ բան... Որպէսզի յետոյ ահաւոր խեղճութիւն, ահաւոր տխրութիւն, ու խաւար, ու վախ, ու ոչինչ...

Իայց զոն անհոգ կեցիր, եզուարդ: Ես գիտեմ, կը Հաւատամ, որ արարչութեան եօթը օրերու մարանչումներուն իմաստ տալը մարդն է միայն: Այդ օրերու յոգնութիւնը հրաշքով մըն է պըտակուած, որ յետոյ կոշուած է ՄԱՐԴ...

Ես գիտեմ, կը Հաւատամ, որ այս հրաշքը կրնայ որ մը Հողով սկսած ըլլալ, որ օր մը Հողը իրեն միջոց կրնայ զործածուած ըլլալ, բայց որ յետոյ մարդը անցած է այս բաներէն շատ անդին... Յետոյ եղած է Հողի, յետոյ եղած է միտք, եղած է յոյս ու Հաւատք... Յետոյ մարդը յաղթած է Հողին... յարութիւն տուած: Այո, եզուարդ, մեռնիլ չկայ, կը Հաւատամ: Արեւը վկայ, լուսինը վկայ, մեր այդ փնտրած ու շփուած գեղեցիկ ու վեհ ըստ բաները վկայ, ես կը Հաւատամ:

Անհուն, անսահման արշալոյս մը գիմարած աշէրը կարելի չէ որ այսինչ չտեսնեն, որ յաւիտեան խաւար մնան: Ես կը Հաւատամ, արեւը վկայ, լուսինը վկայ ու բանաստեղծին սա խօսքը վկայ:

Քնաղոյս եւ կամ սեւ, ամէնքն ալ սիրուած, ամէնքն ալ սիրուեմ,
Այնքն անհամար կը դիտեն տարբեր արշալոյս մ'անհուն,
Հոգ չէ քէ անոնք գոցենք հոս տխուր միտքերով անել,
Գերեզմաններէն անդին ալ անոնք կարող են տեսնել:

Ժ. Ա.

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԻՈՒՏԵԱՆ

ԵՂՈՒԱՐԴ ՊՕՅԱՃԵԱՆ

Այնճաք գէշ տեղ մըն է...
Հոս՝ տաքածութիւն է, ծանօթոյք
և մահ... և ցնի ամէն կողմ, կարմիր,
լարնուն...

Կը ննջէ այն հողին մէջ, որուն փո-
շին շնչած է և խառնած՝ իր արեան
կաթիլներուն. ապրած է այն երկինքին
տակ, որուն ամբողջ արեւը, ամբան
կէտօրներուն, հայեցուցած է իր երազ-
ներով լեցուն դանկը:

Հողի այս կեղծ ուռեցքին տակ, կը
ննջէ մարդ մը, հայ դրոշմ մը: Տակաւին
տնոր դադաղին առիտակները բոյն մը
կը շինեն, պաշտպանելու համար հողին
մէջումէն իր առաջագոյն մարմինը: Բայց
հետո չէ այն օրը, երբ պիտի փոխին
անոնք խոնարհութեան ներգործութեան
և արգելքու տնայդ ախորժակին առջեւ,
և հողը՝ իր մայրական թւերուն մէջ
պիտի անէ տնոր սկզբները, որպէսզի
խոննէ գանձը բոյնբու կեանքին հետ
ևս լուծէ անհունին մէջ: Այն ատեն ի՞նչ
պիտի մնայ մեր յիշողութեան մէջ իր
գոյութիւնն. արդեօք մեր մէջ ալ պի-
տի չփչի՞ր՝ առօրեային ճշումին տակ
յիշատակի այն պզտիկ անակը, որ կա-
ռուցած էինք, ինչպէս կոտորուեցան իր
դադաղին առիտակները հողին ծան-
րութեան տակ:

Մտքդ մը մեռաւ. հայ դրոշմ մը
կորսնցուցինք... Եւ իւրաքանչիւր հայ
դրոշմն, հայ արուեստագէտին, հայ
մարդուն սրտին մէջ բան մը մեռաւ,
բան մը կորսուեցաւ:

Հիմա՝ ամեններ ետք, կրնանք չա-

փել մեր կորուստին տարողութիւնը:
Հայ արդի գրականութեան տաղանդա-
ւոր ժապետներէն էր Եղուարդ Պօյաճեան.
Եւ ժնկնեցաւ երբ ասկաւին շատ ըսե-
լիքներ ունէր, հասունութեան սեմին
օտք կոխած:

Սակայն որո՞ւն դէմ բողոքել, ո-
րուն զանգատել...

Առտուն՝ որ ստեղծած է կեանքն
ու մահը. ճակատագրի՞ն՝ որ մեզի կը
ներկայանայ նենդ դիմուկով մը. հայ
ժողովուրդի՞ն՝ որ երբեք չէ գիտցած
զնա՛հատել իր արժէքները. հայ հասա-
րակութեան՝ որ շատ քիչ կը հետա-
քրքրուի հայ արուեստով և հայ դը-
րականութեամբ: Եւ որուն համար հա-
յերէն գիրք մը կարգաւ յղանութիւն է
ևս աստանք:

Այս տղան ճանչցաւ կեանքի բոլոր
դառնութիւնները. ապրեցաւ տարազու-
թեան ողորդութիւնը և գրեց անոր տո-
մարը. ճանչցաւ հայ ուսուցչին յուսա-
հատեցնող ասպարէզը. իր տաղանդը
չկրցաւ ծաղկեցնել, որովհետեւ նիւթա-
կան պայմանները չէին ներել, և չեն
ներել որ հեղինակ մը պէտք եղած ժա-
մանակը արամաղիէ իր գործը կատա-
րելագործելու և զայն հրատարակելու:
Եղուարդ Պօյաճեան երկեց այն թե-
մաները, որոնք կը խօսին քսաներորդ
դարու հայ մարդու սրտին. բայց թէ
որչափով հայ մարդուն սիրտը արձա-
ղանդ կանդիսացաւ այն էջերուն, այդ
ուրիշ հարց:

Պօյաճեան նոր աչքերով դիտեց

զհանուր մարդկութիւնը, որ կը սիրէր ամէն բանէ վեր, սիրեց մանաւանդ չհայ ազգը, որուն ընկոյրներուն կատարեալ-պարզեղական մաքառումներուն եղած է եւ զերակատարը եւ անանատեղը, սիրեց նաեւ զհիւստեամբ կերպով մեր զրականութիւնը, որ մեծ է եւ քանչեւիք եւ զուսկեցաւ անոր սիրոյն: Որովհետեւ մեր զրականութիւնը, յարատեւելու համար, միշտ ու միշտ կը պահանջէ նահատակներ: Հայ միտքը, մարտիրոսներու կը վերածէ անոնք, որոնք կը ջանան իրեն ծառայել: Եղուաբոյ Պօյաճեան հայ գիրին մարտիրոսներէն մէկը եղաւ:

Պօյաճեան բանաստեղծը ապրած է կեանքի քառուղիին վրան: Ենդամայրը ուսմանակից եղած է գերեզմանին. պարագայ մը՝ որ լաւ կը քաջատրէ այն մըտերմութիւնը, որ ունեցած է մահուան հետ: Իր իւրաքանչիւր էջին մէջ կը պատկերանայ առնչեղ ու պզգալի գէճը այդ ամենի ու քաղցր հեղափոխին, որ մերի աւելի կապուած է քան մեր մայրը: Իր մանկութեան շրջանին սիրած է մեռելախառններու լուսութիւնը եւ շիրիմներու անշարժ ու սոսկալի կենդանութիւնը. եւ իր հիւանդի անկողնին մէջ մտերմիկ խօսակցութիւններ ունեցած է անդնապանի խորհուրդին հետ:

Գերեզմանէն քիչ մը անդին, կը բարձրանար եկեղեցիին խորհրդաւոր զանգուածը, հայ մարդուն միակ հայրենիքը ի սփիւռս աշխարհի. այդ Աստուծոյ տունը, որուն շորս պատերուն մէջ կ'ապրի հայ հոգին, որուն քարերը ծածկուած են մեր նախնիքներու անտեսանելի զէնքերով, որուն սիւններու մակերեսէն կը հոսին մեր ազօրքներուն եւ շարականներուն մեղեդիքն:

Եւ շուրջը կայ բնութիւնը: Պօյաճեան սիրած է զայն եւ անկէ ստացած է զուարթում եւ սփոփանք: Արեւը, լուսինը եւ աստղերը եղած են իր մտերիմ բարեկամները եւ անոնց շտապելու կամ քաղցր լուսին վարագոյրէն անդին, Պօյաճեան զգացած է դոյութիւնը Յաւիտեանական Լոյսին: Ամէն տեղ զգացած է Արարչին Հայրական եւ Հոգածու շունչը:

Այս տիեզերական թեմաներուն, Պօյաճեան մօտեցած է որտի անկեղծութեամբ, մտքի անդորրութեամբ եւ հոգիի խռովքով: Եւ այս անկեղծութիւնը, անդորրութիւնը, եւ խռովքը կը յատկանշեն նաեւ իր ինքնատիպ ոճը, առանց որուն կարելի չէ տեղ դնել զրականութեան Պանթէոնին մէջ:

Ըսինք՝ Պօյաճեան տիեզերական թեմաներուն մօտեցած է որտի անկեղծութեամբ, առանց որուն արուեստը չի կրնար վաւերական ըլլալ: Իր գործերուն նիւթ դարձուցած է այն անձերը, այն վայրերը եւ այն անցուղարձերը, որոնք իր կեանքին հետ անմիջական կապ ունեցած են: Զանազան է տալ դասունք իրենց իւրաքանչիւր մանրամասնութիւններով եւ մանաւանդ ջանացած է եւ յաջողած՝ թափանցել անոնց էությունէն ներս: Եւ իր ապրումներուն հուրովը կըցած է ստեղծել մթնոլորտ մը, ուր նկարագրած վայրերը եւ անձերը կ'ապրին տրուեստի պահանջած ներդաշնակութեամբ: Եթէ այդ մթնոլորտին մէջ կը տիրէ Հարազատութիւն մը, այդ անոր համար է, որ Պօյաճեան կապուած մնացած է իր առօրեայ կեանքի Փնմին հետ, իր անմիջական միջավայրին հետ:

Այդ տիեզերական թեմաներուն, Պօյաճեան մօտեցած է նաեւ հոգիի խռովքով: Այդ հոգեկան խռովքը կարելի է գտնել գրեթէ մեր բոլոր վաւերական գրողներու գործերուն մէջ: Հայեցողութեան երեւոյթներէն մէկն է այդ: Բոլոր հայ արուեստագէտներուն պէս, Պօյաճեան սեւ անկիւն մը ունի իր ներաշխարհին մէջ: Տեսակ մը յաւիտեանական բողոք ճակատագրին դէմ, որ երբեք բարեացակամ չէ եղած մեր ազգին հանդէպ: Այդ ըմբոստութեան ոգին կարելի է մանաւորաբար նկատել Պօյաճեանին նախադասութիւններուն լարուածութեան եւ դէպքերու տինամիք բնոյթին մէջ: Իր հերոսները կարծես իրարու կը հանդիպին ո'չ թէ բարեկամական մթնոլորտի մը մէջ խօսակցելու, այլ վէճի նիւթեր Հայթայթիւով իրարու հակաճառելու. տեսակ մը դատարան՝ ուր միայն

ամբաստանեալներ եւ փաստաբաններ կան, բայց ոչ դատաւոր։ Եւ երբ զործողութիւնը վերջանայ, երբ անձերը իրարմէ հրաժեշտ առնեն, կարծես բաժանում մը չէ որ տեղի կ'ունենայ, այլ դադար մըն է որ կ'առնեն, կրկին հանդիպելու դադարի մտադրութեամբ, որովհետեւ անոնցմէ իւրաքանչիւրը քով գիտէ, որ չէ կրցած համոզել իր հակառակորդը, եւ իւրաքանչիւրին համոզումը կը մնայ իր մաքին մէջ աւելի ամուր, քան ձէպէլ-Մուսայի անխորտակելի զանգուածը, ուրկէ ծնունդ առած են նոնք։

Եւ սակայն, Պոյանեանի էջերուն մէջ կը տիրէ մտքի անդորրութիւն մը, որ բոտ ինծի իր արուեստին մեծագոյն արժանիքն է։ Եւ այդպէսով ինքն իսկ կ'ըլլայ իր գործին եւ առարկան եւ ենթական։ Այդ մտքի անդորրութիւնը միահեծան կ'իշխէ իր էջերուն վրայ, եւ իր վայրագ պոռթկումներուն արձագանգը կը խլացնէ, բառերուն հազցնելով պողպատէ կաղապար մը եւ նախադասութիւնները քանտարկելով երկաթէ վանդակի մը մէջ, որուն ձողերը կը թրթռան ներքին ուժանկութենէն։

Եւ իր ամէնէն խռովայոյզ էջերուն վրայ կը սառածի տեսակ մը կեղծ խաղաղութիւն, փոթորիկը կանխող բռնութիւն մը, որ երբեք չեն խարեր ուշիմ ընթերցողը, որովհետեւ այդ անխորտակելի պատնէշէն անդին կը լռուին

սրտին ալիկոծութիւնը եւ հոգիին վրդովումը։ Եւ այդ պաշտամաններու ուժգնութենէն եւ նախադասութիւններուն կեղծ շորութենէն կը ծնի Երևմուք մը, որ ինքնայատուկ է Պոյանեանին։ Նոյնիսկ ամէնէն ողբերգական տեսարաններուն եւ ամէնէն յուզիչ դէպքերուն առջեւ, նոյնիսկ եթէ ըլլայ մահուան ներգործութիւնը, այդ Երևմուքը կը ծաղկի խաւարին ծոցէն եւ շնչիկ կը դարձնէ այդ հեղձուցիչ մթնոլորտը։

Պոյանեանին համար դրականութիւնը եղած է երկրորդ կեանք մը, թերեւս աւելի շօշափելի եւ դժուարացիւն քան իրականը։ Ինք ընտրած է քաղի մեր զբոսականութեան լալի պողոտային, յաճախակի կողմնակի շեղումներ ընելով հագիւ նշմարելի արահետներէ, հոն որոնելու համար նոր պատկերներ, նոր թեմաներ։ Իր միտով ու արիւնով կառուցանած է արուեստի աշխարհ մը, գիտցած է հոն ապրել ու ապրեցնել, անոր տալ ուրոյն մթնոլորտ մը։ Կրցած է հնարել դէպքեր, նկարագրել տիպարներ, որոնցմէ ժամանակը չի կրնար բան մը զնդչել, որովհետեւ անոնք կը կրեն արուեստին արքայական կնիքը։

Գրականութիւնը եղաւ Պոյանեանին երկրորդ կեանքը, բայց այդ կեանքը կը շարունակուի միշտ, մինչ իրականը վերջ գտաւ։ Մարդ մը մեռաւ, բայց չի մեռնիր բանաստեղծ Պոյանեանը։

Ն. Զ.

Ե. ՊՈՅԱԾՅԱՆ

Տոսար
Տարագրի

ՊԵՅՐՈՒՄ 1963

Հոմար Տարագրի հասարակ ժողովրդական պարբերականները, առաջինը կը վկայագրեն մարզու մը, մարդոց, գիւղացիներու, Լեյնաբայներու, Մուսա-Տաղիներու մասին, աւելի շատ աւելի լայն է շրջանակը իր ազդեցութեան, ու հեղինակին վկայութիւնն է՝ Հայուն մասին, հայ ժողովուրդի տարագրի ազդեցութեան, հարստեան, ցուանքուն ու ցանկութեան մասին:

Տոմար է, Տոմար, Պոյանեանի գրածը, ու տարագրի տոմար, տարագրի մարզու, տարագրի հայ ժողովուրդի առաջինը...

Կարելի է Պոյանեանի Տարագրի Տոմար պատուել, կարտել, էջերը բաժնել իրարմէ՛ն նոյնիսկ, եւ վերջնէ՛ն մաս մը, հաստատեմք, պարբերութիւն մը նոյնիսկ երբեմն. ու այդ պարբերութիւնը իւրաքանչեւ ճշմարտութեան մը կը պարտական է, կ'աւտայայտէ հարազատութեամբ ու ազդեցութեամբ:

1963

Բ. Փ.

ՍԱՐԱՀԱՐԹԻՆ ԴԱՇՏԱՄՈՒԿԸ

(ՈՒՍՏՈՒԱՆԵՐ)

Աշխատանքի իրականացման մէջ իր ցուրտ ստուերներուն զանգեւածը կ'իջեցնէր բարձրաւանդակի հարթավայր գետնի մը խաղաղութեան վրայ, երբ եւ տեսայ մուկը, որ իր ծակէն քիչ մը հեռու, կը խոյանար բալթայն անուղեկութեամբ դէմ, որոնք առաւել զօրութիւն մը եւ տեսականութիւն պիտի ապահովէին իր կեանքին:

Անոթի եւ հօր մուկ մը: Գորշ հողերու գոյնով, գորշ իրականութեան գոյնով: Ապրելու ուժեղ կամքով մը մտած էր կեանքին մէջ ու մեծցած: Իր չնչին ծաւալին մէջ կուտակուած էր ուսելու անսպառ հոգեւոր մը, յաղթական ախարժակ մը: Իր գորշ, գրեթէ անփայլ մորթը՝ ապրելու մասշտաբաւորութիւն մը քուստի ինքն, ուղղութեամբ՝ կեանքին դէմ եւ անոր բազմաթիւ անհաղթ շրջապատին:

Կամակոր էր, պինդ, սրտնեղ: Սոսկալի արագութեամբ՝ կերպար միջատ մը: Անկարագրելի փոքրով մը՝ տուր քիթը միջինց տատկած դողօշի մը փորձաքննութիւն մէջ: Ականջները տնկած, անհատաւորութեան զգայուն ամէն մանր շարժումի, ուղղութեան եւ գոյատեւելու հօր կամքի մը մէջ ձուլուած՝ խաղաղութեան քանդակ մը կը տեղափոխէր յետոյ դէպի իր ծակը:

Սիրեցի՛ այդ մուկը, իմ գինձ ապրելու գորշ ջերմութեամբ մը, գրեթէ կրակի մը վերածած ըլլալուն համար: Որովհետեւ Սեպտեմբերի իրականութեան կը ծաւալէր անսահման հարթավայրի վրայ, եւ այդ փոքրիկ կեանքը:

digitised by A.R.A.R.®

դամին՝ կեանքի հրալիր այլ սեւ գնդակի մը պէս կը թաւալէր իր գոյութեան ազատամարտին շուրջ՝ սուր քիթը մխրճած կեանքին ուղղակի սրտին մէջ:

Բնագոյ էր ան, արիւն՝ եւ Անյայտութենէն նետուած կեանքի կտոր: Ու կեանքը հրաման մըն էր, եւ ինք պիտի կատարէր այդ հրամանը, նոյնքան պատասխով աւ Վեհաթեամբ, որքան փիղը, որքան վագրը, որքան իր ցեղին թշնամին, — անարկու դաժանութեանց թագակիր կատան:

Ըստ այդ դաժանացած, վեհացած մուկին՝ տրուած կեանքը լիովին սպրնդէն դուրս՝ չկար ուրիշ օրէնք: Չկար ամոր հաւատար ոչ մէկ ուրիշ նուիրակներուն: Եւ սպրնդները կ'սպրնդէին՝ ընդդէմ ամէնուն, ընդդէմ ամէն վտանգի, ամէն արեւմարեանքի:

Կեցած էր քիչ ետք ճիշդ ծակին քով, քիթը տնկած օդին մէջ, կաքծնա կը փրկեափայէր ճիշդակամ այս մուկը.

— Վա՛յ անոր, որուն քիթին ծայրը թաւականաչափ խորամանկութիւն չկայ, ու եղունգներուն մէջ՝ ռ'ւժ:

— Վա՛յ ամոր, որուն ականջը չունի Ջարիֆին ծածկաստեղծութեան քանալին: Վա՛յ այդ տեսակ անհասկնալի, մանաւանդ ժողովուրդին:

— Վա՛յ ամոր, որ հեռու է իր ազատամարտէն, ազատաշատէն, հողէն: Վա՛յ այդ տեսակ անհասկնալի, վա՛յ այդ տեսակ ազգայնուն:

— Եթէ հեռու ըլլայի ազատամարտէն, ազատաշատէն եւ հողէն՝ անխելք պիտի ըլլայի, պիտի վախճայի միշտ ու տկարացայի: Մանր ու վերացական մուկերու պէս պիտի ըլլայի, մանր եւ օղային ժողովուրդներու պէս:

— Մեծ ու մեծար մուկ մըն է, գրեթէ անգամ մուկ մը: Մուկի մարտիս տակ ունիմ գիւ հալածող թշնամիին միտէն, կատուի՝ միտէն: Տեսայ որ այդպէս պէտք է: Անխելութիւնը կ'ատնէ: Անթաքիւնն ու վախճալ: Կը սիրեմ իրիկունը, ստուերը, տարածութիւնն ու վտանգը:

— Ուրիշ մուկերու պէս չեմ: Զանգուածներու մասնիկը չեմ, անոնց փաշին չեմ: Գերի, տկար, վատթար չեմ: Ոչ մէկ ալիւր գիւ կը կաշտուէ եւ ոչ մէկ շաքար կը հմայէ: Կը խնդամ ջաղացպաններուն վրայ եւ կը պժգամ շաքարավաճառներուն նեղատար ժպիտէն:

— Ու չեմ նաեւ այն մուկերէն՝ որոնք ջրանցքներու շուրջ կը տխմարանալ եւ կամ առտուան արեւին տակ, անօթի, ծարաւ, երկչափ խմբական հաւաքոյթներ կը սարքեն, ժողով եւ միջին կը գումարեն: Անբռնիկ արուած հոգիով մուկ մը չեմ: Ճանկ ունիմ, քիթ եւ կամք. անոնց կը վստահիմ: Կը սիրեմ ազատութիւնը, նաեւ լոյսը կ'ստորանա եւ տարածութիւնները կեանքին:

— Թող ասկէ ետք անհասկնալի ու ազգերը իրենց մարտին տակ աւելի՛ գորաւոր քան մը կրենք քան որ կրած են դարերու դժբախտութեան մէջ. թող հաւատարի իրենց մկանին գորութիւնը թշնամի մկանին արիւնաբոր գորութեան, թող իւրացնեն թշնամիին մկանը, թշնամիին զիպը, թշնամիին բարկութիւնը: Եւ թող անոնց քիթին ծայրը՝ հեռաւոր հաստառութիւններն ու ճարտարութիւնը գամ ու միասին բնակին:

Ծ. Պ.

(«Տոմար Տարադրի»)

ԱՆԹՈՒԱՆ ՊՈՒՍԹԱՆԻ

ԱՅՍՊԷՍ ԱՆՑԱԻ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՄԸ ՄԵՐ ՄԷՋԷՆ

Նգուարդ Պոլաճեանի յիտառակիք

Մայրամուտին
Արեւն ինչպէս կը հաւաքէ շող առ շող
Լոյսը տնքաւ,
Ինքն ալ տակաւ
Ժողովեց լոյսն իր,

Եւ շեղեցաւ,

Բարձունքներուն աւ երկինքին
Ժառանգ տալով աստղերը որ՝
Վազուան համար պիտի ծընին
Յայտեր տնծիք,
Եւ հազն իրեն ծաղկում պատանձ՝
Գընաց ընդմիջտ, անհունեղսոր
Կապոյտ աշխարհն իր երազին:

Ջգայճութեան խո'ւրճ մ'հրեղէն,
Ու ջիւերու խըռովայայդ
Տքցակ բռնկում,
Փրփրեղեղեղ կի'րք արբազան,
Կեանք մ'յորդարույս,
Աշխարհն որուն՝
Տարածութիւն աւ մեծութիւն,
Աշխարհն որուն՝
Կարօտանք է, Յայտի կամարչ,
Աշխարհն որուն՝
Նրազ է բիւ, ասկի տնուրչ,
Որ տարագի չունի ասեման,
Եւ չափանիշ՝ խորատուգման:
Եւ այդ ինչպէ՞ս
Չը յորդէր դուրս կեանքն իր վըճիտ
Մարմնի բանտէն՝ փխրուն, վըտիտ:
Ունայն աշխարհ,
Ճըմարտութիւն՝ ամուլս, խաւ'ր:

Անապատին մէջ հըրաշէկ
 Մարաւանիւծ անցորդ մ'իմչալէս յագնաբեկ
 Որում յագորդ կու տայ միայն
 Յո՛յսը ջուրին ու պատրանքը խաբուսիկ՝
 Երեսեց իմքն ալ, ծծեց տնայգ
 Երեսախոսին ծուխը պատիր,
 Բայց չըստացաւ աւելի քան
 Կրկնեքնոյթն առհաւակամ:

Եւ կը քալէ՛ր,
 Պայծառակերպ ու տեսաւաք,
 Կը ճամբորդէր միշտ լուսաքել,
 Մարմինն էր լուկ կապն աշխարհին
 Եւ իր միջեւ,
 Բայց իր հագին տեղ մէկ ուրիշ,
 Պայտաքիւնն իր՝ հեռո՛ւ, հեռո՛ւ
 Վերսիտ մարմնէն,
 Համապագորդ կոխած հոգէն:

Ու «քարեւորդ լուկ կ'առնէր կանգ,
 Կը բացխփէր աչքը շուտը,
 Ու կ'արթննար՝
 Բարձունքէ մը ինկողի պէս,
 Կէս գիշերին
 Քունէն քանի ելլող մ'իմչալէս
 Մէկ ձեռքին մէջ ճերմակ ծըխիկ,
 Խօկ միւս ձեռքին՝ բազթեր ու գիրք:

Յագնած՝ կեանքէն,
 Յոգնած կեանքի տրիտը տաւմէն
 Ճըշմարտութիւնն ամբողջական
 Հանչցաւ միայն վերջին անգամ,
 Երբ յաւերժի բացուող դրան
 Երբ յաւերժի բացուող դրան
 Կրօնին ունկին հասաւ հեռուէն...

«Յագնած եմ ալ, պարտաւորեմ,
 Կ'ուզեմ մտնել խորունկ քուն»-
 Քըմացա՛ւ,
 Եւ այդ եղաւ քուն մ'անդաւ...

Կանքեղին պէս խորանին
 Որում ձէքն է ցամաք ի ոպառ՝
 Այրեց ինքզինքն անդադար
 Միշտ լայս տալով խորանին.
 Եւ՝ աբշալայսն էր աւա՛,
 Կանչը հնչեղ ափերին.
 «Վերադարձիր, վերադարձիր»

Քաքի շուֆին՝
 Բայց իմ հակեց գրութիւն խոնդ
 Ու քննացաւ...

Ձեքը ցամաք՝, ի՞նչ հոգ,
 Խոյ պատրո՞յցը, — բող վտոյի
 Եւ խորանը լուսաւորուի,
 Մընացեալը՝ աւանաւորի մնազոք:

Յոգնած՝ պիտի ջիգերէն մըշտավառ,
 Յոգնած՝ նեարդներէն դիւքավար,
 Յոգնած՝ շիկնաւ սըրտէն մանկական,
 Այսպէս անցաւ բանաստեղծ մը մեր մէջէն:

Մեռա՛ւ... աշունն է մեր դռներուն,
 Օրն այն երբ՝ տերեւները ճամբացած են ծառերէն,
 Օրն այն երբ՝ երգն է մարած կրտսեղին մէջ քաջամինն,
 Օրն այն երբ՝ մութ է դէմքը երկինքին:
 Ո՛ւր են սակայն կեանքները բիւր գոհելու
 Եւ մընացեալ մէկը՝ զովքը նրգելու,
 Երգինն ո՛ւր է, որուն փառքի մտտեանին
 Ձէ գրուած էր վերջին:

Ո՛չ, չրոտաւ փախուստ դաշտէն գուպարի,
 Ո՛չ, չըղըրաւ պատեան՝ ուրը պայքարի,
 Ո՛չ, չէր փակեր կողերն հրէ՛
 Տեսած չլլայ արշալոյսի խոստումն ասկի:

Եւ վաղը՝ կու գայ գարուն,
 Բարձունքներուն, գագաթներուն,
 Ու կը ծաղկի Պէ՛հան կրկին,
 Նարկիզ աւ վարդ ու մարգըրիտ՝
 Կը վերածաղկին
 Եւ իջեալ կ'ըլլայ շիրիմը բուռններուն,
 Եւ դռն, որ շունչի դուռ ու համգիտ
 Վաղը՝ ցոյց կու տա ինծի շուֆին Այնճարի,
 Եւ կ'ըսես՝ «Ահա անոնք, բերքը առաւ»
 Գրքին տառիւն,
 Սըրտիս աւիւնին,
 Շունչիս արեւին,
 Կը հասկընամ բառերդ պայծառ հնչող ունկիւն,
 Զի կեանքի մէջ ու վասն կեանքի տուիր անհուն,
 Մահուան գիրկն ալ գարձար համակ գոհաբերում:

Հայտնագործ
 Յ. Գեղարդ

ԱՆՔՈՒԱՆ ՊՈՒՍԹԱՆԻ

3. ԳԵՂԱՐԴ

ԲՈՂՈՔՈՂ ՈՒ ՆԱԵԻ ՀԵԳՆՈՂ ԵԴՈՒՐԱԴ ՊՅԱՃԵԱՆԸ

Լեցա ծիծաղ է դառնի

— Քալէ՛, Եղուարդ, օղի մը խմենք։
Կամ՝ եթէ օղիի սեղանի մը հրաւէ-
րը չառ իսկ է արդէն՝ կը բաւէր, օբե-
նակ, քովորականէն տարբեր, փայլուն
թղթիկով պատած սիկատ մը երկարել
իրեն՝

— Ե՛րե՛, Եղուարդ, ու համը տես։
Որպէսզի Եղուարդ պահ մը կանգ
առնէր, ձախ աչքը վերածէր միտքի ծա-
կող դնդասեղի, աջը լարէր՝ հոգիդ կար-
դացող խորաթափանց մանրագէտի նը-
ման, դեղին ձիւթի պէս աճող հեղնական
ժպիտ մը լեցնէր մաշած ալտերու փո-
սիկներուն մէջ եւ հարցնէր ծիծաղկոտ՝
— Ի՞նչ կայ նորէն ասոր տակը...

Վարժուած չէր մեծարանքի, մտե-
րիմ գուրգուրանքի։ Խորթ դասակն էր
կեանքի, արեւոտ ալ խոտոր ճամբանե-
րու ուղեւոր։ Մարդիկ միշտ խաբած
էին զինք, կրնային խաբել որեւէ ատեն։
«Ձրի բանուոր մը, ձրի բանաստեղծ մը,
ձրի բարութիւն մը» եղած էր յաւէտ։
Ասոր համար ալ կատարածու էր նոյնիսկ
ամէնէն մտերիմ մօտեցումներու հան-
դէպ, եւ «ամէն թայտփոխ՝ ասեղութիւն
ու պօզանք ամէնուրեք հանդէպ», ինչպէս
եղած էր պարագան իր հերոսներէն «Ձո-
րեպան Գալուստին»։

Յանցանքը ի՞րն էր, երբ աչքը բա-
ցած օրէն ցաւ կը տեսնէր շուրջը, վա-

ռօղ ու արիւն։ Ապա՝ զարթոյնի ցե-
խոտ ու ողջոտ ճանապարհ, օտար զաւ-
տովայրերու ցուրտ ու բուք, թշուառու-
թիւն։ Մինչ իր ծննդավայրի կապոյտ
լեռը, շաքարի ու փիլաւի պէս համով,
բոժին կ'իյնար Սուտի ու Խաթուրեան
սնամրցելի վարպետ՝ Թուրքին։

«Հող»ին վրայ նկատած իր առաջին
թայլերուն, «Փոք Մկոյնի Գժտեան Վար-
ժապետին մեղադրապարտ հեղնանքով
ծնփուած դառնութեան նետը աշխարհի
եւ անոր Ստեղծիչին հասցէին՝ կազմած
էր առանցքը իր դիտաշխարհին (օրթիք),
կորիզը իր աշխարհիմացութեան։

«Վեց օրուան մէջ, ամէլէ շինուած
աշխարհք մը, Էլիպէթ ծուռ կ'ըլլայ. եւ
դեռ ձեռքով չդպաւ անոր. այսպէս ըլ-
լայ, այնպէս ըլլայ՝ եւ եղաւ այսպէս ալ
ծուռ, այնպէս ալ ծուռ, ի՞նչ կայ, շա-
քարը ջուրն էր ինկեր»։

Եւ Առտուծոյ ձեռքով ծուռ ու թերի
շինուելէ ետք՝ ծուռ աշխարհն ու թերի
մարդիկը միշտ ալ կը դիտէր Եղուարդ
դառնութեամբ, բնդվումով։ Դառնու-
թիւն եւ բնդվում, որոնք տաք կուպրի
պէս կը հոսէին, կը փակէին իր հոգիին,
կը սալարկէին կեանքի ճամբաները, կը
տաղէին հերոսներուն ներքանները։ Ե-
ղեմակիմովն ամկեղծ մարդու դառնու-
թեամբ կեանքն ու աշխարհը դիտող Եղ-

արդի նայումները զատելու են նկատել լույս մը կը թուէր շուրջիններուն: Մինչ՝ «հողին մէջ ամբարումն անսպառ սէր մը ունէր» ինք՝ Մարգարէն, մանաւանդ Հայուն ու Հայաստանին հանդէպ, թողնէր, բայց նաեւ Հաստաճ՝ Աստուծոյ հանդէպ: Ասոր Համար ալ իր զիրքը, իր զիրքերը կ'ըլլային հեղքի եւ աղօթքի շնորհակցութեամբ, ուր ապա Տիեզերականին հանդէպ մարդու անգործութեան համոզումի իր լացը շատ անգամ կը փրկածուէր ծիծաղի, դառնութիւնը՝ հեղեանքի, բողբոջի կատակի:

Եղևարդ չէր ինքզար, խոժոռումը կը պահէր խոտապոյն պիծերու մէջ միայն այն ատեն, երբ աչքի առաջ կ'ունենար Հայը եւ անոր շարժումները, անոր դէմ ներթուած դաւը, անոր փափաքով ճակատագրերը: Կը յորդէր ինքն իրմէ դուրս, կատաղած ու բարկ դարձնուրի պէս, կը դառնար բողբոջի եւ անէծքի հըրեղէն տարափ:—

«Կենանք ողբի մըն է Հայուն ծոծրակին փակած»:

Մեծ կոտորածէն ետք ինչպէ՞ս հանդուրժէի, ինչպէ՞ս համակերպիլ այնքաւ երկրորդ տեղահանութեան, կրկին վերդնել զաղթականի ցուպը, լքել Հայրենի տուն ու վերհղման, առանց մաղձը չըրթնելու զայն:

«Ամբողջ ժողովուրդ մը աւելուքի պէս կը թափեն, իրիկուն մը, անապատի մը մէջ: Աստուած թող պատճառ հողիները աւուրք ընէ, եւ աղբանոցի մէջ թափէ»:

Իսկ երբ նայումները կանգ կ'առնէ թուրքին եւ անոր դեհնակաւ թրքութիւններուն վրայ՝ ցատումը նուազադույն աստիճանի վրայ է դեռ երբ կը պոռայ Եղևարդ, հերոսներուն թերեւով:

«Մատանայի աղբանոց դառնայ տաճիկի ամէն քաղաք»:

Իսկ սիրտ կ'ուզէ խնդալու, նոյնիսկ տիւրօրէն ժպտելու համար, երբ դադարական Հայրենակիցներու թշուառութենէն աւարեկութեամբ կ'աղաղակէ Այնճարի այս աղան:

— Ուզտ տեսնելէն մեր կնիկները

ուզտ պիտի ծնանին այս Այնճարին մէջ: Պատու պէտք է:

Կամ՝

— Այստեղի ամբողջ փայտը բթա՝ մատս չի տաքցներ:

Ջգաւորութեան եւ անտիրութեան տոջէն կ'անճրկէին Եղևարդի ճարպիկ զոգիւրն անգամ:

— Ծօ՛, ի՞նչ կայ որ զոգնաս, իշու պո՛չ...:

Եղևարդի հոգեկան աշխարհը իր հերոսներու հոգեկան աշխարհէն է հիւսւած: Անոնք ու ինք նոյն զոյններով կը տեսնեն, նոյն բառերով կը դատեն մարդիկն եւ անոնց կեանքը, իր հերոսները՝ զինք կը ներկայացնեն, եւ ինք՝ իր հերոսները:

Եւ որովհետեւ Աստուած ծուռ ու թերի չիմած է աշխարհը՝ մարդիկ նախաահմանեալ ճակատագրով մը կ'իյնան կեանքի յորճանուտին մէջ, անաւարտ կամ թերաւարտ՝ հողիով, մտքով եւ մարմնով: Իրենց թերութիւններուն մեղքը իրենցը չէ: Եւ Եղևարդ զիջում մը կ'ընէ հոս, անոնց ի նպաստ, այսպէս ինչ, հարուածելէ կը դադրի յանախ, ու միմիայն ծաղրանկարիչի չափազանցեալ զիծերով եւ երգիծաբանի գոտարժախոհութեամբ կը ներկայացնէ մարդիկն ու անոնց կենցաղը:—

«Պողոսնոց Երեմը բնաւ զէչ մարդ մը չէ: մաշած փափախ կը զնէ, մոխրացած խորովածներ կը սերէ ուտել: քիչ մը շունչերուն եւ մանաւանդ ճանճերուն բարիբարը յայտարարուած է: Գինդին մետաղէ ալուայ մը ունի: խոշոր չինել տուած է, որպէսզի հեռուէն երեւայ»:

«Ճաղալիք չէր, փո՛ր էր, ջրհորի մը յափ խորունկ, կիրակոս էմմիին թմբուկին պէս խոշոր եւ պրկածիք՝ լայնաւ, ծաւալ, չքեղ, դերապանծ փոր մը, որ երեւելի եւ աներեւոյթ բոլոր ասորոգութիւններով, մեր գիւղի ծեր Մկրտիկն կը պատկանէր: Ինչ էր եւ միայն իրեն կը վայելէր: Գլուխ ելլելու համար այդ փորին հետ, պարենաւորման ապաստար»:

կութիւն մը պիտի վախնար անմիջապէս
զործի սկսելէ...»:

«Մանաս, երբ խանութի եւ թանձր
փորով կնիկի տէր եղաւ՝ քիթը, յօնքերն
ու մտածումները խորունկ դոյներ ա-
ռին դէմքին վրայ. նետեցին այնտեղ
շուքեր եւ մեծութիւն. ամբողջ դուխը
առաջնունէ աւելի վար կախեց. քերել
սկսաւ յաճախ գլխուն ծայրը, կարծես
ոլիւ ու զանազան մտահոգութիւններ
շրջանակ կը գծէին միշտ այնտեղ»:

«Իսկէնտէր կը մտածէր դեռ յղի կի-
ներուն ծնելիքներուն վրայ, որ Աստուած
մի արասցէ ելլեն այդ կիները իրմէ եւ
իւր դաւակներէն խելացի մանչեր ծնին»:

Իր գիւղացիները, ցաւ ու դառնու-
թիւն մարելու, այլ բերանները թուլցը-
նելու համար երբ «բարկացած կաթ»,
այսինքն օդի կը խմեն՝ չեն վարանի
քեջօրէն դիմար «էշ, աւանակ, իշու-
ժագ» պիտակելէ: Բայց բարի սրտով
այլ կողմու կեղեւով այդ մարդոց ար-
տաբերած թուէն ու մէզը զգուսնքի փո-
խարն ծիծաղ կը յառաջանեն զրեթէ
միշտ:

Թերի, տիեղձ որեւէ իր կամ երեւ-
ւոյթ, սկիզբը սրբան ալ խոռովի՝ ի վեր-
ջայ յոգնած ջիւղերուն կը բերէ թուա-
ցում մը, յանգելով կատակերգութեան:
Ու ապառնելէ, տապալակելէ ետք սեւ կամ
կապոյտ ծիծաղի կը դիմէ Եղուարդ
հանգչելու համար:

Ձի խնայեր ինքն իրեն ալ, ու յա-
ճախ քաջութիւնը կ'ունենայ իր իսկ
սոնձը դարձնելու հեղանջի նշանակ:

«Ձգիտցաւ չափ, չդիտցաւ ժամա-
նակ: Տոմս չգնեց բնաւ վիճակահանու-
թենէն առաջ, վիճակահանութեան ուժէն
սոմս կը գնէր վիճակահանութիւնը քաշ-
ւելէն ետք, եւ սոմսը ձեռքը խենթի պէս
կը սպասէր յաջողութեան: Ծոգեկառքը
մեկնած կ'ըլլար, եւ յետոյ կ'երթար կա-
յարան: Հարսանիքը վերջացած կ'ըլլար
եւ ինք յետոյ կ'երթար հարսանեկան ու-
րախութեան: Կ'աղօթէր՝ յաւարտ պա-
տարագրէ»:

Բայց տիեղերքի եւ աշխարհի սկզբը
նաղբիւրը Աստուած է անպայման: Եղ-

ուարդ եւ իր հերոսները կը հաւատան
Անոր զոյութեան, ուժի՛ն: Եւ յաճախ,
նեղ կացութեան մատնուած պահերուն՝
Եղուարդ եւ իր հերոսները, դիւղացիի
իրենց անսահման պարզութեամբ ու
միամտութեամբ, անհունօրէն Մեծին հա-
կադրած անհունօրէն փոքր իրենց զոյու-
թիւնները՝ վէճի կը նստին Անոր հետ,
դրոյցի, մերթ վրդովուած, մերթ աղա-
շաւոր, բայց միշտ խոռովի ու ծիծաղա-
շարժ:

Այսպէս՝ Թոմաս պիտի հարցնէ ու
հաստատէ.

«Ես կը հայհոյեմ: Մատանան գործս
գէշ կը տանի, յետոյ քեզի կուգամ,
տունը չես ըլլար, ո՛ւր կ'ըլլաւ արդեօք,
Աստուած... Անգամ մը որբի մը համար
կիայ, անգամ մը իմ շունս ծնած է ին
եկայ, անգամ մըն ալ մեր ժողովուրդը
կը հանէին դիւղէն, եկայ. դուն բնաւ
տանդ մէջ չես ըլլար: Անշուշտ, իրա-
ւունք ունիս. շատ զործ կայ, շատ զործ.
տան մէջ կը կեցուի»:

Իսկ Դանիէն կը մտածէ, կ'աղօթէ՝
«Տէր Աստուած, ի՞նչ հաճոյք կ'առա-
նես Թորոսի մը զոյութեամբ. քու մեծ
աշխարհիդ անունին չեն վախելը կօշկա-
կար Ակորը, սափրիչ Գրիգորը, քէնէ-
քէնի Լիւնը: Քու աշխարհդ մեծ եւ ա-
նոնք պղտիկ են, պղտիկ, պղտիկ: Մար-
կոսը մ'ըլտեղ բերելէն լաւ մարդոց թիւը
պակասեցուցիր: Մակարը ազոտաւ խա-
նութպան մըն է. անոր մեղքերը չափե-
լու համար տարիներ պէտք են: Եւ նա-
յինք այդքան մեծ չափ ուրկէ՛ պիտի
գտնես»:

«Անթերիմ Աստուած, Դուն Մանասը
տանջելու բոլոր կերպերը գիտես եղբ,
բոլոր յաւ բախտերը բաժնէ ուրիշներուն,
եւ կա՛մ որ ինծի ալ տա, ուրիշներուն
բախտը բաց, ի՞մս զոցէ, Մանասը տակէ՛
կը նեղուի, ինչո՞ւ չզոցես, Մանասին
տանջանքը քաղցր կ'ըլլայ, ինչո՞ւ չտան-
ջես, քիչ մը շունչ առնեմ երկի՞նք կը
փլի. մեղի բեր, ես ալ քու ստեղծածդ
եմ: Փոխէ՛ իմ հրեշտակս. Մեքենին,
Պաղտատարին, սարաֆներուն, պանճա-
ներուն յատկացուցած հրեշտակներուդ

պէս հրեշտակ մըն ալ ինծի, քու խեղճ, քու թշուառ Մանտրիդ յատկացուի. առաջանքս քեզի՛ բերող, զրկածդ ճիշդ ինծի՛ հասցնող հրեշտակ մըն։

Իսկ Աստուծո՛վ ետք՝ դրամն է կեանքը ղեկավարող Մանտան։ Այս իրողութեան ալ կը հաստատն դառնութեամբ Եղուարդ ու իր հերոսները։ Կ'ատեն այդ շատուածը, ճանկառուելով անընդհատ անոր ճիւղաններէն, առանց դադարելու սակոյն նզովիլ հեղանքով մը յիշելէ անոր կատարած աւերները մարդկային հոգիէն եւ ընկերային կարգէն ներս։

Այսպէս՝

Քերեսուն տարեկան էր Մանաս, երբ կրնր մեռաւ։ Զէր կրցած ունենալ գաւազ, իր կեանքին ամէնէն առեւի յուզն էր, որ կ'ունենար Մանաս ըստ էութեան, մինչ նիւթական շունեւորութեան անբացատրելի մորմոքն էր, որ իրականին մէջ սկսած էր ողորդել օրն ի րուն իր գծում հոթիները կրակէ հսկայ հեղուկի մը պէս։

— Դրամ ունենաս, դրամ, եւ այդ ցուր կը հալի։

Քերեսուն տարեկան չորրորդ ամսուն, Մանաս նկատած էր որ յաճախորդ շահելու համար պէտք էր շրջապատին համակրանքը ունենայ։

«— Դրամը աղանձի է, աղէկ մը վարձեցնելու եւ, որ երբ թո՛ւ, պարսպ ետ չդառնայ, բերէ հետը ուրիշ աղանձի, երբ մ', Մանասուկ դրամ, ապառիկով ահա կ'ըլլայ ատիկայ։

«— Ս'ի, անոյ՛ դրամը, դէմքի գիծերուն ալ կը խառնուի. լեցուն արհամարհանք եւ քիչիկ մը ճարպ կը դնէ անոնց մէջ. կ'ընէ քիթը բարձր, գոնէ մէկ յօնքը բարձր, ճակատը գլուխէն ալ վեր. կ'երեւին քնդի միւս գիւղացիները դժբախտ, աղքատ, մանր-մունր»։

Կը ճանչնար ուրիշ Եղուարդ դրամին բարիքները, գիտէր զայն շահելու արուեստը նոյնիսկ, բայց հոգին պարտւած չէր Աստուծո՛վ, Աստու համար ալ դրամը ետքը զլխունի ճիւղի պէս կը հալուէր, կը հարուածէր դէնք, կը դառնար միայն յարիւճ իր գլխուն։ Բայց որքան ալ մեղկատր՝ անոր առթած ցան ու վէրքը

կը ծածկէր ներս'դ, մանկունա՛կ ժպտին բալասանով։

Իր կեանքը գումարն է այս իրողութեան փաստերուն։

Ամբան տաք օր մը՝ սառնարանին դիմաց կը տապնապի Եղուարդ, ու սիրտը կը պարպէ ընկերով՝ սա հեղախառն բողոքով։

— Ամէն մարդ պաղ ջուր կը խմէ սառնարանէն եւ կը զովանայ. ես եմ միայն որ անկէ տաք ջուր կը խմեմ միայն ու քրտինք կը թափեմ։

Ինչո՞ւ։ Որովհետեւ ամէն անգամ որ Եղուարդ կը բանայ սառնարանին դուռը ուսկ մը ջուր առնելու՝ կը յիշէ անոր հաշտին ունեցած պարտքը՝ ուսուցիչի իր փոխ ուսերուն վրայ...

Վերջին երկու-երեք տարիներուն Եղուարդ կրցած էր դոնէ մատնալար մը հեռացնել ճիւղի սպառնալիքը բանաստեղծի իր շուքէն, եւ գրականութեանը մէջ տեղ-տեղ յայտնուող հեղանքն ու կատակը՝ կեանքի, առօրեայ իր յարաբերութիւններուն մէջ իրեւ սրամտութիւն ու սրախօսութիւն թառեցուցած էր պիրկ ու բարակ իր շրթներուն։

Անգամ մը, Պողոսին այցելութեան երթալուն, սանդուխներուն ծայրը շուն մը կը կենայ գիծացը ու կը հալէ յաժառօրէն։ Եղուարդ երբ կը հասնի վեր՝ կ'ըսէ ծիծաղով. «Կարծեցի որ Պողոսը իջած է փողոց», ակնարկելով դեռ երկունքի մէջ եղող «Ես այդ Շունն եմ» հատորին։

Այսուհանդերձ վիշաք անբաժան ընկերը մնացած էր իր սիրտը։ Սէր եւ վշտի բանաստեղծը իր ճակատագիրը կ'երազարծէր կեանքի իւրաքանչիւր քայլափոխին։ Ջինը ու անապակ պահու մը լուրի թունուոր կաթիլ մը չես գիտեր ուրիշ կը կաթէր յանկարծ սրտի բաժանին մէջ, պղտորելով ամէն ինչ։

Եւ երբեմն մութ ամպ մը Պէքայի մշակուած հողաշերտ դէմքին՝ Եղուարդ կ'այցիլէր ինծի։

— Գամ բսի քովդ, խնդալիք, դուար-ճացնիլք բան մը կ'ունենաս անպայման։

Եթէ չունէի իսկ՝ կարելի էր անմի-

ջապէս ճարել։ Երբեք չէի պատրաստ էր
Եղեարդի մաքուր այլ խորունկ հողին
ամպը քշելու եւ սրտին ու տրամադրու-
թեան կապույտ երկինքը պարզելու։

Չէր խնայեր նաեւ ինձի։

— Ո՞ր է, առակ պիտի տայի՞ր, ո՞ւր
մնաց։

— Հաւատա՛ Եղեարդ, երեք հոտ
պատրաստե՛ր էի, չեմ գիտեր ո՞ւր գրե՛ր
եմ, թերեւս ալ կորսուե՛ր են։

Նայեցաւ շեշտ, ապա խնդաց լիա-
թոք, ու աւելցուց։

— Բանաստեղծութիւն կարելի է կոր-
սրնցնել, նոյնիսկ պատմութեամբ ու վէպ։
Բայց առա՛կը։ Առակ կորսնցնել կը նշա-
նակէ գրեթէ իմաստութիւնը կորսնցը-
նել...

Վերջին սրամտութիւնը, թերեւս ալ
բողոքը, լսեցի հիւժած շրթներէն, մա-
հէն երկու օր առաջ։

Երեք ընկեր եւ իր բժիշկը՝ չորսով
նստե՛ր էինք անարին շուրջ։ Անողորմ հի-
ւանդութիւնը կրծքէր էր անհաւորէն, բան
չէր ձգած գրեթէ՝ արդէն վտիւ Եղ-
եարդի մարմնէն։ Բայց ինք կը փոքրէր
դեռ խօսել՝ անտեղեակ կարծես զինք

դարպասող ճակատագրէն։ Մենք՝ է՛աշ-
խատէինք ժողցնել տալ իր ցաւը, կը
պատմէինք մանրամասն, ու ինք կը
մասնակցէր մեր զինդուքին, զժառար
ծաղող արեւի պէս դալուկ ժպիտով։

Յանկարծ շտկուեցաւ, աշնան չորցած
հիւղի նման ոտքը դուրս հանեց վերմա-
կին տակէն, ու գնդիկ մը ցոյց աւելով
սրունքին վրայ՝

— Աս ի՞նչ է, տղթոր, հարցուց։

Բժիշկը ուշիւ-ուշիւ քննեց գնդիկը,
սեղմեց մատներով՝

— Ինչ պիտի ըլլայ, ոչինչ, իւղի
տոպրակ մը, աճապարեց համոզել
ապա, տխրօրէն ու դաղտուկ մեր աչքե-
րուն ալ նայելով։

— Փառք Աստուծոյ — ըսաւ Եղ-
եարդ, դանդաղօրէն ոտքը վերմակի տակ
պահելով եւ նուազուն ձայնով — տա-
կաւին այսքան մը իւղ մնացեր է մարմ-
նիս մէջ...

Ու պահեց ցաւազին ժպիտը դէմքին։
Այդ ժպիտով ալ թափնուեցաւ մեղմէ
ու աշխարհէն։

Տ. ՈՍԿՈՒՆԻ

ԳԱՂԱՓԱՐԱՊԱՇՏ ԳՐԱԳԵՏՐ

Աստղ մը մարեցաւ հայ գրականութեան երկնակամարին վրայ, իր լոյսին պայծառութեամբ լուսաւորելէ ետք հայրենադուրկ սերունդի մը տխրութեան ժամերը:

Եղաւարդ Պօյաճեան եղաւ քառասունական թուականներուն յայտնութիւնը: Ժայթքեց անսպաս, յորդահոս ազգիւրի մը պէս: Երգեց տըխրութիւն, երգեց ուշիւ, երգեց վիշտ, երգեց մահ, բայց երգեց նաեւ պայքար, զեղեցկութիւն, հայրենիք: Երգեց մանաւանդ հող, հողին հետ կապուած բոլոր սրբութիւնները: Վերջապէս, եղաւ զերազանցապէս զաղափարական մարդը, զաղափարապաշտ գրագէտը:

Եթէ հարկ ըլլար գաղութահայ գրականութեան մէջ փնտռել իսկապէս բանաստեղծական խառնուածքի տէր գրող մը, անիկա Եղաւարդ Պօյաճեանը պիտի ըլլար անպայման: Ու երբ բանաստեղծի խառնուածք կ'ըսենք, պէտք է այդ տարազը բանալ իր բովանդակ, կարելի լայնութեամբ, հոն ժողովել զպայուն հոգիի մը, խորաթափանց մտքի մը, գերզօր երեւակայութեան մը բոլոր ապրումները՝ ունենալու համար իսկական Պօյաճեանը, որ միայն իր «մանու օրագիր» չէ, է՝ նաեւ իր «Իմնի»ն, առաւել եւս՝ «Տուները», «Իմն եւ իր ծխամորմը»:

Ամբողջական Եղ. Պօյաճեանը կը գտնենք իր իւրաքանչիւր պատմական ժամին մէջ, այսինքն մարդը, որ յարափոփոխ վիճակներու յաճախանքը կ'ազդի, խորապէս, բանաստեղծի մը ուժգնութեամբ, իր էութեան բոլոր կարելիութիւններով, մաշեցնող, բայց եւ այնպէս զմայլանքի տալիս յոռ-գրականութեամբ մը:

«Հայաստանը իրեն համար ուժիմ եւ գեղեցիկիմ արուեստն էր» կ'ըսէ Պօյաճեան, ներկայացնելով իր ամէնէն աւելի սիրած հերոսներէն մէկը՝ Դանին, որ այս պարագային ինքն է, զաղափարապաշտ եւ հայրենասէր գրագէտը, օտարութեան մէջ աչքերը բացած եւ հասակ նետած հայ մարդը, որուն համար «եայրենի գերեզմանն է ամէնէն գեղեցիկը», զինք իր ժողովուրդին, անոր պատմութեան, անոր մեծութեան, տառապանքին ու ցաւին կապող ամէնէն լոյսփնի իրականութիւնը:

Մահուան հետ տարօրինակ մտերմութիւն մը հաստատած գրագէտը զօրութիւն բաներէն եւ թախիծէն անդին, ուրիշներուն համար, օտարութեան մէջ ամայացած հոգիներուն համար, եղաւ գեղեցիկին վսեմ նկարիչը, դադափարին վահագրող քանդակագործը: Ամպրոպի մը սգն փայլատակեց յուսահատութեան, սուրացումի, լքումի ժամերուն, եղաւ յափշտակութեամբ կարգացուող մատենան, եղաւ պայքարի յաղթերգ, ազատութեան նամբաներու լուսարձակ:

Զրկանքի ու տառապանքի մութ օրերուն, մեր կեանքին վրայ Ծանրացող համայնալոյծ թուխ պապերէն անդին, պայծառ հորիզոններու տեսանողը եղաւ, առոյգ բանաստեղծը ժողովուրդի մը, որ Պոյսնեանի խռովայոյց հոգիին մէջ, փնտռեց ու գտաւ իր ապրումներուն հարազատ արտայայտիչը, իր յոյսին ու հաւատքին տեսլապաշտ կռաւորը:

Կրնար դեռ շահ արտագրել, դեռ շահ պարծեր տալ՝ հարստացնելով մեր գրականութեան գանձարանը: Ստեղծագործութիւնը, իրեն համար անդիմադրելի պահանջ մըն էր, հոգին պարզելու անզուսպ մղում մը, որ շարունակ տառապանքի մէջ պահեց զինք, ծաղցր տառապանքին մէջ քանաստեղծին, որ թուղթին, իր ժողովուրդին կը յանձնէ իր ամէնէն մտերիմ զգացումները, ամէնէն խոր ապրումները:

Ինչ որ կորնչելի էր եղուարդ Պոյսնեանէն, գնաց իրեն հետ, ծաղցր ժպիտի մը, սրածիտ ակնարկի մը, յախուռն մտածումի մը գեղեցիկ ձեւաւորումով մեզի: Բայց ինչ որ անկորնչելի է, — ժամանակի մաշումին, մտայնութիւններու եւ հոգեկենդաններու փոփոխութեան գիմալիք իր դարձը, — պիտի ապրի յաւիտեան, իր անունին կապելով մեր մշակոյթին ամէնէն գեղեցիկ նուաճումներէն մէկը:

Պիտի ապրի՝ դադափարապաշտ գրագէտը՝ դադափարի զօրութեան հաւատացող ժողովուրդի մը համար:

Տ. Ռ.

ԱՐՄԻՆԷ

“ՍԵՐ ԵՒ ՎԻՇՏ”

(ԼԵՂԻՆԱԿ՝ Ե. ՊՅՅԱՃԵԱՆ)

«Սէր եւ Վիշտ» բանաստեղծական հաւաքածոյի հեղինակը՝ Եղուարդ Պօյանեան, առաջին անգամն է որ հաստատով մը կ'իջնէ գրականութեան պատմութեան ատենը, անոր խանդավառ անողորմ կշիռին մէջ նետելով նիւար, բայց զընտրեալի մը ոտնոյտը փութորկումէն աւել առած ու արտասովոր ներաշխարհէ մը հիւթաւորուած հասկերու խուրձ մը:

Անոնց համար որ հետեւած էին Եղուարդ Պօյանեանի արձակ ու բանաստեղծական գրուածքներուն, որոնք վերջին մի քանի տարիներու բնթացքին տպուեցան զանազան պարբերաթիւներէ մէջ, ան արդէն իսկ, ուշադրաւ հեղինակ մըն էր: Զինքը բնորոշող իր բարդ ու խոր ազրումներուն եւ ինքնաշատուկ դրսեւորմանը հմայքին մտերմացողները, անպայմանօրէն, տենդադին սպասում մ'ունէին որ հեղինակը նուիրագործէր ինքզինքը, միտական եւ լոյսով մը: «Սէր եւ Վիշտ» հաւաքածոյի երեւումը ո՛չ միայն կը շնչէ Եղուարդ Պօյանեանի վաւերական արժէք մը, այլ կը յայտնարեւէ մեծատաղանդ բանաստեղծ մը, որու յայտնութիւնը ցնցող միջադէպ մըն է յետպատերազմեան բանաստեղծութեան մէջ:

Ներդաշնակ ու համալսփ բիւրեղացում մը, դասական իմաստով արուեստի կատարելութիւն մը չէ՝ Եղուարդ Պօյանեանի բանաստեղծութիւնը. այստեղանդերմ, փնտռուած եւ ուշադրաւ

անկիւն մը կ'ապահովէ ան հեղինակին մեր գրականութեան մէջ, որպէս արտասովոր հարստութիւն ունեցող հողի մը հանճարեղ ներշնչումներուն ու տեսանողի յայտնատեսութիւններուն պատգամաբերը:

Հաւաքածոյի առաջին ընթերցում մը, նոր ու մեծ երեւոյթի մը կախարհանքին խառն՝ կ'առթէ անօրինակ ու անսպասելի հանդիպման մը ցնցումը եւ տնորոշ վիրաւորանքը. ընտելացումը անոր՝ կու տայ անսպառ ու խայտարակէտ գանձերու շրջքը ու ծանրակշիւ բովանդակութեան մը զգեստումը:

Եղուարդ Պօյանեան ունի թնածին արուեստագէտի մը բոլոր յատկանիւնները:

Անոր բանաստեղծութեան առանցքը անկեղծութիւնն է. ինքն ի՛ր հետ ու իրմէ՛ դուրս. շնորհիւ առաջինին՝ քերթումները կը դառնան անաղարտ ու ճշգրիտ արտացոլում մը ենթագիտակցական ճշմարտութիւններու եւ զգայնութիւններու ու յորդում մը՝ անկեղծ հոգեկան վիճակներու: Շնորհիւ երկրորդին՝ հեղինակի արտաբերածը անընթաց ու անսթեքելի կը ստանայ բացառիկ ուժգնութիւն մը:

Բանաստեղծութիւններու մթնոլորտը հեղինակին ներաշխարհն է, այդ ներաշխարհը ո՛չ միայն ի՛րը ու միակ ինքնութիւն մըն է, անօրինակ տարբերակ մը մարդկային հողի՛ն՝ այլ եղակիօրէն բարդ ու ճշիւ դիտողութիւններու, խո-

հերոս եւ ապրումներու «նիակարա» մըն է։ Ինչպէս պիտի ըսէր ինքը։

Եթէ առանձնացնենք հաւաքածոյէն մի քանի գոյտը ու կարճաշունչ բանաստեղծութիւնները, կը տեսնենք որ բանաստեղծը սիրով ու վշտով ծծուած՝ անոնց հէնքին վրայ ուրիշ նիւթեր կը զարկացնէ։ Այդ զգացումները կը թուին ըլլալ խա՛յծ մը միայն, ազդանշան մը՝ խումբ հրադուխի մը, որու ընդերքնուրէն կը ժայթքին յա՛նկարծ, խելայի՛ղ թափով, ժամանակներու, բնութեան ու կեանքի հարցապնդումներ, թափանցումներով ու գիւտերով խոռվայոյց վիճակներ։

Հայեցողի դիտող ու կռահող աչք սենի բանաստեղծը. իբր ակնարկը միաժամանակ կը բռնէ ի՛ր հոգիին ապրումներն ու խորհուրդը ու արեւելի տարբերուն կեանքը։ Ներշնչումներու հրգեհումէն՝ երկու կէտերու միջեւ դանուող տարածութիւնը կը հալի, կը չքանայ, ու անոնք կը դառնան միաժող համադրութիւն մը։ Ասկէ՛ կը բղիթ հեղինակի ապրումներուն ու յղացումներուն առնչք, անպարփակ լափերը, իր մէջ ընկղզողումն ու լազախումը բոլոր արտաքին ստորերսան ու ազդեցութիւններուն։

Հեղինակին մեծ չափերը կ'արտայայտին առասպելական թուումներով, երեւակայական պատկերացումներով ու յախուռն նմանութիւններով. ու ընձեռած անիրական տարրերով ասոնք այնքան կենդանի ու առինքնող մթնոլորտ մը կը ստեղծեն, որ վարանք չի մնար բանաստեղծական խորագոյն ապրումներու եւ յստակ տեսիլքներու ճառագայթում մը նկատելու զիրենք ու ոչ թէ հմուտ ճարտարապետի մը մտածածին հնարքները։

Հեղինակը հաւատքը ունի իր հոթեանը ընդելուզուած ու երեւակայութենէն արտացոլող պատկերներուն ու երեւոյթներուն. որքան ալ ըլլան անոնք անիրական ու հեքիաթային։ Գրեթէ բոլոր բանաստեղծութիւններուն մէջ ծայրայեղ որակումի չափանիւշ են գիւղի մա-

միկներէն իւրացուցած թիւերը-եօթն տնդամ, քառասուն անգամ-։ Ձար ու բարի ոգիները, որոնք միշտ քսն մը կը նիւթն կամ վարժունք մը ցոյց կու տան որպէս հեղինակի արամադրութեան հաւաքառ գործակալներ։

Ու վերջապէս դերագոյն լափը՝ Աստուածն է ու տիեզերքը։ Սիրած էակը կը նոյնանայ Անոր հետ, սէրը՝ կեանքի ու մահուան, դառնալով ժամանակներու հոլովոյթին ու արեւելիական երկունքին համազօր ուժ մը։ Այս յղացումը զարդացուած է «Մենդապահ» երկարաշունչ բանաստեղծութեան մէջ։

Այլաբանութիւններն ու յղացումները, որպէս խորուսիկ ու կարճատեւ քմայքներ չեն երեւիր քերթուածներուն մէջ. այլ ընդլայնուած, մանրամասնուող ու ամբողջական՝ կու տան խոր ներապրումի մը պահը եւ մթնոլորտը։

Հզօր երեւակայութեան մը միացած բարդ գոյացութիւններ ու խոր ներապրում, կուտան վերացական անձնութիւններուն բնական երանգաւորում, զգայարանքներու վերացական յատկութիւններուն մարմնաւորում եւ վարձուքներ - Ձայն եւ Լուսին, Յիշատակը Ձայնիդ - բանաստեղծութեան մէջ ու ճեղքից հասարակածի շորորդ մասին մէջ։

Որով զարդանկար չի մնար բանաստեղծութիւններու կառոյցին մէջ. բոլոր իրերը, բոլոր տարրերը, կեանքի տրոփ, գոյութեան իմաստ ու վարժունք կը ստանան բանաստեղծի կենսաբաշխ յառուսէն։

Ու քերթուածները կը դառնան թափառանք մը աշխոյժ եւ կենսայորդ տեսարաններու, որոնք կը յաջորդեն իրար անյապաղ բխումով, յարափոփոյ պատկերներով ու ալակերպ, ալլապան գործող տարրերով։ Յայտուն եւ կենդանի՝ անաւարկելի փաստեր են յստակ տեսիլքներու։

Ճշգրտ երգապանակի մը ու վիտացող գոյներու հետ, հեղինակը ունի վրձինի արագ, ուժգին եւ ճշգրիտ գործածութեան կերպ. որով ան կը ստեղծէ կեն-

ստիպողի ստուերի-լույսի տարաշխարհ մը։
Ներկայ ժամանակի գործողութիւններ պարփակող, իրար հրմշտկող, իրար ցրտացնող, իրարմէ թափ ու ուժգնութիւն առնող պատկերներու, համագրութիւններու ջրվիթում մըն են իր քերթումները։ Յորձանքի հրաշք սլուացքներու իրացումով, հաղուաղէ՛ւթ թափի ու խորութեան յորդում մը։

Քերթումներու թափը վարող տղամատգրութիւնները պի՛րկ ու միաժամանակ գիմացկուն, երկարատեւ լարում ունին, որու հետեւանքով քերթումները երկարաշունչ են, առանց ծանծաղ բլլալու։

Անոնք ունին տարածական, հոսկո՛ւ եւ ընկճող թաւալում մը, երկարաշունչ քանաստեղծութիւններու ընթացքին։ Մինչ կը վերածուին սրտի ուղղակի՛ մրմունջներու անոնց վերջաւորութեանը, որով՝ վեհ, տեօրինող ու պարատրոզ ապատրութիւն կ'ընեն կառոյցի ընթացքին ու ձեռք, ճնարական զեղում մըն են, կայանին վրայ։

Կարճաշունչ քանաստեղծութիւններուն մէջ տիրող տրամադրութիւնը, գոյտը ու մտերիմ յատում մըն է, որը երբեք նկուն ընթացք չի ստանար ստեղծի։ Ազնուական ու վեհ թափն է ԱՅԻՐ Եւ Վիշտի քանաստեղծութեան անփոփոխ հունը։

Հարուստ ներաշխարհի մը անկաշկանդ պոռթկումը եթէ ասեղծագործ թափով ու կառոյցի անգնահատելի՛ տարրերով կ'օժտէ քանաստեղծութիւնը, կը վնասէ՛ սակայն անոնց ներդաշնակութեան։

ԱՅԻՐ Եւ Վիշտի հաւաքածոյի քերթումները նիւթի մը լրջագիծը ունին միայն։ Երաժշտութիւն չի նշմարուիր անոնց մէջ։ Առտիճանական զարդացում, յատակ ու համաշափ կարգաւորում ունեցող ներդաշնակ համագրութիւններ չեն ներկայացնել անոնք։ Այլ ընդհանրապէս համահասարակ ուժի, ու տեղ տեղ թափի խոր տարբերութեամբ արտայայտութիւններու միաժամանակ յորդում մը։

Մեծ ճիւղ եւ ուժերու կեդրոնացում կը պահանջէ յորդառատ ժայթքի մը ներդաշնակ ու համալսի ձեւաւորումը գտնելը։ Այդ ճիւղը պարտաւորութիւն մըն է հանճարեղ կառուցուածքի մը համար։

Եղուարդ Պոյտնեան ունենալով կարեւորագոյնը, պէտք չէ անտեսէ անհրաժեշտը, որով միայն տաղանդի մը արտագրութիւնները կը գտնան արւեստի անմահ կատարելութիւններ։

Այժմ իր յարգարումը կը կայանայ յուսկումներ կատարելուն մէջ։ Քի՛չ, սո՛ւղ մը քանաստեղծութեան մը մէջ, մէկ երկու տեղ պարբերութիւն մը, որոնք քանաստեղծութեան թափին անհաղորդ տարրեր են, հասարակ տեղիք արտայայտութիւններ, սպրդած հոգեզմայլանքներու, վայելքի բարձունքներու տանող տողերու մէջ։ Եւ որոնք գուցէ աննկատելի՛ միջակ թափի քերթողի մը ծօտ, իր զով հմայաթափ կ'ընեն ու կ'ընդվզեցնեն ընթերցողը։

Փերաղանց եւ ամբողջական արտացում մը պէտք չունի ընդլայնման ու յաւելումի։ Հիդրոնակին ճիւղը պէտք է կայանայ, իր յորդ ու բիրեղացած հոգեկան վիճակները պարփակելու նոյնքան բիրեղացած ու ներդաշնակ համագրութեան մը մէջ։

Ոճն ու լեզուն ճարտար ու ստեղծագործ նկարչի են հեղինակի ներաշխարհին։ Որով ունին լեչտուած ինքնուրոյնութիւն։

Այխոյժ ու ճկուն՝ համընթաց են քանաստեղծութիւններու ներքին թափին։ Ոճը՝ վեհընթաց է ու հանդիսաւոր, ծանր բովանդակութեամբ քերթումներու մէջ։ Ներմ ու հեշտին՝ ճնշուչ ու կարճ հեւք ունեցող քերթումներու մէջ։

Անոր գլխաւոր յատկանիւնը, այլադան բնորոշումներու թուումի կերպն է, որ զայն կը դարձնէ զեղուն ու կ'օժտէ բացառիկ ուժգնութեամբ մը։ Այս յատկանիւնով ան կը նմանի Նաբեկացիի ոճին, տարբերութեամբ մը, որ մինչ Նաբեկացիին ծօտ ան հզօր զգացումի մը

կամ ժտասեւեռման մը արդիւնքն է եւ անոնց շուրջ կը յորդի, Եղուարդ Պօյաճեանի մօտ ընդհանուր հոգեկան դրութիւնէ մը կը բխի եւ արտացոլումն է բովանդակ ներաշխարհի մը:

Հմայիչ անակնկալ մըն է ոճի յընտանգութիւնը ու հեղատաւ ընթացքը բարդ կտուցութեան հեղինակի կողմէ: Բարդ ներաշխարհի մը շփոթ ու ազօտ հոգեմեծականներ մատնանշող մթին ու խորիմաստ դարձումը քննարկն ազատ՝ ան ջինջ վարարում մըն է, խորհուրդով արոմունքն ու յորդանան, բայց բերեղապա՛մ հոգեկան աղբուրներու:

Բնորոշիչ է ոճին մէջ այն երեւոյթը, որ ան չըլլալով երեւութապէս սեղծ, անի սակայն խիտ բովանդակութիւն. ամէն նախադասութիւն, երբեմն ամէն բառ, խիտ պատկերացում մը, բարդ վիճակ մը կը ներկայացնէ: Այս յատկութեան անսպասելի ահապանութեանը շնորհիւ իր ոճին մէջ, հեղինակը ամէնէն բարդ վիճակներն իսկ ներկայացնելու համար պէտք չ'ունենար բազմաթիւ տողերու, այլ ընդհակառակն, ամէն տողով կու տայ նոր վիճակ մը, նոր պատկեր մը կամ նոր իմաստ մը: Խիտ բովանդակութիւն կու տան ոճին յորդ ու բազմակրանգ պատկերներ ցայտեցնող նախադասութիւններ, ու միտժամանակ դործողութիւն ու վիճակ, երկու որակում, երկու պատկեր խառնող բարդութիւններ, որոնք առաւելապէս ի՛ր ստեղծածներն են: Ճենդապոստ, բաղդաւաւաւ: Այս բարդութիւնները կատարուած քննարկ բխումով՝ չափաւած են լիզուին հեա. որով, հեղինակի լիզումն, որ զբառարան լակողն է, ինչպէս կը բնորոշէ ինքը, կը ճոխանայ պարզ ու կենդանի բառամթերքով մը: Անոնք ստեղծելով երկար ու իմաստով ծանրաբեռն բառերու հոսում մը, նսեւ կու տան քերթումներուն՝ հանդիստւոր

ու տպաւորիչ, ծանր կշռոյթ մը:

Արուեստական ճիգ կը պահանջէ Վէյր եւ վիշաքի հեղինակի տաղանդին ու արուեստին տարբերուն զատորոշումը. այնքա՛ն ինքզինքը կրկնող, ինքզինքը արտացոլող ներաշխարհ մը ունի հեղինակը: Տաղանդին տարբեր, իրար հետ նոյնացած, իրարմէ բխող ու իրար բացատրող՝ ընդլուզւած ամբողջութիւն մը կը յայտնաբերեն: Իսկ արուեստը, հարապատ արտացոլումը հեղինակի ներաշխարհին ու տաղանդը կազմող յատկութիւններուն՝ զրոհւումն տարբեր միջոցներուն մէջ (ոճ, լեզու, կատուցումը) հեղինակի էութիւնը կրկնող յատկանիշներով կ'երեւին:

Ունենալով ուժեղ ինքնութիւն մը, բանաստեղծը իրմով ձեւաւորած, իր մէջ հալեցուցած է արտաքին բոլոր տըպաւորութիւնները, իրերը, զարգացման ու արտայայտութեան միջոցները եւ բոլոր՝ արդեցութիւնները: Որով՝ ի՛րն են ու ի՛նքն են բոլոր նիւթերն ու արտայայտութեան կերպերը:

Հեղինակին բարդ ներաշխարհը ու երբեմն տաքօքինակ որակումները, օրինակ (Վիշաք ձանձրոյթն)՝ հանդիսութիւն մը կը ստեղծեն իր եւ Ինարայի մէջ, այդ նմանութիւնը ազդեցութեան մը ուժով չ'երեւիր սակայն քերթումներուն մէջ:

Վէյր եւ վիշաքի հրատարակումով իրայուն տաղանդը ինքզինքը կը պարտադրէ հայ վաւերական գրականութեան: Արուեստի կատարեալ ստեղծագործութիւններ տալու անհրաժեշտ ճիգով մը՝ ան կրնայ դառնալ անմահութեան ամէնէն արժանաւոր թեկնածուներէն մէկը, ու միաժամանակ համաշխարհային տարողութեամբ որակ մը:

ԱՐՄԻՆԷ

ԵՐԻՄԻԱՅԱ ԿԱՅԵԼՈՒՄ

Դ Լ Մ Ք Ե Ր

(Ա. ԱՍՏՈՐ)

ԻՐ ԴԼՄՔԸ
ՊԵՆ ԴՈՒՄԸԵՐԻՄԻԱՅԱ ԿԱՅԵԼՈՒՄ
ՊԵՆ ԴՈՒՄԸ
1987

«ԴՆՃԵՐՆԵՐ ԲԱՆՈՒՅԻՐՈՒԹՅՈՒՆ ԶԵՆ, զրահան
քննադատութիւն ալ չեն, զրահան պատմութիւն
րնաւ չեն, բայց զրահանութիւն են անպայման:
Աւելի շատ եզրակացութիւններ են, քան խորա-
մտիկ պրպտումներ կամ հանգարտ վերլուծում-
ներ: Ուրիշ բան չէին կրնար ըլլալ արդէն, ո-
րովհետեւ Եզուարզը բանասիրական գիտու-
թիւններու թեկնածու չէր: Զինք վարդը հա-
ցումն է, իր դիմանկարած մարդոց հանդէպ ան-
հուն խանդաղատանքը, զոր երբեմն ծայրայե-
ղութեան կը տանի տակալն, թերեւս հակառակ
իւր կամքին, պարզապէս զգացման թափն զըլ-
ւելով: ... Բայց զրահանութեան պատմիչը հար-
կին տակն է կարդալու Պոյանեանի «ԴՆՃԵՐՆԵՐ»,
կարենալ ոչտուելու համար հանուած եզրակա-
ցութիւններէն, զգալու եւ ըսելու եղանակէն,
ոճէն, մանաւանդ հազորդ մնալու զրահէս տար-
րին հանդէպ սեուցուած անպատու գործանքին:
Ա. Ա.

1987

ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆ

Չակատագրակամ աննախադէպ իրադարձութիւններու վրայ աչք
բացած տաղանդաւոր հայ տղայ մըն է Սարափեան, 1930-ին սկիզբը ու
վերջը գտնուող ժանի մը տարիներուն, ամէն Հայու պէս մեծ բան մը ա-
ռած իր վրայ եւ շուարած: Տղայ մը՝ որ հայրենիքէն հեռու, յաղթական
մայրաքաղաքի մը լուսայորդ պազուտմանէն կ'անցնի, ազդիկներուն, քա-
ղաքներուն եւ գիրքներուն առջեւ հազար քարոյշութի ցաւ մէկ անգամէն
կրնով: Ունենալով շարունակ մզմանցալին անդրադարձներ: Լսելով,
գրելով միշտ, իր սեփական ձայնին մէջէն ուրիշ ձայն մը, համայնական,
խոր ու ախար: Ո՞ր, ո՞ր Հայուն յաղթութիւնը առողջացաւ ջարդերու եւ
միլիոններու անպատմելի եղեռնավէպէն հոգ: Ո՞վ, ո՞ր Հայը կը լսէ, յի-
սուն տարի ետք իսկ, ինքնիր ձայնը լսկ. շուրջներուն ձայնը միայն:

1925: Մուր ու մթախոհ տղայ մըն է ան: Աշխարհին հեռանալն ու
հայիր տեսնող ու գայն ամէն վայրկեան ուղեղին եւ զիղներուն հաղորդող,
ամկէ գրականութիւն ու կիցիչ մտածումներ ստեղծող մտայն մայրաքաղաքի
երիտասարդ բանաստեղծն է ան, գրագետը, խորհողը: Սլած է դուրս,
կարծես դժբախտութիւն հաւաքելու, արագորէն հեռացող, քայքայուող,
չվերադարձող, սեւ ու ծաղրածու բաներ: Հաւաքելու եւ գրելու մէջ
բերելու՝ մահ ու մայրութիւն: Տխրութիւն եւ հազար մար գգայնութիւն
եւ հազար շփոթութիւն ըսուած մար խոհ, մեր պատկեր:

Իր խոհերուն ու խռովներուն մէջ քիսացած, շատ ամգամ իրական
բուխի մը վերածուած մարդն է Սարափեան: Ներքին մեծ տագնապագիր
մըն է, որուն տագնապը ամենակամ է, մերք անմահականին հետ տգգային:

digitised by A.R.A.R.@

ու ազգայինն յարդելով՝ համամարդկային: Ձուներն քերելու ուրիշ գրազ մը իր օրերում, որ իրեն չափ վերք մը, - անհատական, ազգային, համրամարդկային -, մտածելու յաջող գործիքի մը վերածած ըլլայ: Վերքը կարծես ուղեղի մը տեղը կը բռնէ իր գրականութեան մէջ:

Սփիւռքի մէջ, մեր արդի գրականութեան նոր տրակ մը բերողներն է Սարափեան:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Սիրուն քերթումներ, քանի մը ազատը գրեցի: Ու մեծ գիրք մը ապա, - հօգը, հնչեղ, քուականային:

Այդ գիրքը:

Մեր հաւատքի եւ սիրոյ խորունկ ճայներէն մէկն է *Անրեկի Ջանգապատունը Գիրք Ճանապարհէն* ասորի, եթէ չմտնամք ճայնիսկ կառուցումի անոր փոքրիկ մէկ քերթին. - երկարած գումները:

Գիրք մը՝ որ քա՛ն մը ըստ, ուրիշներու փոքրիկ, կարճակ, բարբառած ճայներու զաշտին մէջ կեցած: Գիրք մը վերջապէս, որ վաւերական յուզումով ու վաւերական արտաստով մը մօտեցաւ Ապրիլեան օրերու քանի մը զօնդակ եղելու քիւններուն: Ու մեր ջիւղերը հոծ յուզումով մը զգացին եւ ապրեցան նորէն:

Հիմ, սաստկազայն վտանգներու ենթարկուած կեանք մը, զոր ազգային ընդհանրական ունեցանքի մը կը պատրաստեն աշխարհի տմեկէն կծու տեսութեան մը տմեկէն կծու մարդերը իր բառը կազմելէն, իր բոլոր վայրերուն մէջ: Տեսանք՝ հրդեհային լոյսի մը մէջ, ճակատագրական իսկայ վարդապետ մը, ու մարդիկ, ու ստուերներ: Ու լսեցին մեր ակամօքները զօղանք, տխուր, ընդարձակ, խորունկ:

ՊՈՂՈՍ ՄԱՊԵԱՆ

Ժողովուրդէն եւ մերկայ ժամանակաշրջանէն բուն մը, այո, կը հալածէր այս երիտասարդ Մուսա-Տաղցի գիրքէ գիրք, մինչեւ որ եկաւ ու քիւրեղացաւ ի վերջոյ, խոստովանական խոր ու խռովիչ, կարծես ստուերային աշխարհի մը մէջ արտասանուած մեմախօսութեան մը մէջ՝ որ կը կոչուի, - *Եւ Այդ Շունն Եմ*: Տաք, վնասկան ու կարծես վերջնական խօսքերով բանաստեղծական այս համակ դադ ու խռով գրեցիկն մէջ, տարագրութիւն եւ տարագրական խոր տաղանդ բերող այս քերթումի երկայնքին, այս տեսակ մը նուիրական դիմումագրի հիւսիսէն մէջ իսկ, Պօզոս Սնապեան պարայած է իր էութեան կարեւորագոյն մէկ մասը, մեծ մասը հաւամարար, կրկնութիւններ ու վերադարձներ ընելու գնով: Ուզած է, որ իր գրեցիկը ըլլայ կտակարանային կնիքով գարծ մը, սեփական անձին ու սերունդին համար, որ պարտաւոր է այլեւս հաճրային պարտականութիւններ տառնելու: Արդէն, Սնապեանին բոլոր գործերը - գրականները կը վաշին գրողի մը մասին, որ կը սիրէ վերջնական բաները, պատգամային բացարձակ բաները, գերազանցները: Անոնք, որոնք հաւատարմը չունին եւ կարծես անվերադարձ են կեանքին մէջ: Շփեղ, գատ, գորտուր:

Ե. Պ.

(«Գէֆէր»)

ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՄԱՀԸ

Մակայն մախ բան ՈՂԶ մեռել մը լսել՝ էր
փորձեմ ես ինձի պարզաբանել Մարտը՝ մեռելի մը
հետ խօսած պահունգ:

Իմ հարցադրումէս ես ինքս կը շուարիմ, կը կակագեմ, կը վախնամ, կը պարտուիմ:

Կարելի փութկոտութեամբ դուրս կը նետուիմ.— ես ինձմէ. — կը հարցնեմ դրան մօտ կ'ըկուած դէմքերուն:—

— Իմչո՞ւ իրմէ կը պահէք գինէ:

— Կրնայ փութալ Մ'ԱՀԸ:

— Ի՞նչ արմէք ունի օրը, ժամը: Եղուարդը բանաստեղծ է:

— Բանաստեղծ է, այո՛, բայց եւ մարդ: Տղա՛ս, կը մոռնաս Յ/ՅՍԸ, առանց որուն, տե՛ս, որքան չար ես. բիրտ: Հիմա, այս պահուս, կրնայ գտնուիլ աս անխճեալ հիւանդութեան դարմանը:

Յոյսի անունով խօսող մարդը, մեծագոյն անշուշտ է առկայ: Մեծ պարտեալը: Եթէ նիւթը չփոխեմ՝ պիտի լայ...

— Կեանքը ա՛յս է:

Այո՛. կեանքը այս է:

— Ինձի համար, — կ'ըսէ մէկը, — Համաստեղէն վերջ կու գայ Եղուարդը. ասորդ մեծագոյն բանաստեղծներէն:

— Մեռնո՛ղ, կը շնջեմ:

— Մեռա՛ծ, կը չարանայ բան մը ներսէս:

Ու կ'երեւի Եղուարդը. նստիլ չկրցող, չզայիճ այդ շարժումը:

Կմայիս մըն է որ կը շրջի Այնճարի փողոցներէն, որուն ի տես, լուսքիւն մը կ'իջնէ, ասորսպի ու զօւթի լուսքիւն մը, վերածուելու համար անմիջապէս հրաշալի կեղծիքի մը համանուագին:—

— Ինչպէ՞ս ես, Եղուարդ:

Անէն ոք տեղեակ է կացութեան, բայց ամէն մարդ կը յամառի հարցնել.

— Ինչպէ՞ս ես, Եղուարդ:

Կը վախնամ, որ Եղուարդ յանկարծ պատասխանէ.

— Ես մահէն վախ չունիմ, որովհետեւ գիտեմ ճանիւ, որ ամառի եմ, բանաստեղծ: Իսկ դո՛ւք. Ձեզմէ քանի՞ն կրնայ չվախնալ մահէն...

Ես՝ այսպէս. իսկ դո՛ւք. դո՛ւք ինչպէս էք...

Ե. ԵՐԿԱՔ

Պէտք ուրիշ

ՅՐԻՒ ԷԶԵՐ

ՀԻՒԱՆԴԻ ԳԷՇ ԵՐԷԿ ՄԸ

ԱՅՆՃԱՐ, 19 ՍԵՊՏ. 1966

Օրացոյցի օր չէր երէկուան օրը, հալառակ երկնքին, արեւին, հոգիին, մարդոց, ճոյնիսկ ձ. Մուսայի բազմամբոյ տարեդարձ մը ըլլալուն: Ամ օր չէր ինծի համար: Ակառայ մրն էր: Առտու կանուխէն մինչեւ ուշ իրիկուն, միտերուս եւ անոնց էութեան մէջ, հագիիս եւ անոր էութեան մէջ, գոյութեանս բոլոր խորութիւններուն յատակները փնտռող, ծամելու ուզող ժամիք մը:

Երէկ կանաչաւորիւն չկար աշխարհի վրայ, յոյս ըստածը չկար, եւ կարծես կեանքը բնաւ գարուն չէր ունեցած, չէր կրցած ունենալ, չէր կրցած ծաղիկի մը մայրը ըլլալ: Տաշտ մըն էի երէկ, ուր հիւանդութիւնը կը հաւնէր իր ամէնէն դառն խմորները: Բոլոր բջիջներս լեցուն էին քայմով: Տոգնութեան քայմով, ուր քայմերուն ամէնէն անյաղքահարիւն է:

Այս երկրորդ գործողութենէն ի վեր, որ բանաստեղծի մը եւ խոր մարհագոյն, արարածի մը Գողգոթան եղաւ ու երկունք տեւեց, եւ ունեցայ երէկներ եւ ճան երէկ-գիշերներ՝ որոնք արժանագրեւի չեն ոչ մէկ լեզուով: Արդէն ոչ մէկ ցաւ, երբ յարգած է իր սահմաններէն, արժանագրեւի չէ: Այն ստեղծ է որ կը տեսնես Չարը, դժնդակը՝ Սատանան:

Գէշ երէկներս եւ գէշ-գիշերներս ինծի սարկեցուցին Սատանային բազմաթիւ անուանքը: Այդ պահերուն տարրալուծեցի սատանան, կամ տարրալուծուեցաւ ինքնին: Տարրալուծումներուս արդիւնքը այն եղաւ, որ ես եմ այդ Սատանան եւ ես չեմ:

Արդարեւ, ի՞նչ է Չարը, չարարանքը: Հիւանդութիւն մը: Անհո՞ւն անհո՞ւն յագնութիւն մը: Մերութիւն մը: Հասնում մը: Պժգամք մը: Չանձրոյթ մը: Երբ ամէն ինչ կարծես բնաւ արժէք չունի եւ շատ գէշ տեղ մը դրուած է: Երբ մտային, բարոյական կամ գոտ հագեկան սուր տագնապ մը իր ցանկերուն բոլոր վառելանիւթը կը ուղարկէ մէջդ: Երբ ոչ ոքի չով արժէք չունիս, ի՞նչ բոլոր սերերուդ եւ պաշտամունքներուդ հալառակ:

Սատանան այն է այսինքն՝ երբ կեանքիդ բոլոր մարգերուն մէջ, կու գայ ժամանակ մը կամ հիւանդութիւն մը՝ որ այլեւս բոլորովին ուրիշ եւ բոլորովին խորք բան մը կայ մէջտեղ: Երբ ամէն մարդի մէջ, այդ մարդին գիշերը չի լուսնար, կամ ցերեկը չի մթնի: Ա՛յս, այդ չի մթնիլը, այդ չլուսնալը մանաւանդ, այդ սեւ տեսողութիւնը, երկայնքը:

Այո, երէկուան օրը օր մը չէր, սատանային մէկ ժամիքն էր ինծի համար: Մագաղ արեւ կար, բարձրացող արեւ, իրիկուն բերող արեւ, քայքայ օր չէր, հիւանդութիւն էր:

ԱՅՆՃԱՐ, 20, 1966

Տիեզերական ժառանգության մասին մեր պետությանը հարկ է հարկել մարդկությանը: Խաղաղ շնչառության մեջ: Գուրբի մը՝ որուն մէջ գերակշռող տարրը սերը ըլլայ, հարազատի անդամներն իրարմէն:

Երեկ, յետ-միջօրէի ժամը երեքի տակերէն, երբ հիւանդի անկողնին վրայ ամէնէն տկար Վէլ շունչս կը տփայի եւ շուրջս ոչ ոք կար, մայրական սուր, կիսախեղագոր ճիւղ մը դարս նետեց զիս անկողնէս: Մեր տան ճիւղը դիմացը գտնուող մօրաբնակարանի անկողնէն էր: Վերջերս խառն իծի մը մասին խօսք կ'ըլլար թաղը: Մտածեցի, որ կրնայ այդ մեծ իծը մտած ըլլալ սենեակէն ներս: Աւագ, իծէն անկի տակալի բան մը մտած էր ներս, ազատիկ տան ազատիկ սեւէն: Տան տասը տարեկան միակ մանչուկին մահուան գոյժը:

Եւ թաղը փոքրկեցաւ:

Մա՛հը պիտի չփորձէր ազգականներով ու բարեկամներով լեցուն թաղ մը: Թաղ մը ի՞նչ է մահուան դիմաց, ժառանգ մը ի՞նչ է, երկիր մը ի՞նչ է, ամէն ինչ ի՞նչ է: Ջայն հակակշռող եւ անոր յաղթող ժէճ բան սորված է մարդկութիւնը՝ տիեզերական չմտնող ուժը, յաւիտենական ըստեղծիչը, - Աստուած:

Եւ ազգական փոքրիկ տղեկին մահէն միտք տարածուեցաւ հեռուները: Երբեք չէր լսուցաւ: Ու պարզ խորերն ու պարզ լայնքը չբռնեցին այլեւս:

Մա՛րդը, չարչարամբները, մահը...

Ու դարեր: Ու արեւի ծնունդներ, ու աստղերու տարօրինակ գայտաբաններ: Օր մը մահկանայնի մէջ էր ծնունդը, որ մը պատմութիւնը, որ մը երիտասարդութիւնը: Ուրիշ որ մըն ալ, տարօրինակ ուրիշ ծիլ մը՝ - **ՄԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ:**

Երեւոյ մը, մանր ծայրով մը գալը վայել էր կարծես մանուկին. պատմութիւն, երիտասարդին: Բայց ծերութիւնը ծիլով: Երբ փաք էի, կը կարծէի, թէ որոշ եւ անվայել որ մը, զանգուածօրէն ու փառաստեղծօրէն պիտի գայ ամ, բայց ոչ թէ ինձի, այլ բոլոր ուրիշներուն համար: Կը կարծէի, որ ծերութեան ոչ մէկ ջուր պիտի դալ ինձի: Այո, ոչ մէկ ջուր, ոչ մէկ ջուրի կաթիլ: Երեւոյ մը բոլոր ջուրերն ու աստղերը պիտի հոսին թրջելով ուրիշ մարդիկ, ազգայնով ուրիշ մարմիններ, ուրիշ հոգիներ:

Մարդկութիւնը պետք ունի ամենամի, խաղաղութեան, սիրոյ: Թող գերեզմանները այլեւս ընդհատուին, վերջանան բոլորովին: Հերիք է անոնց քարերուն ճնշումը:

ԵՂՈՒԱՐԴ ՊՕՅԱՆՆԵՐ

ԵՂՈՒԱՐԴ ՊՕՅԱՃԵԱՆ

(ԿԵՆՍԱԿՐԱԿԱՆ ԳԻՄՆԵՐ)

Եղուարդ Պոյանեան ծնած է Ճէպէլ-Մուսայի Խըւըրպէկ գիւղը, 1915-ին:

Ճէպէլ-Մուսայի ապստամբութեան օրերուն, երեք ամսու երեխայ մըն էր: Ծնողքին ու հայրենակիցներուն հետ գացած է Փոք-Սայխա ու հոն մնացած՝ չորս տարի: Պատերազմի վախճանին վերադարձած է ծննդավայրը: Ուսման առաջին շրջանը անցուցած է դիւղական երկու համեստ վարժարաններու մէջ, - մէկ՝ Խըւըրպէկ, մէկ ալ՝ Եոզուր-Օլու: Գիւղական ուղի վարժարաններուն մէջ, ուսումն է աւելի կար մաքուր օղ, լոյս, կենդանութիւն: Յերեկները պայծառ ու դիշերները առողջապարզ էին: Եւ մանաւանդ, ամէն ինչ լեռնային էր, մեծաքանակ ու հիանալի, ինչպէս պիտի գրէր Պոյանեան, տարիներ ետք իր ինքնակենսագրութեան մէջ:

Ուսման երկրորդ շրջանը, տառնեւ-հինգ տարեկանէն սկսեալ՝ անցած է Պէյրութի հայ ճեմարանէն ներս: Մնացած է հոն, մինչեւ առաջին լսարանի վերջը, - հինգ տարի, մինչեւ 1935: Յետոյ ընդգրկած է ուսուցչական ասպարէզը, մինչեւ իր կեանքին վերջին րոպէն:

«Ձեմ խաղացած, - կ'ըսէ Պոյանեան: Գրեւ սկսած եմ շատ կանուխէն, Տըպ-ւած՝ քիչ մը ուշ, 1932-ին: Աշխատակցած եմ «Հայրենիք» ամսագրին, «Յաւառջին», «Աղակ» օրաթերթին եւ շաբաթօրեակին, «Նայիրի»-ին, «Հասկ»-ին, «Միածանլին», «Ակօս»-ին, «Աղարաւ»-ին: Մածկանուններս եղած են Այսաթըրոս, Վաղգէն Տիբանեան, Ե. Սարեան եւ Ե. Մովսիսեան: Ընամարանին Գ. դասարանին մէջ ձեռնարկած ենք դրական բովանդակութեամբ խմորատիպ

ամսաթերթի մը, «Այդ» անունով: Գրած եմ դատաւումքներ եւ արձակ ու շափածոյ բանաստեղծութիւն: -


«Հանուր մարդկութենէն ետքը սիրած եմ մանաւանդ հայ աղգը: Մանաւանդ՝ մեր պատմութիւնը, եւ, չեղար-ւած կերպով, մեր գրականութիւնը, որ մեծ է եւ սքանչելի: Հնարարեան է, ժամանակակից, հեռանկտրային:

«Ծննդավայրս, լեռնահովիտ մեծ գիւղ մը, շարքին մէջ ուրիշ հայ գիւղերու, իր բազմաոտա կանաչութեամբ, իր անհատնում պարտէզներով, իր բլուրներով ու նաեւ բլրալագի ժայռերով, ապառաժի խենթ կուտակուածութեամբ, քուրերով եւ դեռ շատ անա-նուն հմայքներով, լինած են արեւմտ ջերմութիւնը, կլիմայական ներքին բարեխառնութիւն մը, որուն՝ զբաղանդութիւն եւ արուեստ դատող մարդիկ կ'ըսեն խմոր, կ'ըսեն խառնութեք, ոճ եւ ինքնատպութիւն: Ծննդավայրիս տունը մօտ է եղած եկեղեցիի, սահմանակից՝ գերեզմանատան, դպից արեւի, աստղերու, անսահման երկնքի, ըսել է՝ Աստուծոյ:

Եղուարդ Պոյանեան Հրատարակած է «Այլ եւ Վիշտ» (1944), «Հողը» (1948), «Թուղթ գաւակներու» (1961), «Տոմար տարագրի» (1963), «Երկու նամակներ» (1964), «Դէմքեր» (1967):

Այս գործերէն զատ, մեր պարբերական մամուլին մէջ ունի հինգ-վեց հատոր լեցնելու շափ բանաստեղծութիւններ եւ արձակ էջեր, ինչպէս նաեւ բոլորովին անտիպ գրութիւններու ալ-լազան ու երկար շարք մը:

Մեռաւ 1966 Հոկտեմբեր 13-ին, Պէյրութ:



Անողջ հիւանդութեան դէմ երկու ամիս տեւող պայքարէ մը ետք՝ 1966 Հոկտեմբեր 13-ին, Պէյրութի իր բնակարանին մէջ, Նդ. Պօյանեան ընդմիշտ փակեց իր աչքերը:

Տուգարկաւորութիւնը տեղի ունեցաւ 17 Հոկտեմբերին:

Ս. Նշան եկեղեցիին մէջ կատարուած թաղամական կարգէն եւ Ա-աաջնորդ Սրբազանի դամբանականէն ետք, ընկերներ, բարեկամներ, գրասէրներ փոխադրող ինքնաշարժներու ընկերակցութեամբ՝ մարմինը փոխադրուեցաւ Մուսա-Տաղի ժողովուրդին նոր գիւղը. Այնճար: Պօյանեանի գիւղացիները, մեծով պատկով, դաշտի մշակներով եւ աշակերտներով, ոտքի ելած էին, վերջին յարգանքը մատուցանելու համար իրենց գրագէտ ընտրեալին:

Ս. Պօյան եկեղեցիէն մինչեւ գերեզմանատուն՝ Պօյանեանի գրականութեան մէջ մտած կտրիճներուն կտրիճ որդիները ուսամբարձ տարին շաղկապ:

Գերեզմանատուն մէջ դամբանականներ խօսեցան, Գարեգին Նպս. Սարգիսեան, Կ. Սասունի, Զ. Որբունի, Ս. Իշխան, Յ. Գեղարդ, Վ. Տէրկարապետեան, Ն. Պիտանեան եւ Ե. Տէրմանեան:

ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՅԱՊԱՂԱԾ ՆԱՄԱԿ՝ ԵԴՈՒԱՐԴԻՆ ՀՈԳԻՒՆ...

Մահուանը դոյժը, երէկ էր միայն, որ վերաւոր կռունկի մը պէս, հարադատի մը նամակով հասաւ ինծի, այս օտար արեւմտեան վրայ պանդուխտ վարդապետին: Այս աշխարհի տմոյն ու տառասկստ ճամբաներէն դէպի քեզի այնքան սիրելի անհունը կատարած ճամբորդութեանը արիւթով, քեզմով ինքզինք հարուստ ու հընդարձակ դժուար շահակապէս կը դրէր: Ձեռքի ալիքով հեղինակը, այդ պիւղաճի, իր սէրերուն եւ ատելութեանց մէջ մարդկային, ջիւղ ու կորով, մանաւանդ հայ դպրութեան հանդէպ կերքի հասած պաշտամունք ունեցող մարդը... Եւ ես, ուրիշ բան չէի կրնար ընել այդ պահուն, եթէ ոչ առաջին հերթին իսկ մանկէ, թէեւ օտար, որակային նոյն խալիկ խորհրդով նուիրական, զըզբոցիս պարզ ու կեանքային մատուցել: Գոցէ, նախ իմ եւ ապա քու հոգիիդ խաղաղութեան համար երկու աղերսական խօսք ուղղել Աստուծոյ, ի խորոց արտի: Սիրելիդ իմ Եղուարդ, հիմա որ այլևս առաքապակոծ ոսկորներդ, Հայոց պանդուխտ գերեզմանատան, աշնան խոնաւ ու ցուրտ փոսին դիրկը, տակաւ առ տակաւ քու պաշտած հոգիդ յաւիտենական հանգստին կը դառնան, ես, այս ուշ գիշերին, քու հոգիիդ հետ զրոյցի նստելէ զատ ոչ մէկ միջնորդանք ունիմ: Աշխարհ

հի իրերուն սխալ դասաւորումով, անընդունակ շփոթումով եւ այսպէս փութկոտ հրաժեշտով զաղափարին հետ առանց կարողութի եւ կարօտի դիրք ու կը մոռնամ որ չկայս դուռն այլեւս ու հիւն տիրութիւնը չալկած, մտածումէն աւելի արագ ճամբորդող մահուամբող, մեկնած ես անդարձ ու չես պատկանիր այլեւս տղեղ ու տըխեղծ, մանր ու միջակ բաներով լեցուն մեր աշխարհին:

Սիրելի Եղուարդ, ի՞նչ լաւ է հիմա ըլլալ այսպէս՝ ես ու դուն առանձին, քացարձակ միեմակ, աշնան յամբօրէն յառաջացող մութ գիշերուան դիրկը: Ինծի կը թուի թէ, մշուշին մէջէն առաւել լուսաւոր կը յայտնուիս դուն հիմա ինծի եւ աւելի դիւրաւ կը կարդաս քու հոգիիդ յղուած սա մտերիմ թառերը:

Իր պարտականութիւնը դիտակցօրէն կատարած մարդու հոգեբանութեամբ, խիղճս հիմա առնուազն չի տանջեր զիս: Բացատրեմ... կը յիշես, Սեպտեմբերի առաջին կիրակին էր: Արեւոտ ու քաղցրօրէն ծաւալող յետ միջօրէ մը քու երկրորդ հայրենիքդ՝ Այնճարին վերեւ: Այցի եկայ քեզի ու մենք ողբկոչեցինք մօտաւոր անցեալէն անուշ պահեր, շմոռնալով հիւսել աղուոր երազներ պապադայի հաշտոյն:

Գիտէի եւ, որ բարեկամ բժիշկներ, իրենց անգործութիւնը խոստովանելէ ետք քու անբուժելի ցաւիդ դիմաց, տոռապանքի վերջին օրերդ մտամբ քաղցրացընելու մտահոգութեամբ, աւելի յորժար նկատեալ էին քեզ վերադարձնել քու սիրելիներուդ եւ սիրած վայրերուդ մտերմութեան: Քեզ շրջապատող մարդիկ, որոնք քու անձիդ հանդէպ յարգանքէն ու սէրէն անդին բան մը կը տածէին, գիտէի՜ն արդէն, թէ շորենալիք մաս մը, Նենգ մաս մը մոթին մէջ արդէն գրեթէ իր անբեկանելի վճիռը: Այսպէս, քու խաչակիցէդ մինչեւ դժբաղդներդ, դրականութեանդ հիացողներէն մինչեւ քու ցաւովդ վերաւար բարեկամներդ ու աշակերտներդ, բոլորը, անխորհրդ, կը խաղային անկարելի գէրը, դառն իրականութիւնը քեզմէ ծածկելու եւ ըսելու խաղը, ըսելով թէ կը հաստատեն որ դուն շուտով պիտի վերադառնաս ուժերուդ լիութիւնը եւ դառնաս արեւտու կեանքին:

Սեպտեմբերի այդ ցերեկին, քեզի այցի դալէ տառը, առաւօտուն պատարագէջ ու քարոզիչ էի Ձահէի Հայոց մատրան մէջ, եւ արժեքի քեզի համար: Ինչ մեղքս պահեմ, թէ եւ ճիշդ չէ Աստուծոյ գործերուն խառնուիլը, սակայն երբ կասկածեցայ թէ Ան պիտի ուզէր քու կեանքիդ արեւը քիչ մըն ալ երկարել, աւելի ճիշդ գտայ արժեքի քու հոգիիդ համար: Գիտէի թէ դուն շատ էիր տանջուած եւ օրերուդ խաչը չալկած՝ սղջ կեանքդ ըրեր էիր «ճանապարհ խաչի», անվերջ վերելք դէպի Գոգգիթա: Այս բոլորը աստուածային խորհուրդով բարախող սկիզբն մտերմութեան մէջ՝ պատմեցի, անսահման սէր եւ չհասկըցած ճամբարութիւն, Նազովրեցի բարի վարդապետին, եւ խնդրեցի Անկէ, որ տար քեզի վառարակելոց ու տառապելոց խոստացած իր ա'յն խաղաղութիւնը, զոր աշխարհը չկրցաւ տալ ու դեռ ընդերկար պիտի չկարենայ տալ բոլորին:

Յետոյ, երբ դէմ յանդիման էինք, քեզի հետ, կը մտածէի թէ այս պահը շուտով պիտի դառնար քեզ տեսնելու

վերջին պատենութիւնը եւ անվերադարձ երջանկութիւնը: Մինչ կը խօսէիր դուն, եւ կ'ապրէի աշխարհու դէմ պարզուող ահաւոր տաճար դոյութեանդ: Հոգիիդ կալէ անօթը, արդէն ազդուէն, կը տեսնէի աւելի հիւժած: Մահը, ատենէ մը ի վեր, սողոսկած էր ներսդ, կրծքէր էր քեզ ու դուն դարձեր էիր աժդոյն ու թափանցիկ: Քու ճակատագրական հրամանովդ հրամայականը մեր աշխարհուն առջեւ ցաւագիւղէն պարտեցող, այլ աշխարհէ մը մեզի խօսող ստուերի մը հանդուսակ: Եղաւ պահ մը, երբ այլեւս չկրցար հեռուիլ այն դոյցին, որ շուրջ էիններդ կ'ուզէն վարել քեզի հաճելի մթնոլորտ մը ստեղծելու համար, երբ անտեսանելի բազումներ կարծես դալարուեցան վրիդ ու կուրծքի վանդակիդ շուրջ ու դուն սկսար շնչահեղձ ըլլալ: Չարիքի բոլոր սմեղուկ ու ալլանդակ հրէշները, խաւարին մէջ պարարտացող, կը վազէին կարծես վրադ ու դուն գրիթէ բնազդական ժղումով մը նետուեցար դէպի դուռ, խնդրելով քու կողքիդ նստած դըշակից եղբորդէդ, որ քեզ տանէր դուռն եւ իր ինքնաշարժով քիչ մը հեռացնէր տունէն: Գուցէ այդ ձեռով կարելի ըլլար փախուստ տալ ի հնուց գերեզայրուն, ընդերուդ մէջ արդէն իրենց աւերը գործող անճանաչելի, փոքր, միփոխաւոր դապանիկներէն:

Վերադարձիդ կը բացատրէի ինքզինքդ:

— Երբ կը նստիմ ինքնաշարժ եւ ինքնաշարժը կը սուրայ, կամ երբ տեղէ մը ուրիշ տեղ կը փոխադրուիմ, կը ճամբորդեմ, վերջապէս երբ կը դիտեմ պատահանէն դէպի ետ փախչող շրջապատը, կարծէք կը մոռնամ ցաւերս, կը մոռնամ հիւանդութիւնս: Բայց երբ վերադառնիմ կը մտնեմ տուն, եւ ահա այսպէս կը քաշուիմ այս անկիւնը, անծանօթ բան մը կարծէք կը խուժէ վրաս ու ցաւերս զիս կը պաշարեն վերստին: Եթէ կարելի ըլլար երբեք չկենալ, միշտ երթալ, երթալ, անվերջանալի ճամբորդութեան մը վերածելով ողջ կեանքը...

Մինչ դուն կը կուռնէիր բառերուն

հետևել էր դատարանները հուլիսամբ, հետևյալն յստակ էր տեսնել, թե՛ երկար ատարներէ ի վեր փայտաշատ ցանկուն թիւնդ, մեկնելու տենչը արտապատառ նոր շէշտերով հը թօսէր զեղի, եւ զուշ, մօտաւոր օրերուդ հաշտոյն, յայտնութենական յայտարարութիւններ կ'ըսէին:

Այո, այո, իրաւունք ունէին: Կարծես ալ ներքեւ էր օդը, որ հը շնչէր: Կը դաւաճանէր առջեւուդ տակ «Հող» իսկ, որ զեղմէ արեւմտեան դուրգունքը ստանալէ ետք, չէր ծոցուարած զու հարաւս զեղեցիկութիւններովդ:

Այո, այո իրաւունք ունէին: Ի վերջոյ, չէր դու հանդոյցով անդունդին վերայ կախուած մարգուէն հեանքին լարը մինչեւ ե՛րբ կ'ըէր թախիծին այս հսկայ բռնը: Այո, մանաւանդ վերջերս պզտորի սկսած էր երկնքէն եւ երկրէն ճաւաղայթող լոյսերուն զէմ բռնած սրտիդ հայելին, կարծես միտէ հա լաւագոյն բանը, որ կը մնար զեղի ընկիւն տակաւին՝ խզիւն էր բարդ ու բազմաոյղ դրուածքներ մը զեղ տակաւին մեր հեանքի մանրամասնութիւնք կապող հաղորդակցութեանը թիւերը ու միանգամընդմիջ տարժակութիւլ զէպի տնհուն: Գուցէ հոն՝ մեր գիտակցութեանն զուրս ինկող ժամանակէ մը եւ սեւողութեան մը մէջ՝ զէմ յանդիման կարենայիք կենալ Անոր, որ այս աշխարհի մէջ յարաւցած հարցերուդ վերջին ու վերջնական պատասխանները տար զեղի:

Կը ներքեւ, Եղուարդ, եթէ դէպի առաւօտ յառաջացող այս ժամերուն, ներաշխարհիս բուրդներուն մէջ կատարւած այս թափառումներու ընթացքին, ինքզինքս նեղեցի մտքի անկներու դիրքը եւ հեթանոսական ճշմարտութիւններ վերադրեցի զեղի: Մանաւանդ ներքէ, երբ դիրս կարգացած ատենդ՝ ծառ ու անիւրաւ բռնեք զտնես այս տողերուն մէջ: Բայց դուն որ ամէնէն հաւատարիմը մնացիք չյայտարարուող, չխտառովանուող, այլ այնքան իրու ու սրտառու զգայնութիւններուն, զիտեմ որ պիտի հասնիս զիս, եթէ այս չամենուդ հրա-

բուրդ կը պայթի կուրծքիս տակ հա իր ուժը հանդէ մահուանդ զոյժէն ամբարւած տիրութեանս հոգիայիս շտեմարանէն:

Հասեր էր այլեւս պահը զեղմէ հրաշքաւ առնելու: Վերջին անգամ մըն ալ մեղմեցի ոսկրացած ձեռքդ ու խոստացայ զբէլ զեղի Անդրիայէն: Իսկ հ'ուզէի որ, ա'վ հեղեանք, երբ կատարեալապէս վերադառնէի առողջութիւնդ, յարմար առթիւ մը յժողացի պատասխանել ինծի: Գրեթէ բռնանալով մեր ջիւղերուն վրայ, քանի մը բարեկամեցրով դուրս եկանք մեր յարկէն ու փողոցն ի վար ուղղուեցանք դէպի ակ՝ Ծառաստաններուն սրճարանները:

Արեւակը իր լուրթ զենթէն խոնորհած էր Պէրսոյի ամպարագլի մատափառաններուն վրայ, լեղակապոյն հորիզոնին վրայ կախիք էր վերջապիւր չգեղ համայնապատկերին արարչագործն ու հսկայատիպ պատառը: Մայրամուտին որդան ու ծիրանի առաւելանքը կ'երկարէին Այնճարին վերեւ մառաչուն հսկող լեռներուն լեռի կողերուն ու Կերտնաբնայ, տանական մթնոքած մը հը ծառայէր, Հայոս անխորտակելի կամքով կերտուած անխտանքի հայաբնակ ու հայաշունչ ծառ գիւղիդ պարզ տաններուն վերեւ: Փափեցող բոյսերուն հետ, սառեւրեքը կը թանձրանային փառացեալու երկայնքին:

Փեղմէ ներշնչուած մտածումներով ծանրաբեռն, կը քալէինք անխոս ու խորտակուած սրտերով: Մեղմէ իւրաքանչիւրը, տանմին, կարծես կը քալէր իր մտածումին կծիկը:

Սիրելի բանաստեղծ հոգի, լոյսերուն քնակիչ Եղուարդ, զու պատկերդ աչքերուն, կը զրահէ շուրջս: Ահա, երբեմն խոպան եւ անհերքելի անապատի այս կտորը, հայրենակիցներդ, իրենց ստեղծագործ հաւատքին հրաշքով չէն ու յարգաւած, հայկեան օճախի մը վերածնունդին: Կը տեսնէի զարմանքով, զտներուն տեղն եւ բաժնէն դուրս յորդող, որ թատենիներու, պտղատու ծառերու, զոյժողոյն ծաղիկներու հրդեհը, գիւղին

վերջին տուններէն ծայր տունը կանաչ ծաղիկ աղեկատաններուն եւ ծանրաբեռն խնձորենիներուն, եր լսէի ուրախ քրքրիւր, տարեց ու պարմանի շրթներէ կարկաչող, հայաբարբառ քաղցրահունչ եւ քնամանի, եւ հակառակ անորինական հրճուանքին, որ կ'ազդէր վրս, սեւ թախիժը կաշտած մնացեր էր հոգիիս յատակին:

Այս քուրթ գեղեցկութեանց դիմաց, ծաղկող ու բարիքներով ուռնացող դիւղի գիւղը, ժողովուրդիդ արիւնքաւ արկանէն ծնած ու անոր պատուով մը կտորայտ ու կուտց մը լոյսի փշուր հողի հաց քնձուկու, քու ահաւոր տեղիդ մէջ մարտիրոսացած բանաստեղծիդ դաժան ճակատագիրը ահաւոր վատաթեմք մը, թունաւոր նեղի պէս կը իրաւէր կողիս:

Մերիկի եղբայրդ, բողոքաւորչուր եւ բազմաթիւ հոգի, ահա գիւղիդ Սօսեաց անտառին այն սրճարանները, ուր իրենց ահաւոր դժբախտութեան մէջ իսկ անկապուտ վտեմութեամբ մը հարուստ հեռոտներդ, Միսակն ու Միսաքը, կամ գողթական գիւղին գողթական վարձապետը, ալ չէ՛լ թուականին՝ երբ հիմունքաւ Այնճարը, երբ զեղին մայրիւն, սպիտակ ձիւնը եւ եւ մահազայն սովը աւերներ կը գործէին հիւանդ ու աղքատ գիւղիդ հիւղերուն մէջ, խժեցին թուրի դառն օդի, բայց չկրցան գինովնայ իրենց ուզած ձեռով ու չգտան քնունը լազոյն բառերդ հայհոյանքի: Կլեցին քարիւղի պէս գէ՛լ օդին ու խոշոր, պայթող, սեւ խուրի պէս հայհոյանքներ հաւաքեցին իրենց կոկորդին ու հասցէ չբառան թուրքէն զատ ուրիշ հասցէի արժանիութեւն գտնուք: Ահա հիմա կը քանկեր այն ծառերուն ապէն, ուր քու բնակիչ հերոսներդ երկարօրէն վիճեցան երկբարդական քաներու մասին ու չկրցան երբեք իրենց մեծ ցաւը պոռալ աշխարհին, որ խույ էր եւ մեռած՝ խիզճով:

Հիմա, այդ բոլորը, գէ՛լ երազի մը մէջ պատահած բանդադուլանքի մը պէս կը թուին, ժառերէն փրթելէ ետք այս դժբախտեայ դաշտերուն մէջ իսկ ժայռի

պէս կարծր ու խրոխտ մնացած գիւղացիներու: Ինչո՞ւ, ինչո՞ւ քու գիւղիդ այդ լիափառ ամբան պէս, որ կը պատմատուէր իր սակի աշունը շուտով տուն կրէ՛լ, դո՛ւն ալ քու կհանքիդ ամառան զինիթէն շարունակէր, երկունքի քու անսահման կիրքովդ, աստուածատուր շնորհներուդ, սակի աշուն բարիքները կրէ՛լ քու, եւ մեր բոլորին, Հայ Գրականութեան Տունը, Քու արգար վատաակիւ կարծիք հմաններուն ցինովութիւնը առանց ամբողջականօրէն ապրելու, երկարօրէն ոպատուած յաղթանակի խնջոյքը հաղիւ սկսած, միթէ՛լ այսպէս կը մեկնին կանուխ, ու մեռնանային: Ինչպէս Սեպտեմբերի քաղցրութիւններով օծուն այդ կրակի վախճանին, նոյնպէս այսօր, քու ոգեպէն ներկայութեամբ չեցուած սենեակս առանձնութեամբ մէջ նոյն գինեւանքն էն, որ կը թախիժ մտքիս պատեքուն սնտոյք կերպով:

Է՛հ, չէ՞ որ խոտաղբեր էի զբնէ քեզի այս ափերէն: Ուրեմն ահա, բաց աւ կարդա՛, վշտի՛լ թանդ ու ամբողջութեամբ մահով մը գինովցնող գինիի մրուրով գրուած չկարդացուելիք այս նամակս:

Դիմեմ, որ քեզի յղուած այս թուրքին մէջ, գրուած՝ վարդապետի հին եւ մութ սնով, ուրիշներ շատ քիչ բան պիտի գտնեն պատմութեւն քու մահիդ: Սակայն, ոչինչ, քու գրչակից, առաջ ու կրտսեր, եղբայրներդ, որոնք աւելի փոխուէն բաժնեցին յարուստերուդ արեւ ու անձրեւ երկինքը ու մէջը ճանչցան իրենց պաշտած խնայներուն ու անձնազոտոր ասելու թիւներուն: Խորագրի մեկնիլը, վատահոբար խոտեցած արդէն կամ դեռ անպայայն աւելի խնամուած էջերով վերլուծեն քեզ ու գրականութիւնդ: Բայց եւ, առանց յաւանդուելու որ ունենալու անոնցմէ ոեւէ մէկը փորձած ըլլալու, կ'աճապարեմ քանի մը բառ եւս յանձնել հոգիիդ: Կը տալեապիմ, ու կ'անապարեմ արդէն թաւական երկարած այս թուրքս աւարտել, քանի, կը վախճամ, որ դուն շուտով կրնաս

մեկնել սենեակէս, երբ քիչ ևտք, Արեւ-
ւազակի առէջները իննան գրասեղանիս՝
քեզի պատկանող այս էջերուն վրայ:

Սիրելի Հոգի, Պոէտ Պօյաճեան, մը-
տածել քու գրականութեանդ մասին,
պիտի նշանակէր անկասկած մտածել
քու մասիդ, եւ ասիկա նոյնքան եւ աւելի
նշմարտութեան՝ փոխադարձաբար: Ո-
րովհետեւ, դուն բանաստեղծութիւն չէիր
գրեր, այլ, երկինքէն նուազող դաւա-
րափողերու կշռոյթով, քերթողութեան
սկիզբն գիտի եւ նշխարի պէս զքեզ կը
րաշխէիր դաժան երկինքներու տակ՝ գո-
յատեւման ահաւոր դուպարը մզող հայ
մարդոց սովալլուկ հոգիներուն: Մտքին
եւ հոգիին շնորհներովը, հասրաակ մահ-
կանացուներու պէս դիր չէիր գրեր
դուն, այլ իբրեւ անձանթ երկինքներու
ալիհեր դպիր մը, որ կուպրի պէս սեւ,
կապարի պէս ծանր եւ կրակի պէս բո-
ցալիզու բառերով, մազադաթի հին
պատուիրկներու վրայ պատգամներ կը
գրէր աշխարհին ու կը ձգէր որսիդ տու-
փին մէջ ու դուն, խոնարհ-շարքային
նաժականաշխի մը պէս, կը ցրուէիր դա-
նոնք: Վախի եւ ըմբոստութեան գիրեր
գրած տանդ, գրիչդ փոխ առած նարե-
կայ Սուրբէն, կը դործածէիր արիւն -
արցունք այն մեղանէն, որ գաղտնի ճամ-
բաներով, մեր մութ ու լոյս գարերէն,
թառած էր երակներուդ մէջ եւ որ-
պէսպէս ալ գիրերդ մենք կարենայինք
կարգաւ, դանոնք կը բռնէիր քու ներաշ-
խարհիդ հորիզոններուն վրայ ծնող ու
մեռնող արեւներուն դէմ:

Սիրելի եւ խոնարհ իշխան հայ դուպ-
արութեան, դուն երբեք չէիր սիրաբաներ
բառերուն հետ, այլ անոնցմէ իւրաքան-
չիւրին միջուկին քեզմէ մասնիկ մը կո-
րիզած, կը ցանէիր ու կը բազմապատ-

կէիր մեր մէջ: Կրք կը կենսադրէր,
կենսադրելի կը կերպարանափոխէիր:
Խոյս կուտայիր անգագրում, սեւէն,
գաճաճէն, մանրէն, միջակէն ու տար-
որպէսդի ալ գիրերդ մենք կարենայինք
եւլը, վոնմն ու ճառադայլոյդ ա'յնպիսի
հրայրքով մը, որ միայն քու հարստու-
թիւնդ էր: Հայ գրականութեան կանո-
նաւոր ու կոկիկ բաներ ըսելու այդ
մէր կիրականօրեայ հագուստը չէր քեզի
համար, որ ԲՂ. առաւտ պէտք էր ծալել
եւ մէկդի զննել զգուշութեամբ, այլ,
չհանշնալու, չբորբոսելու, կենքդ զըս-
պանակող եւ իմաստաւորող, անխոջ ու
անպարտելի, պայքարի մէլը՝ բոլոր
ծուռ ու մեղադրած բաներուն, խաւարի
եւ շարիքի որդի՝ ռոսիներուդ դէմ: Եր-
կարած շրթներդ հայ գրականութեան
խորագոյն նշմարտութիւններուն եւ բա-
ցած հոգիդ առաջատաները վաղուան
մեր հզօր մշակոյթին ծաւի հորիզոննե-
րուն, դուն, անոր բազում անգամներ
նշակտոր, այլ խորարմատ ծառին ե-
րակներուն, միաժամանակ կը հոսե-
ցընէիր հաստատուն գարնան մը կենսա-
ւելը:

Այո, այս բոլորը եղար դուն, ու
տակաւին ճիշդ այս ամէնքէն անդին:
Բոլոր երկինքներու եւ բոլոր աստղերու
տակ նոյն անտունն մեծ քաջակային գա-
լուստին սպասող (Աստուծո՞յ...) հի-
ւանդ մարդկութեան բարձրադպրակ ի-
մաստութիւնը եղար դուն, ո'վ մեր հը-
րաւք ցեղին, պզտիկ գիւղին մեծ հպար-
տանք եւ մեծ բանաստեղծ, նշուարդ
Պօյաճեան:

Օֆաթըրտ

ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԵՂՈՒԱՐԴ ՊՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

ԵՒ

ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ԴՈՒՐՍ



1964-ին, խուճր մը ուսուցիչներու հետ, Եղուարդ Պոյանեան Հայաստան հրապարակեցաւ եւ հոն մնաց շատաւնէ աւելի օրեր:

Քննքներէ կամ ծայրամասերուն յայտարարութիւններ չբրու հոն եւ ոչ ալ վերադարձին մասնակցողներու վերանկէ աշխարհաշին:

Անքերուն մէջ շատ բան լեցուած էր, Հայրենիքն էր՝ հողը, լեռը, լիճը, գետերը, հին վանքերուն եւ նոր կառուցներուն լայնատարած պատկերները, արեան կարօն էր, տեսաւ Հայրենիքը, յազեցուց անմին տնտեսական պայակեր, բայց ժողովուրդին հաշտին կոտորուող գրագէտին վերջը... վերջը:

Հայաստան երթալէ առաջ՝ դրած ու ապած էր:

Եթարկերն ու յարկարարութիւնները կրճա՞ն շատ ըլլալ հիմա: Մտքերուն պարտաւորիչ միայնակութիւնն է սակայն բուն ազգայնը...

Փողոցներն ու պողոտաները կրճա՞ն լայն ըլլալ. հաճոյք է ամէն Հայու եւ ստակի՞ ով չի հրմուխը: Բայց լայն պողոտաներու եւ լայնագոյն հրապարակներու վրայէն հագեցած ճեղքիկ պայմաններով, ճեղքիկ ազատութիւններով ու ճեղքիկ սրտով ամցնիլն է գծնականը:

Ունկարական ծո՞ղ լոյսերու մէջ՝ մօտ տրամագրութեամբ շրջիլն է գեշքը:

Վերջը...

Բայց լիտինք այս մասին, լորտին է գետնը, ուստիք էր խոսքին, գրաւորին: Արդարեւ, Պոյանեան, Հայաստանէն վերադարձին՝ բացաւ ծոցատետրը եւ ընդարձակեց էր խոսքին եւ նշմարները հետզհետէ ծաւալով հարկերը անցնող էջերու վրայ: Մտադրած էր վեպի մը մէջ ազատագրել աշխարհը:

Վեպը ծրագրէր լէր, Եթարկ գրութիւնն խորագրած էր զայն ու առաջին մասը արդէն կարգադրած էր մտքիմտերուն: Կը սկսի Պաղատան, Տիրիտի ափին կանգնած ու խո՞ր խորհրդածութիւններու մասնուած հասուն երիտասարդ մըն է հերոսը, որ, օր մը, պիտի անցնի Հայաստան... Պոյանեան այդ երիտասարդին համար պատրաստած էր Հայաստանէն առած էր ազատութիւններուն տնտեսը, որ մնաց առաջին գրիչով գրուած յուշագրական վկայութիւն մը:

Գնաց Հայաստան, տեսաւ Հայաստանը, գրչակիցներ, ցաւակիցներ տեսաւ եւ ճիշդ երկու տարի հետք մեկնեցաւ աշխարհէն: Հայրենիքը ըզբաց էր այս տաղանդաւոր որդւոյն վազած կորուստը: Գրչի էր եղբայրներուն սիրաւ անխռով լծաց հորիւս, բայց ոչ ոք առջ մը նուիրեց էր յիշատակին: Պատճառը անծանօթ չէ մեզի: Ինք գիտէր պատճառը: Բայց լայն պողոտաներու եւ լայնագոյն հրապարակներու վրայէն հագեցած ճեղքիկ պայմաններով, ճեղքիկ ազատութիւններով ու ճեղքիկ սրտով ամցնիլն է յմեղակը:



Ինքի ղեւս, սմէն ու, ամբողջ գաղութաւոր-
յութիւնը՝ հետաքրքրութեամբ եւ ցնորհեանքով
սկսեալ հեռահալ այլ՝ «Եզգայնութեան» հեռանալով
պաշտօնով: Եւստիւս ու ամենաբնիկ մտովհմեկը
կազմուեցան, որոնք, իրար գերազանցող ետեւ-
զով մը, փաթեցան գործով, արմատաւոր շտաբով
մեկ վտանգեցան: Եւստիւս վտանգեցան: Եւստիւս
եւստիւս վտանգեցան:

Իր յարգամբն արտայայտելու անպարսպել
ապրողներուն վէշ տառչիմներէն իշխաւ Պաղտատի
գաղաթը, որ յորիշիմական հանդիսութեան մաս-
նակցելու համար իբրեւ զստախօս Պէյրութէն
հրաւրեց Շոշաւաթ Պոյանեանը:



Օրում երկրորդ դասախոսն էր Լ. Գաբունին:

Տարի՛ մը առաջ էր:

Տարի՛ մը առաջ ամեն ինչը արձա-
գանդ եղանք էր հրեայրէն: Քերնէ բերան լեցուն
սրանի մը մէջ՝ երկու կրտսերները հպարտա-
բանք մերկայացուցին իրենց մեծ եղբոր անդը,
գրականութիւնը, արուեստը: Այլ տարին չբոլոր-
ւում էր, այդ շնորհիւ բուսական զեռ վեց ամիս
շունչով՝ մէկը յամկարծաման եղաւ, ամիս մը
չհասնում էր բամբակեղաւ մեղմէ: Վերջը կը
կատարաւ տակաւին, երբ երբորդը շինեցաւ:

Տարի՛ մը առաջ՝ ձեռք ձեռքի տաւ Քանին
զորութիւնը ու զեղեցկութեամբ կը լեցնէին
տարագիր հայերէն ծաբանած արտերը, տարի
մը շնորհ, տարի՛ մը յետո՛յ...

Կը զգանք արդեօք հարուածին հապառախի
ու ժգնութիւնը:



ՍԻՐԵԼԻ ԵԴՈՒԱՐՊ

Ամէն օր քեզի հետ եմք, սիրելի՛ Եդուարդ: Ինչպէս՝ կենդանի... բացակայութիւններուդ:

Անվերադարձ մեկնողներու արժանաւորներուն համար սահմանուած այս խօսքը, եղբարախո քերթողին հանդէպ ցայց տրուող սովորական հաւատարմութիւն մը չէ եւ ունի իր անգիր պատմութիւնը, շատ սուղ գնուած փորձառութեանց բազմաթիւ երեսներով:

Անկեղծութեան կառչած սերունդին համար, որ մերը եղաւ՝ համակրանքի ամէն արտայայտութիւն իր անդրանիկ ու անխաղախ իմաստին անվերաբեկ լի շեշտը ունի տեսարար եւ արժանապատուութեան ու պատասխանատուութեան միացեալ բնախնդրումը կայ միշտ անոր ըսածին ու յայտարարածին մէջ:

Սիրելի՛ Եդուարդ,

Ապրումիդ հիւլէով սուրացող ինքնաշարժին եթէ տուգանքներ գրուեցան երբեմն, շրջապատին տանող համբաններուն կարմիր լռութիւնը անտեսած ըլլալուն համար, այսօր սակայն, երբեւեկի վրայ հսկող մշակայթի նայն մարդիկը, մեծով պատկեով՝ ճիշդ ու մըկարագրին վտարկոտ շարժավարը կը տեսնեն մէրդ: Պատի՛ւ իրենց:

Բացակայ գոնումակութիւններդ փոխարինող յիշեալ երեսոյթին ամէնէն խանդավառող ապացոյցը «Բազին»ի այս բիւն է, ուր հաւաքուած են բոլորը, յիշատակիդ ու արժէքիդ առջեւ խոնարհելու համար:

Իւրաքանչիւր բառ, հոգիիդ խառնարանէն ժայթքած լաւային հետքերուն վրայ պիտի գրուի «Բազին»էն մերս եւ անոր էջերէն, յիշատակիդ խումկը պիտի ծխենք անվերջ:

Ո՛ւր է արդեօք հետք եղած ու յաւիտեան ըլլալու գազտմի՛քը :

Հարցում մը, որուն պատասխանը կրնան տալ միայն՝ առանձնութիւններու մէջ... հովիտներ արցունքով լեցուցած եւ իրենց նկարագրին հաւատարիմ մնալու համար իրենք իրենց դէմ գործած ու տառապած մարդիկ :

Սակայն, անկախ այդ բոլորէն, ամէնփոքի է ուրախութիւնս՝ այսօր, ընկերներուդ ու բարեկամներուդ փայլատակող գրութիւններուն շինաց : Ուշադրութիւնդ կ'ուզէի պահ մը կեդրոնացնել Ալպարքոսին վրայ, որ իր արտաքին գեղեցկութենէն աւելի, անակնկալի բերող յատկութիւն մը ունի, որուն համար ամէնէն առաջ զարմանք արտայայտողը դո՛ւմ պիտի ըլլաս անկասկած : *Հասկցում'՞ք ըլլալու տեսակերեկալը :*

Գրագէտին նախասիրութիւններն ու ճաշակը յատկանշող որեւէ մտածում, լուրքեան դատապարտուած հեղինակի՛ն իսկ կողմէ՛ երբ կը գտնէ իր ճշգրիտ բացատրութիւնը, երջանկութեան հաւատար գոհունակութիւն մը կու տայ եմբակային :

Կարդա՛ Ալպարքոսը, սիրելի նգուարդ, տեսնելու համար թէ ներաշխարհէդ արձակուած այդ քրոջունը ինչո՞ւ ծածուկ ամուն մըն է քեզի : Եթէ նայնիսկ քննադատական մղումով մը կամ գեղեցկագիտական մտահոգութեամբ մը կատարուած է ընտրութիւնը՝ շքեղ է անդրադարձը անոր Պօզսին մէջ : Պատճառաբանեալ մտածումի մը հետեւանքը կը նկատուի կատարած ընտրութիւնդ որ յաջող ըլլալէ առաջ՝ յղացում մըն է արուեստի, ինքնանկարի իր հարազատութեամբ :

Աւելի մեծ ի՞նչ վայելիք, երբ խորունկ ու մաքր ներանձններուդ մէջ իսկ տեղումներ կը կատարուին, գազտմի մտածումներուդ լուսարձակովը քեզ անակնկալի բերելու համար :

Այս է միտքարութիւններուն մեծագոյնը հեղինակի մը համար :

ԱՇՈՏ ՆՈՒՐԵԱՆ

Գէլլուք



Մահուան ֆառատուֆին՝ խումբ մը բարեկամներ Երրիմին շուրջ

ԵՂՈՒԱՐԴ ՊՅՈՒՆԱՆԻ ՀԱՄԱՐ

Կիրակի, 27 Նոյեմբերին, Այննարի Ս. Պօղոս եկեղեցիին մէջ հոգեհանգրստեան պաշտօն կատարուեցաւ բանաստեղծ եւ գրագէտ Եղուարդ Պօյանեանի մահուան ֆառատուֆին առիթով:

Պէշքութէն Այննար ժամանած էին Պօյանեանի գրչակից եւ գաղափարակից շարք մը ընկերներն ու բարեկամները:

Եկեղեցական արաբոգութեան խումբ, ողբացեալ գրագէտին պարագաները, բարեկամները, «Թատաշ» գոլիֆի շրջաճառարներն ու ատարտեան զանազան աշակերտութիւնը, անկի վան 80 հոգի, այցելեցին բանաստեղծին հոգաբարձրը:

Տէր Հօր արտասանած «Հոգեւոր» եւ խումբը ամբողջութեամբ մերկայ եղաւ Պօյանեանի աշակերտ եւ գրչակից Պօղոս Սնապեանի տունը, ուր տրուեցաւ հոգեւոր մը:

Հոգեւորաշի բնագրին, գոլիֆի աշակերտները, ֆառի մը քերթուած արտասանեցին Պօյանեանին:

Այնուհետեւ, յաջորդաբար խումբ առին Տաթ. Բարգէն Փափագեան, Հայկ Պալեան, Սարգիս Զէյթինեան եւ Պօղոս Սնապեան:

(«Ազդակ», 2 Դեկտեմբեր 1966)

**ԵՂ. ՊՅԱՅԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ
Գ Ր Ք Ե Ր Ը**

«ՍԷՐ ԵՒ ՎԻՇՏ» (Քերթուած) *սպառած*
«ՀՈՂԸ» (Պատմութեան) *սպառած*
«ԹՈՒՂԹ ԶԱՒԱԿՆԵՐՈՒՍ» (Արձակ) *սպառած*
«ՏՈՄԱՐ ՏԱՐԱԳՐԻ» (Պատմութեան)
«ԵԼՄՔԵՐ» (Վերլուծութեան)

ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ ԳՈՐԾԵՐ

- 1.- ԽՈՀ ԵՒ ԿՐԱԿ (Արձակ)
- 2.- ԾՆՆԳԱՎԱՅՐ ԿՈՐՈՒՍԵԱԼ (Քերթումներ)
- 3.- ԳԻՐՔ ՎԻՇՏԻ (Քերթում)
- 4.- ԳԻՐՔ ԴԱՌՆՈՒԹԵԱՆ (Քերթում)
- 5.- ԱՆՈՂՈՐՄ ԲԱՆԱՍՏԵՂՇՈՒԹԻՒՆ (Արձակ)
- 6.- ԴՈՒՆ (Քերթում)

ՀՈՅՍ ՏԵՍԱԻ

**ԲԻԻԶԱՆԴԻ ԿՈՒՆԵԱՆ
, ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ,
(ՎԷՊ)**

Ստանալու համար դիմել
«Բազմա»-ի եւ «Ազդակ»-ի ցրուիչներուն

ԳԻՆ՝ Ե Հ. ՈՍԿԻ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՂԱՐ

ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէն

G. SASSOON

Rue Sélim Boustani, Beyrouth-Liban